ՄԱՍ II.

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է 820.8 մլրդ դրամի չափով: Ինչպես արդեն նշվել է սկսած 2008 թվականից պետական բյուջեի են կատարվելու մինչ այդ սոցիալական ապահովագրության բյուջեից կատարվող ծախսերը և ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում դրանց ծավալը կազմում է 115.3 մլրդ դրամ: Ծախսերի ամբողջ ծավալի 80.2 տոկոսը կամ 658.0 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 19.8 տոկոսը կամ 162.7 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին: Արդեն հիշատակվել է, որ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագիծը ծրագրավորվել է 2008 թվականից հանրապետությունում ներդրվելիք ՊՖԿ (GFS)- 2001 դասակարգման ստանդարտներին համապատասխան, որի արդյունքում մինչ այդ ծախսերի կազմում արտացոլվող զուտ վարկավորման հոդվածը պետք է արտացոլվի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների կազմում, իսկ պետական բյուջեի եկամուտների բաղկացուցիչ մաս կազմող կապիտալի գործառնություններից եկամուտները՝ պետք է արտացոլվեն ծախսերի կազմում բացասական նշանով:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսերի ցուցանիշները ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի հաստատված համապատասխան ցուցանիշների հետ համեմատելիս համադրելիության նպատակով ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի ցուցանիշները բերված են ՊՖԿ-2001 ստամդարտներին: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսային մասը ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի հաստատված մակարդակի համեմատ ավելացել է 188.3 մլրդ դրամով: Նշված հավելաճի գումարը հիմնականում ուղղվել է սոցիալական և պետական կառավարման ոլորտներում իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովմանը, պաշտպանության և հասարակական կարգի պահպանության համակարգերի ամրապնդմանը, տնտեսության առանձին ոլորտներում ենթակառուցվածքների պահպանման և զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության տրամադրմանը:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալները, կազմն ու կառուցվածքը ձևավորվել են ելնելով 2008 թվականի մակրոտնտեսական կանխատեսումներից, գների և սակագների կանխատեսվող ցուցանիշներից, հանրապետությունում տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարող նոր բյուջետային պարտքերի չառաջացման անհրաժեշտությունից ու առանձին ծախսատեսակների գծով մշակված բյուջետային նորմատիվներից: Հաշ-

վի են առնվել նաև բյուջետային հիմնարկների ցանցի կազմի և կառուցվածքի կատարելագործման և բնակչության կենսապահովման խնդիրների լուծման միջոցառումները:

Սոցիալական բնագավառի ծախսերի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 46.0 %, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ապահովման ոլորտներինը՝ 20.4%, տնտեսության ճյուղերինը՝ 11.7 %, համայնքների բյուջեներին ՀՀ պետական բյուջեից պաշտոնական տրանսֆերտների տրամադրմանը՝ 2.6 %, պետական պարտքի սպասարկմանը՝ 1.3 %, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ձևավորմանը՝ 2.5 %,:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի ծախսերի ծրագրավորման հիմքում դրվող հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի նախագծում պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով:

1. 2007 թվականի ընթացքում շարունակվում է իրականացվել պետական կառավարման համակարգի բարեփոխումների և վերակազմակերպման գործընթացը և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իրականացվել է պետական կառավարման առանձին մարմինների վերակազմակերպման գործընթացը:

«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և հարակից այլ օրենքների ընդունմամբ պարենային ապրանքների որակի վերահսկողությունը, որն իրականացվում էր ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի «Որակի տեսչություն» առանձնացված ստորաբաժանման կողմից, վերապահվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, որի հետևանքով ընդլայնվել է վերջինիս գործառույթները և վերահսկողություն իրականացնելու լիազորությունների շրջանակները և այդ համապատասխան գործառույթների իրականացման նպատակով նախարարության աշխատակազմի «Անասնաբուժական պետական տեսչություն»-ը վերակազմավորվել է «Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչություն» առանձնացված ստորաբաժանման (ՀՀ կառավարության 28.12.2006 թ. N 1898-Ն որոշում):

Այդ կապակցությամբ համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի «Որակի տեսչություն» առանձնացված ստորաբաժանման կառուցվածքում՝ լուծարվել են տեսչության մարզային բաժինները և ստեղծվել տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների վերահսկողության և չափագիտական նորմերի և կանոնների վերահսկողության բաժիններ (ՀՀ կառավարության 10.05.2007թ. N 599-Ն որոշում): Բացի այդ ՀՀ-ում ակնագործության և ոսկեգործության ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման, ինչպես նաև Քիմբերլի գործընթացին ՀՀ-ի հետանդամակցային պարտավորությունների կատարումն ու այդ գործընթացի հավաստագրման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումն

ապահովելու նպատակով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կազմում ստեղծվել է «Ակնագործության և ոսկեգործության զարգացման գործակալություն»՝ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով (ՀՀ կառավարության 03.05.2007թ. N 582-Ն որոշում):

ՀՀ Նախագահի 2007 թվականի հունիսի 8-ի թիվ ՆՀ—145-Ն հրամանագրով փոփոխություններ կատարվեցին նաև ՀՀ կառավարության կառուցվածքում՝ ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը վերանվանվեց ՀՀ մշակույթի նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեն վերակազմավորման ձևով վերակազմակերպվեց ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, որին վերապահվեց նաև ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության առանձին գործառույթների իրականացումը: Այդ կապակցությամբ «ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի աշխատակազմ»-ի փոխարեն ստեղծվեց «ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը(ՀՀ կառավարության 13.07.2007թ. N 825-Ն որոշում):

Պետական կառավարման համակարգի բարեփոխումներում կարևորվում է նաև դատական համակարգի բարեփոխումների իրականացումը: ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է ՀՀ Դատական օրենսգիրքը, որի համաձայն իրականացվելու են դատական համակարգի կառուցվածքային փոփոխություններ՝ ՀՀ առաջին ատյանի դատարանները վերանվանվում են ընդհանուր իրավասության դատարանների, Արարատի մարզի և Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարանները միավորվելու են Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի , դադարելու է Տնտեսական դատարանի գործունեությունը, ստեղծվելու են թվով 7 նոր մասնագիտացված դատարաններ՝ Վարչական դատարան, քաղաքացիական և քրեական 3-ական դատարաններ /Երևանի, հյուսիսային և հարավային/ , ինչպես նաև ՀՀ դատական դեպարտամենտի կազմում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով ստեղծվելու է ՀՀ դատական կարգադրիչների ծառայությունը, որը կոչված է ապահովելու դատարանում դատավորի, դատավարության մասնակիցների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակահիրավական ոտնձգություններից, դատարանի տարածքում հասարակական կարգի պահպանումն ու անվտանգության ապահովումը, տեղում անմիջական կատարման ենթակա դատարանի կարգադրությունների կատարումը, դատարանի գույքի, շենքի և հարակից տարածքների պահպանությունը :

Ընդունվել է նաև «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքը, որի համաձայն իրականացվելու են դատախազության համակարգի կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում՝ ելնելով գործառույթների բնույթից տեղի է ունենալու ՀՀ դատախազության օպերատիվ քննչական հաստիքների համապատասխան բաշխում այլ քննչական մարմինների՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության քննչական վարչության, ՀՀ պաշտպանության

նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության միջև, միաժամանակ դատախազությանը վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով ստեղծվել է «Դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը:

Բացի այդ օրենքի պահանջներին համապատասխան ներդրվում է դատախազների պաշտոնային դրույքաչափերի և այդ պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հավելավճարների հաշվարկման, ինչպես նաև դատախազության աշխատակազմում պետական ծառայողների աշխատանքի վարձատրության նոր համակարգ (վարձատրությունը իրականացվելու է «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով) :

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ նոր օրենքի պահանջներին համապատասխան ավելացել է Վերահսկիչ պալատի գործառույթները՝ կապված նրան վերապահված լիազորությունների շրջանակի, վերահսկողական դաշտի ընդլայնման և հստակեցման հետ, որի համաձայն կիրականացվեն կառուցվածքային փոփոխություններ, ինչպես նաև կիրականացվի Վերահսկիչ պալատի աշխատակազմում քաղաքացիական ծառայության համակարգի ներդրում:

ՀՀ դատական օրենսգրքի, «Դատախազության մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է ՀՀ դատարանների, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով և որի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նշված մարմինների համար նախատեսված բյուջեի երկու տոկոսին:

Երևան քաղաքի սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքների ղեկավարներին պատվիրակված լիազորություններն իրականացնող աշխատակիցների աշխատավարձերը հավասարեցվել են ՀՀ մարզերում գործող սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների աշխատողների աշխատավարձերին:

2.Ելնելով օրենքով և այլ իրավական ակտերով նախարարությունների առանձնացված ստորաբաժանումներին վերապահված լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը նախարարության աշխատակազմի կողմից ապահովելու դրույթից, ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նրանց պահպանման ծախսերը ներառված են համապատասխան նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերում :

3. ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը ծրագրավորվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով հաստատված բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումներին համապատասխան, որի պահանջների կատարումն ապահովելու նպատակով տարանջատվել են ՀՀ նախարարու-

թյունների աշխատակազմերի և այդ մարմինների ղեկավարների աշխատակազմերի պահպանման ծախսերը և պետական բյուջում ներկայացված են առանձին ծրագրերով:

4. ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 16208 հաստիքային միավորների քանակը, որը 2007 թվականի համեմատ ավելացվել է 884.5 միավորով : Թվաքանակի ավելացումը հիմնականում պայմանավորված է ՀՀ դատական օրենսգրքի պահանջներին համապատասխան դատական համակարգի կառուցվածքային փոփոխություններով և այդ մարմիններում լրացուցիչ աշխատողների անհրաժեշտությամբ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ՀՀ դատախազության, ինչպես նաև պետական կառավարման առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետ կապված աշխատողների թվաքանակի փոփոխություններով:

ՀՀ պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը արտացոլված է N 2 ա աղյուսակում:

5. Քաղաքացիական /պետական, դատական/ ծառայողների, բացառությամբ ՀՀ վերահսկիչ պալատի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների, աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է հիմք ընդունելով 40.0 հազար դրամ բազային պաշտոնային դրույքաչափը՝ 2007 թվականի 35.5 հազար դրամի փոխարեն: ՀՀ վերահսկիչ պալատի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ելնելով համապատասխան օրենքների պահանջներից:

Նախատեսվում է նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմում ծառայող դիվանագետների պաշտոնային դրույքաչափերի բարձրացում 20 %-ի չափով, օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական մարմիններում ծառայող դիվանագետների ծառայության հետ կապված ամսական ծախսերի փոխհատուցման չափերի ավելացում 20%- ով:

Պետական կառավարման մարմիններում հայեցողական, քաղաքացիական աշխատանք կատարող վարձու աշխատողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի բարձրացում 12.7 %-ի չափով:

ՀՀ վճռաբեկ, վերաքննիչ և մասնագիտացված դատարանների դատավորների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է՝ հաշվի առնելով ՀՀ դատական օրենսգրքով /հոդված 75/ առաջարկվող փոփոխությունները: ՀՀ դատական դեպարտամենտի կազմում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով ստեղծված ՀՀ դատական կարգադրիչների ծառայության աշխատակիցների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ելնելով ՀՀ դատական օրենսգրքի պահանջներից՝ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված չափերին և հաշվարկման կարգին համապատասխան՝ հիմք ընդունելով 12.0 հազար դրամ բազային պաշտոնային դրույքաչափը:

Դատախազների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 55-ով ամրագրված դրույթներին համապատասխան, իսկ ՀՀ դատախազու-

թյան աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է նույն օրենքի հոդված 64-ի պահանջներին համապատասխան ստեղծվել է «Դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, որում իրականացվելու է պետական ծառայություն և աշխատակիցները /բացառությամբ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց/ հանդիսանում են պետական ծառայողներ: Դատախազության աշխատակազմում պետական ծառայողների աշխատանքի վարձատրությունը նշված օրենքի 70-րդ հոդվածի պահանջներին համապատասխան իրականացվում է «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Պետական ծառայողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է հիմք ընդունելով 40.0 հազար դրամ բազային պաշտոնային դրույքաչափը :

6. Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմաներով:

7. Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշմամբ հաստատված ծառայողական ավտոմեքենաների /բացառությամբ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և մաքսային պետական կոմիտեի սպասարկման համար նախատեսված ծառայողական ավտոմեքենաների/ սահմանաքանակին համապատասխան՝ 885 ավտոմեքենայի համար:

ՀՀ պետական կառավարման մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2 բ աղյուսակում:

8. Կապի ծառայությունների վճարները ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կապի և կոմունալ ծախսերի նորմաներ սահմանելու մասին» N 1536-Ն և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի ներքին կանոնները հաստատելու մասին» N 1956-Ն որոշումների պահանջներին համապատասխան, սակայն հեռախոսային խոսակցությունների տարեկան սահմանաչափը ծրագրավորվել է հաշվարկվածի 30 %-ի չափով, ՀՀ դատարանների կապի ծառայությունների ծախսերը հաշվարկվել է ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության դատարանների կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաների մասին» N 732-Ա որոշման պահանջներին համապատասխան: Կապի ծախսերը հաշվարկվել է հաշվի առնելով նաև ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005թ. դեկտեմբերի 17-ի «Սակագներ հաստատելու մասին» N 404-Ն հրամանը:

9. Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսերը ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախ-

սերի առանձին տեսակների՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ծեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» ՀՀ կառավարության» N 629-Ն որոշման պահանջներին համապատասխան, հաշվի առնելով նաև ՀՀ կառավարության 06.04.2006թ. N 449-Ն որոշումը /բնական գազի սակագնի մեղմացման միջոցառումների վերաբերյալ/, սակայն էլեկտրաէներգիայի ծախսերը ծրագրավորվել է հաշվարկվածի 80 %-ի չափով:

10. Հաշվի առնելով ՀՀ վարչապետի որոշումներով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար հատկացվող միջոցների առավել արդյունավետ օգտագործման հանգամանքը, ՀՀ 2007 թ. պետական բյուջեի նախագծում պահպանվել է արտասահմանյան երկրներ մեկնելու համար նախատեսված գործուղման ծախսերը արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերում ներառելու սկզբունքը:

ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը 2008 թ. համար ծրագրավորվել է 4666.3 մլն դրամի չափով, որը 302.2 մլն դրամով գերազանցում է 2007 թվականի մակարդակը: Ավելացումը պայմանավորված է օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական մարմիններում ծառայող դիվանագետների ծառայության հետ կապված ամսական ծախսերի փոխհատուցման չափերի ավելացմամբ 20 %-ի չափով, ինչպես նաև նախատեսվել է լրացուցիչ 3 դիվանագիտական ծառայողի պահպանման ծախս:

ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ընդհանուր գումարը ՀՀ 2008 թվականի պետբյուջեի նախագծում ծրագրավորված է 44318.3 մլն դրամի չափով, որը 2006 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2007 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 128.0 և 100.9 տոկոս: Սույն համեմատությունը արտացոլված է բացատրագրի N 2 աղյուսակում:

Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի նախագծով պետական կառավարման մարմինների ծախսերին ուղղվող հատկացումների գումարը 1487.7 մլն դրամով գերազանցում է «Հայաստանի Հանրապետության 2008-2010 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի N 738-Ն որոշմամբ 2008 թվականի պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով հաստատված չափաքանակը, որը հիմնականում պայմանավորված է վերոնշյալ կառուցվածքային փոփոխություններով և պետական կառավարման մարմիններում աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Աշխատավարձի ֆոնդ - օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների աշխատողների աշխատավարձի ֆոնդը 2008 թվականի համար ծրագրավորվել է 24796.4 մլն դրամի չափով, որը 2007 թվականի մակարդակը գերազանցում է 3321.3 մլն դրամով: Աճը պայմանավորված է՝ ՀՀ դատական օրենսգրքի, «Դատախազության մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան վճռաբեկ, վերաքննիչ և մասնագիտացված դատարանների դատավորների, դատախազների և վերահսկիչ պալատի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերի, ինչպես նաև քաղաքացիական /պետական,

դատական/ ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափի բարձրացմամբ, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական /պետական,դատական/ ծառայողների աշխատավարձի բնականոն աճով, «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հարկային ծառայողների, մաքսային ծառայողների և հարկադիր կատարողների աշխատավարձի բնականոն աճով, ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմում ծառայող դիվանագետների պաշտոնային դրույքաչափերի բարձրացմամբ (20 %), հայեցողական, քաղաքացիական աշխատանք կատարող վարձու աշխատողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի 12.7 %-ի չափով բարձրացմամբ, ինչպես նաև պետական կառավարման առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների և գործառույթների ավելացմամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ - հաշվարկվել են «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Էներգետիկ ծառայություններ՝ ներառում է էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը - ծրագրավորվել է 1097.1 մլն դրամի չափով, որը 2007 թվականի մակարդակը գերազանցում է 69.0 մլն դրամով: Ավելացումը պայմանավորված է օգտագործվող համակարգիչների և այլ տեխնիկական միջոցների քանակի փոփոխություններով, բնական գազի սպառման ծավալների ավելացմամբ, ինչպես նաև նոր ստեղծված թվով 7 մասնագիտացված դատարանների պահպանման համար համապատասխան ծախսերի նախատեսմամբ:

Կոմունալ ծառայություններ՝ ներառում է ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի աղբահանման և միջատազերծման հետ կապված ծախսերը - ծրագրավորվել է 108.2 մլն դրամի չափով, որը 2007 թվականի մակարդակը գերազանցում է 0.5 մլն դրամով: Ավելացումը պայմանավորված է պետական կառավարման մարմիններում աշխատողների թվաքանակի աճով և այդ ծախսերի կանոնակարգմամբ:

Կապի ծառայություններ - ծրագրավորվել է 1500.6 մլն դրամի չափով, որը 2007 թվականի մակարդակը գերազանցում է 149.4 մլն դրամով: Ավելացումը պայմանավորված է դատական համակարգի կառուցվածքային փոփոխությունների հետևանքով նոր դատարանների ստեղծմամբ, պետական կառավարման առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատողների թվաքանակի փոփոխություններով, «Իրտեկ» ծառայության և ինտերնետային ծառայություններից օգտվելու համար լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ:

Գույքի և սարքավորումների վարձակալություն - ծրագրավորվել է ներկայացված պայմանագրերին համապատասխան:

Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսեր - ծրագրավորվել են 1415.6 մլն դրամի չափով, որը 2007 թվականի մակարդակը գերազանցում է 110.0 մլն դրամով: Ավելացումը հիմնականում պայմանավորված է ՀՀ դատարանների և պետական կառավարման առանձին մարմինների գործուղման ծախսերի կանոնակարգմամբ:

Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում -- ծրագրավորվել է 1033.9 մլն դրամի չափով: Պայմանագրային ծառայությունները բյուջետային ծախսերի նոր տնտեսագիտական դասակարգմամբ ներառում են՝ վարչական ծառայությունները, համակարգչային ծառայությունները, տեղեկատվական ծառայությունները, կառավարչական ծառայությունները, կենցաղային և հանրային սննդի ծառայությունները, ներկայացուցչական ծախսերը և ընդհանուր բնույթի այլ ծառայությունները: Պահպանվել է 2007 թվականի մակարդակը:

Նյութեր - ծրագրավորվել է 2039.5 մլն դրամի չափով, որը 2007 թվականի մակարդակը գերազանցում է 250.9 մլն դրամով: Նյութերը ներառում են գրասենյակային պիտույքների, գյուղատնտեսական ապրանքների, առողջապահական և լաբորատոր նյութերի, կենցաղային և հանրային սննդի նյութերի և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների, ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության տեսուչների և ՀՀ գյուղատնտեսության նախարարության բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչության տեսուչների համազգեստի և դատավորների համար պատմուճանների ձեռքբերման ծախսերը: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է դատական համակարգի կառուցվածքային փոփոխությունների հետևանքով նոր դատարանների ստեղծմամբ, պետական կառավարման առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատողների թվաքանակի աճով:

Տրանսպորտային միջոցների պահպանման ծախսեր - ծրագրավորվել է 1452.1 մլն դրամի չափով, որը 2007 թվականի մակարդակը գերազանցում է 38.5 մլն դրամով: Ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշմամբ հաստատված ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակին համապատասխան: Մեկ ծառայողական ավտոմեքենայի պահպանման տարեկան ծախսը 1200.0 հազար դրամ /պահպանվել է 2007 թվականի մակարդակը/: Նշված ծախսերը բյուջետային ծախսերի նոր տնտեսագիտական դասակարգմամբ տարանջատված են երեք հոդվածներում՝ մեքենաների ընթացիկ նորոգում, տրանսպորտային նյութեր /բենզին,յուղեր,այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար/ և հարկեր, պարտադիր վճարներ:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին – ծրագրավորվել է 581.9 մլն.դրամի չափով՝ «Պետական գնումների գործակալություն», «Սպասարկում» և «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին պետական աջակցության համար:

Այլ նպաստներ բյուջեից - ներառում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը, «Դատախազության մասին» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքներին համապատասխան ՀՀ դատախազության զինծառայողների պարենային բավարարման համար անհրաժեշտ գումարը, ծառայողական պարտականությունները կատարելիս հարկադիր կատարողի կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու և անձնական օգտագործման ավտոմեքենան ծառայողական նպատակներով օգտագործելու հետ կապված ծախսերի հատուցման գումարը, ինչպես նաև ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հասարակական հիմունքներով գործող անդամների գործունեության հետ կապված դրամական փոխհատուցման գումարը: Բացի այդ, նախատեսված են համապատասխան միջոցներ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության, Երևան, Արարատ, Վանաձոր, Գյումրի և Ջերմուկ քաղաքների սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորումն ապահովելու նպատակով:

Այլ ծախսեր - ծրագրավորվել է 5523.3 մլն դրամի չափով: Ներառում է՝ ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների, ՀՀ ռազմական կցորդների, արտասահմանում ՀՀ առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերը, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի ֆոնդերը, ՀՀ Նախագահի կողմից առանձին անձանց պարգևատրելու համար անհրաժեշտ մեդալների և շքանշանների պատրաստման ծախսերը, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատարանների, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդերը:

ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի պահպանման ծախսերը հաշվարկելիս կիրառվել է առանձին մոտեցում՝ ելնելով նշված մարմինների գործառական առանձնահատկություններից:

Կապիտալ ակտիվների ձեռք բերում - ծրագրավորվել են 993.9 մլն դրամի չափով, որը հիմնականում պայմանավորված է պետական կառավարման մարմիններում համակարգչային տեխնիկայի, սարքերի և սարքավորումների, ինչպես նաև առանձին մարմիններում ծառայողական ավտոմեքենաների և գրասենյակային գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ միջոցների նախատեսմամբ:

Դրա հետ մեկտեղ պետական կառավարման ոլորտում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

1. Պետական հատվածի արդիականացման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագիր նպատակն է պետական հատվածի մի քանի առանցքային մարմիններում նորամուծությունների կատարումը, որը պետք է շարժիչ ուժի դեր կատարի պետական հատվածի արդիականացման ուղղությամբ տարվող հետագա աշխատանքներում: Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում մասնավորապես նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Քաղաքացիական ծառայության համակարգի կառավարման հզորացման բնագավառում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կարողությունների հզորացման համար սարքերի և սարքավորումների, խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում,
- էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման բնագավառում էլեկտրոնային գնումների համար տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի մշակում,
- ՀՀ Ազգային ժողովի Վերահսկիչ պալատի հզորացում,
- Քաղաքականության մշակման և իրականացման բարելավում,
- Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների զարգացմանն ուղղված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման աշխատանքներ:

2. Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի դատաիրավական համակարգի անհրաժեշտ վարչարարության ապահովմանը, հասարակության համար մատչելի դատական համակարգի արդյունավետ ձևավորմանը և իրավական ու դատական տեղեկությունների մատչելիության բարելավմանը: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ավարտին հասցնել չվերակառուցված դատարանների շենքերի վերակառուցման և նոր շենքերի կառուցման շինարարական աշխատանքների կատարումը, կահավորումը՝ ներառյալ համակարգչային և այլ սարքավորումներով համալրումը:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- դատական Խորհրդի գործունեության օրենքների և աշխատանքային գործընթացների մշակում,
- Դատաիրավական համակարգին առնչվող տվյալների բազայի և էլեկտրոնային կայքի օգտագործման համար դատարանների աշխատակիցների վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
- դատարանների շենքերի նախագծման ստանդարտների մշակում, ուսումնական կենտրոնի շենքի նախագծահաշվարկային աշխատանքների իրականացում
- շուրջ 12 դատարանների շենքերի նորոգման/կառուցման նախագծային աշխատանքների իրականացում,

- Երևանի Էրեբունի-Շենգավիթ համայնքների առաջին ատյանի դատարանի կահավորում,
- դատական դեպարտամենտի համար ճարտարագիտության և ճարտարապետության գծով խորհրդատուի աշխատանքի ֆինանսավորում
- պատրաստի նախագծային փաստաթղթերի հիման վրա դատարանների շենքերի կառուցման/վերակառուցման աշխատանքների իրականացում:

Միաժամանակ 2008 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ պետական կառավարման ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային դրամաշնորհային ծրագրերը.

1. Պետական հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների իրականացման դրամաշնորհային ծրագիր:
2. Գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման դրամաշնորհային ծրագիր:
3. Աղքատության հաղթահարման ռազմավարության հավատարմագրային հիմնադրամի երկրորդ սերնդի Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մշակման, մոնիտորինգի և գնահատման համակարգի հզորացման դրամաշնորհային ծրագիր:

<u>Բնակչության առողջության պահպանումը</u> պետության կողմից դիտարկվում է որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներից մեկը:

Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված **առողջապահության** բնագավառի ծախսերը (առանց ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի և առողջապահության գծով հետազոտական և նախագծային աշխատանքների ծախսերի) կազմում են 53688.3 մլն դրամ: Ծախսերի աճը ՀՀ 2007 թվականի ճշտված պետական բյուջեի (այսուհետ՝ 2007 թվականի) համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 10471.0 մլն դրամ կամ 24.2 տոկոս: Առողջապահության ոլորտում պետական ծախսերի աճը հանդիսանում է ոլորտում իրավիճակի բարելավման առաջնահերթ ուղղություններից մեկը:

Առկա խնդիր է դիտարկվում առողջապահության ոլորտին ուղղվող պետական ծախսերի առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը, ինչպես նաև բուժօգնության ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության դերի իրական բարձրացման, բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման, մոր և մանկան առողջության ապահովման, սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելման և բնակչության աղքատ խավերի կարիքների բավարարման ծրագրերի իրականացման վրա:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով առողջապահության ծախսերի ձևավորումն ունի երկու հիմնական մոտեցում.

- առողջապահական գերակայությունների պահպանում,
- սոցիալական ուղղվածության ապահովում:

«Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ»

«Դեղագործական ապրանքներ»

Դասը ընդգրկում է «Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում» ծրագիրը՝ 1323.8 մլն դրամ և «Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ մատուցողների համար» ծրագիրը՝ 1000.0 մլն դրամ: Ծրագրերով նախատեսվում է կենտրոնացված միջոցներով դեղորայքի, շիճուկների ձեռքբերման ծախսեր: Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվի հոգեմետ, չարորակ նորագոյացություններով հիվանդների, շաքարային և ոչ շաքարային դիաբետով հիվանդների, էպիլեպսիայով, պարբերական հիվանդությամբ հիվանդների դեղորայք, երիկամների փոխպատվաստում տարած հիվանդների իմունոճնշիչ դեղորայք:

«Այլ բժշկական ապրանքներ»

«Բժշկական սարքեր և սարքավորումներ»

Դասը ընդգրկում է «Կենտրոնացված կարգով բժշկական սարքերի և սարքավորումների ձեռքբերում» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1910.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվի նորագույն բժշկական սարքեր և սարքավորումներ: Բժշկական սարքավորումները ձեռք են բերվում Հայաստանի Հանրապետության տարածքում առողջապահական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով:

«Ոչ ստացիոնար ծառայություններ»

Առողջապահության բնագավառում հիմնական գերակայություն է շարունակում համարվել առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնությունը: Ամբուլատոր-պոլիկլինիկական անվճար բուժօգնության ծավալներում կընդգրկվի ամբողջ ազգաբնակչությունը՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, բացառությամբ ստոմատոլոգիական բուժօգնությունից, որն անվճար է նախատեսվում միայն բնակչության սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածների, մինչև 8 տարեկան երեխաների, 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց, ինչպես նաև 12 տարեկան երեխաների համար:

Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գծով 2008 թվականին նախատեսվում է 19040.0 մլն դրամ՝ 2007 թվականի 16686.3 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 14.1 տոկոս: Հարկ է նշել, որ 2008 թվականին «Շտապ բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը 1463.6 մլն դրամով նախատեսվում է ընդգրկել «Ոչ ստացիոնար ծառայություններ» խմբում, իսկ «Հեմոդիալիզի անցկացման գծով պետական պատվեր» ծրագիրը 1057.9 մլն դրամով սույն խմբից տեղափոխել «Հիվանդանոցային ծառայություններ» խումբ: Նախատեսվում է մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական և շարժողական խանգարումներով տառապող երեխաների վերականգնողական բուժման ծախսերը 78.0 մլն դրամով տեղափոխել «Հիվանդանոցային ծառայություններ» խմբում նոր ձևավորված «Վերականգնողական բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիր:

Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության շրջանակներում նախատեսվում է տասնմեկ ծրագրերի իրականացում: Այսպես.

- «Բնակչության առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 8074.2 մլն դրամ՝ 2007 թվականի 7258.3 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 11.2 տոկոս,
- «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 2610.6 մլն դրամ՝ 2007թվականի 2233.1 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 16.9 տոկոս,
- «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 887.5 մլն դրամ՝ 2007թվականի 677.8 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 30.9 տոկոս,
- «Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 150.0 մլն դրամ՝ 2007թվականի 269.0 մլն դրամի դիմաց,
- «Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 11.7 մլն դրամ՝ 2007թվականի 21.6 մլն դրամի դիմաց,
- «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ապահովման նպատակով պետական աջակցություն «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 56.4 մլն դրամ (այդ թվում 5.0 մլն դրամ՝ բժշկական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար)՝ 2007 թվականի 41.6 մլն դրամի դիմաց (այդ թվում 3.0 մլն դրամ՝ բժշկական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսերի դիմաց) կամ աճը կազմում է 35.5 տոկոս,
- «Ստոմատոլագիական բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 767.6 մլն դրամ՝ 2007 թվականի 535.2 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 43.4 տոկոս,
- «Երեխաների բերանի խոռոչի հիգիենայի պահպանման գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 105.2 մլն դրամ՝ 2007թվականի 97.2 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 8.2 տոկոս,
- «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 2712.9 մլն դրամ՝ 2007թվականի 2623.6 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 3.4 տոկոս,
- «Շտապ բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1463.6 մլն դրամ՝ 2007թվականի 1277.9 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 14.5 տոկոս,
- «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 2200.3 մլն դրամ՝ 2007թվականի 1919.4 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 14.6 տոկոս,

Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գծով ավելացումը հիմնականում պայմանավորված է՝

- տեղամասային թերապևտների (մանկաբույժների), ընտանեկան բժիշկների, դեռահասների կաբինետների բժիշկ-մասնագետների, բուժքույրերի, կրտսեր բուժանձնակազմի և վարչատնտեսական անձնակազմի պահպանման ծախսերի 18.5 տոկոսով ավելացմամբ (2007 թվականի 4281.5 մլն դրամի դիմաց 2008 թվականին նախատեսվում է 5071.8 մլն դրամ): Բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 77.0 հազ. դրամ՝ 2007 թվականի 64.2 հազ. դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 49.3 հազ. դրամ՝ 2007 թվականի 41.1 հազ. դրամի դիմաց: Լեռնային և բարձր լեռնային բնակավայրերում տեղամասային սկզբունքով աշխատող բուժանձնակազմին 2008 թվականին նախատեսվում է սահմանված աշխատավարձի նկատմամբ 10% և 20% հավելումներ,
- դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերի 2.4 տոկոսով ավելացմամբ (2007 թվականի 467.3 մլն դրամի դիմաց՝ 2008 թվականին նախատեսվում է 478.6 մլն դրամ),
- անվճար և արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց տրվող դեղորայքի միջին արժեքի 4.7 տոկոսով ավելացմամբ: Բնակչության սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայքի ծախսերը 2007 թվականի 1301.2 մլն դրամի դիմաց՝ 2008 թվականին նախատեսվում են 1340.6 մլն դրամ,
- նեղ մասնագիտացված բժշկական և մանկաբարձագինեկոլոգիական օգնություն իրականացնող կաբինետների բժիշկների, մանկաբարձ-գինեկոլոգների, բուժքույրերի, մանկաբարձուհիների և կրտսեր բուժանձնակազմի պահպանման ծախսերի, կաբինետների աշխատանքների ապահովման տնտեսական և դեղորայքային (կաբինետների միջոցով իրականացվող առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայքի և վիրակապական նյութերի) ծախսերի 20.2 տոկոսով ավելացմամբ (2007 թվականի 2910.9 մլն դրամի դիմաց նախատեսվում է 3498.1 մլն դրամ): Նշված բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 66.0 հազ. դրամ՝ 2007 թվականի 55.0 հազ. դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 39.6 հազ դրամ՝ 2007 թվականի 33.0 հազ դրամի դիմաց: Հակատուբերկուլյոզային, հոգեբուժական և մաշկավեներաբանական կաբինետներում աշխատող բուժանձնակազմին՝ աշխատանքային վնասակարության համար՝ նախատեսվում է սահմանված աշխատավարձի նկատմամբ 50 տոկոս հավելումներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առողջապահության համակարգում իրականացվող միջոցառումների ցանկում մի շարք հարցերի հետ մեկտեղ բարձրացված է նաև հանրապետության տարածաշրջանների բժշկական կադրերով ապահովվածության հարցը, 2008թ. նախատեսվում է մանկաբարձ-գինեկոլոգի համար սպասարկման տարածքի բնակչության օպտիմալ թվաքանակ սահմանել 7000 մարդ՝ 2007 թվականին նախատեսված 8000-ի դիմաց,

- տարբեր մարզածևերի ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների բժշկական հսկողության, հիվանդությունների և վնասվածքների ախտորոշման և բուժման, ինչպես նաև ՀՀ հավաքական թիմերին անհրաժեշտ վիտամիններով, դեղամիջոցներով և վերականգնողական միջոցներով ապահովման համար 2007 թվականի 38.6 մլն դրամի դիմաց՝ 2008 թվականին 51.4 մլն դրամ նախատեսմամբ,

- ստոմատոլոգիական բուժօգնության դեպքերի շուրջ 30 տոկոսով ավելացմամբ (կապված 65 տարեկան և բարձր տարիքի անձանց պահանջարկի բարձր մակարդակի հետևանքով այս ծառայության մասով հերթագրված հիվանդների առկայությամբ)՝ 160.9 մլն դրամ գումարով և բուժման միջին արժեքի 8-ից մինչև 12 տոկոսով բարձրացմամբ՝ 71.5 մլն դրամ գումարով,

- լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտության միջին արժեքի 8-ից մինչև 11 տոկոսով բարձրացմամբ (2007 թվականի 2623.6 մլն դրամի դիմաց 2008 թվականին նախատեսվում է 2712.9 մլն դրամ),

- շտապ բժշկական օգնության կանչերի 7564-ով ավելացմամբ (կապված ընտանեկան բժիշկների կողմից սանիտարական մեքենայով իրականացվող տնային կանչերի թվի ավելացման հետ)՝ 18.5 մլն դրամ գումարով և մեկ կանչի միջին արժեքի՝ 12-ից մինչև 14 տոկոսով բարձրացմամբ՝ 167.2 մլն դրամ գումարով,

- զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներով և դեղորայքային ապահովման համար 2007 թվականի 1700.0 մլն դրամի դիմաց՝ 2008 թվականին 1950.0 մլն դրամ նախատեսմամբ,

- զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննությունն անցկացնելու համար 2007 թվականի 169.0 մլն դրամի դիմաց՝ 2008 թվականին 199.9 մլն դրամ նախատեսմամբ: Բժշկական հետազոտում իրականացնող բժշկի համար փոխհատուցման ծախսերը (ամսվա կտրվածքով) նախատեսվում են 65.0 հազ դրամ 2007 թվականի 55.0 հազ դրամի դիմաց, իսկ բուժքրոջ համար՝ 48.0 հազ. դրամ 2007 թվականի 40.0 հազ. դրամի դիմաց:

Միաժամանակ երեխաների թվաքանակի նվազման հետ կապված տեղամասերի աշխատանքների ապահովման տնտեսական և դեղորայքային (առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայքի և վիրակապական նյութերի) ծախսերը նախատեսվում են 25.1 մլն դրամով պակաս (2007 թվականի 1208.3 մլն դրամի դիմաց՝ 2008 թվականին նախատեսվում է 1183.2 մլն դրամ):

Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության գծով դեպքերի 17815-ով նվազման հետ կապված «Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրի գծով 2008 թվականին նախատեսվում է 9.9 մլն դրամով պակաս:

Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գծով ծրագրերը ներառում են՝

- տեղամասային թերապևտի (մանկաբույժի) և ընտանեկան բժշկի կողմից բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, հիվանդների բժշկական օգնության և նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովման, անհրաժեշտության դեպքում,

հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը,

- արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց տեղամասային թերապևտի (մանկաբույժի) և ընտանեկան բժշկի միջոցով, իսկ առանձին հիվանդությունների գծով՝ համապատասխան մասնագետի միջոցով անհրաժեշտ դեղորայքով ապահովումը,
- ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի և դիսպանսերների նեղ մասնագետների կողմից բնակչության բուժական-խորհրդատվական մասնագիտացված օգնության ապահովումը (ուռուցքաբանական, ներզատաբանական, հոգեբուժական, մաշկավեներաբանական, հակատուբերկուլյոզային, նարկոլոգիական, ինֆեկցիոն, սրտաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական, վիրաբուժական/վնասվածքաբանական, նյարդաբանական, ակնաբուժական և այլ կաբինետների միջոցով) ամբողջ բնակչության համար, առանց հաճախումների սահմանափակման,
- շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների ամբուլատոր բուժման կազմակերպումը,
- ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում ըստ բժշկական ցուցումների լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացման ապահովումը ամբողջ բնակչության համար՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից,
- տուբերկուլյոզով, դիաբետով, չարորակ նորագոյացություններով և սիրտ-անոթային համակարգի հիվանդների (բարձր ռիսկի խմբում ընդգրկված բնորոշիչ ախտանիշներ ունեցող անձանց) լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացման ապահովումը,
- 6 և 12 տարեկան երեխաների բերանի խոռոչի հիգիենայի ծրագրի իրականացման ապահովումը,
- 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատումը և խորհրդատվությունը,
- ստոմատոլոգիական օգնության ապահովումը մինչև 8 տարեկան, ինչպես նաև 12 տարեկան երեխաներին, 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց և սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածներին,
- նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց առողջական վիճակի հետազոտումը, գնահատումը, բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպումը և առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներով և դեղորայքով ապահովումը,
- գյուղական բնակավայրերում բուժակ-մանկաբարձական կետերի միջոցով բնակչության մինչբժշկական օգնության և սպասարկման իրականացումը,
- հղիների և գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց մանկաբարձագինեկոլոգիական օգնության ապահովումը՝ կանանց կոնսուլտացիաների (կաբինետների) միջոցով,
- տարբեր մարզաձևերի գծով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների բժշկական հսկողության, հիվանդությունների և վնասվածքների ախտորոշման և բուժման իրականացումը: ՀՀ հավաքական թիմերի անդամներին բարձրորակ դեղորայքով, վիտամիններով և վերականգնողական միջոցներով ապահովումը և հակադոպինգային հսկողության իրականացումը,

- հանրապետության ամբողջ տարածքում անհետաձգելի բժշկական օգնության ապահովումը՝ շտապ բժշկական օգնության կանչերի միջոցով՝ ամբողջ բնակչության համար:

Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ֆինանսավորումը շարունակվելու է իրականացվել բնակչության մեկ շնչի հաշվով ֆինանսավորման սկզբունքով (հաշվարկի համար բնակչության հաշվարկային մեծությունը ընդունված է 3223 հազար, որից մեծահասակներ՝ 2393.9 հազար, երեխաներ՝ 732.1 հազար, նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիներ՝ 97 հազար):

«Բնակչության առողջության առաջնային պահպանման» ծրագրով տարվա կտրվածքով տեղամասային թերապևտի (ընտանեկան բժշկի) կողմից 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց բժշկական օգնության և սպասարկման համար մեկ բնակչի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 1530 դրամ՝ 2007 թվականի 1324 դրամի դիմաց: Նշված ծրագրով տարվա կտրվածքով տեղամասային մանկաբույժի (ընտանեկան բժշկի) կողմից մինչև 18 տարեկան երեխաների բժշկական օգնության և սպասարկման համար մեկ երեխայի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 3158 դրամ՝ 2007 թվականի 2694 դրամի դիմաց, իսկ դեռահասների կաբինետի բժիշկ-մասնագետի կողմից դեռահասների բժշկական օգնության և սպասարկման համար մեկ դեռահասի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 2895 դրամ՝ 2007 թվականի 2347 դրամի դիմաց: Դպրոցներում իրականացվող երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերը ըստ մեկ աշակերտի ֆինանսավորման նախատեսվում են տարեկան 1112 դրամ՝ 2007 թվականի 1014 դրամի դիմաց:

Նեղ մասնագիտական բժշկական օգնության գծով ըստ նեղ մասնագետի բուժօգնության իրականացման մեկ շնչի ֆինանսավորման միջինացված գումարը նախատեսվում է մեծահասակների համար 411 դրամ՝ 2007 թվականի 352 դրամի դիմաց, իսկ երեխաների (այդ թվում պատանիների) համար համապատասխանաբար 607 դրամ և 518 դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր ծրագրով տարվա կտրվածքով մեկ բնակչի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 371 դրամ՝ 2007 թվականի 295 դրամի դիմաց:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծրագրի շրջանակներում 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտության ծախսերը ըստ մեկ շնչի ֆինանսավորման նախատեսվում են 442 դրամ՝ 2007 թվականի 419 դրամի դիմաց, մինչև 18 տարեկան երեխաների համար համապատասխանաբար 655 դրամ և 533 դրամ, զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց համար 3408 դրամ և 2814 դրամ, իսկ մանկաբարգինեկոլոգիական բժշկական օգնության գծով՝ 190 դրամ և 179 դրամ:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց փորձաքննությունն անցկացնող բուժանձնակազմի կողմից բժշկական հետազոտման իրականացման մեկ շնչի ֆինանսավորման միջինացված գումարը նախատեսվում է 2062 դրամ՝ 2007 թվականի պետական բյուջեով ճշտված 1742 դրամի դիմաց:

«Հիվանդանոցային ծառայություններ»

Հիվանդանոցային բուժօգնության գծով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագիծը կազմում է 19189.2 մլն դրամ, որը գերազանցում է 2007 թվականի համապատասխան ցուցանիշը 3251.9 մլն դրամով կամ աճը կազմում է 20.4 տոկոս: Ընդհանուր ավելացման 78.4 տոկոսը մոտ 2550.2 մլն դրամ պայմանավորված է հիվանդանոցային բուժօգնության մեկ օրվա միջին գնի 12.7 տոկոսի բարձրացմամբ և 21.6 տոկոսը մոտ 701.7 մլն դրամ պայմանավորված է հիվանդանոցային 8782 դեպքերի ավելացմամբ:

Հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող բուժհաստատություններում մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքը նախատեսվում է 11500 դրամ՝ 2007 թվականի 10200 դրամի դիմաց կամ աճը կազմում է 12.7 տոկոս, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի բարձրացման, դեղորայքի և բժշկական պարագաների, ինչպես նաև տնտեսական բնույթի ծախսերի ավելացման հետ: Բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է հասցնել մինչև 51.1 հազ դրամի (2007 թվականի 42.6 հազ դրամի դիմաց), իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ մինչև 40.0 հազ դրամի (2007 թվականի 33.3 հազ դրամի դիմաց):

Հիվանդանոցային բուժօգնության ծառայության գծով հիվանդանոցային դեպքի դիմաց վճարումը կատարվում է՝ ելնելով անվճար բուժօգնության համար հաստատված գներից: Գները հաշվարկվում են մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքի, բուժման միջին տևողության և ծառայության բարդության հաշվարկային գործակցի արտադրյալով: 2008 թվականին ևս ֆինանսավորումը կիրականացվի սահմանափակված (գլոբալ) բյուջեի սկզբունքով:

Ըստ վիճակագրական դիտարկումների տվյալների բնակչության 8-10% կարիք ունեն ստանալու հիվանդանոցային բուժօգնություն (կամ մոտ 295000 դեպք), որից պետական պատվերի շրջանակներում 2007 թվականի ճշտված բյուջեով նախատեսվել էր ընդգրկել 199448 դեպք կամ կարիք ունեցողների մոտ 68 տոկոսը, 2008 թվականի պետական բյուջեով նախատեսվում է 208230 դեպք, կարիք ունեցողների 71 տոկոսը (2006 թվականի փաստացի հիվանդանոցային դեպքերը կազմել են 214104): 2008 թվականին նախատեսվում է հիվանդանոցային բուժօգնություն ստացողների 8782 դեպքով ավելացում 2007 թվականի նկատմամբ, որից 1268 դեպք սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բուժօգնություն, 495 դեպք մանկաբարձագինեկոլոգիական օգնության գծով, 5996 անհետաձգելի բուժօգնության գծով, 222 դեպք հոգեկան և նարկոլոգիական բուժօգնության գծով, 823 ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների գծով, 309 դեպք երեխաների բժշկական օգնության գծով, 32 դեպք հեմոդիալիզի անցկացման գծով և 363 դեպք պակասել է աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բուժօգնության գծով:

«Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ»

Դասը ընդգրկում է հետևյալ ծրագրերը՝

- «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 26722 հիվանդանոցային դեպքի բուժում մոտ 2684.0 մլն դրամ գումարով՝ 2007 թվականի 25454 դեպքի և 2119.4 մլն դրամի դիմաց: Դեպքերի ավելացումը նախատեսվում է ելնելով 2006 թվականի փաստացի կատարողականից, որը կազմել է 26722 դեպք:

«Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագիրը նպատակաուղղված է բժշկական օգնություն և ծառայություններ մատուցել բնակչության սոցիալապես անապահով խմբերին բժշկական օգնության և ծառայությունների բոլոր տեսակների համար, բացառությամբ՝ կոսմետոլոգիական, օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման և ստոմատոլոգիական թանկարժեք ծառայությունների: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 14.0 %:

- «Անհետաձգելի բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 29272 հիվանդանոցային դեպքի բուժում 2352.6 մլն դրամ գումարով, 2007 թվականի 23276 դեպքի և 1839.3 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 12.3 %: Ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի: Դեպքերի ավելացումը նախատեսվում է ելնելով 2006 թվականի փաստացի կատարողականից, որը կազմել է 31250 դեպք:

«Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ»

Դասը ընդգրկում է հետևյալ ծրագրերը՝

- «Տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է տուբերկուլյոզի 4380 հիվանդանոցային դեպքի բուժում 1087.6 մլն դրամ գումարով՝ 2007 թվականի 4380 դեպքի և 1054.2 մլն դրամի դիմաց:

Ծրագիրը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, վերականգնողական բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային առողջարաններում: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 5.7 %:

- «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 6950 հիվանդանոցային դեպքի բուժում 646.7 մլն դրամ գումարով, 2007 թվականի 604.9 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 3.4 %:

Ինֆեկցիոն հիվանդությունների բուժումը ներառում է՝ աղիքային, վիրուսային և միջատներով տարածվող ինֆեկցիաներով ախտահարվածների բուժում, որն ունի սոցիալական նշանակություն: Ինֆեկցիոն հիվանդություններով տառապող անձանց բուժօգնության կազմակերպումը իրականացվում է ընդհանուր և մասնագիտացված ինֆեկցիոն հիվանդանոցներում, բաժանմունքներում:

- «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 1090 հիվանդանոցային դեպքի բուժում 169.8 մլն դրամ գումարով՝ 2007 թվականի նույն դեպքերի և 157.9 մլն դրամի դիմաց:

Ծրագրով նախատեսվում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով տառապող անձանց, ինչպես նաև կոնտակտավորների մասնագիտացված բուժկանխարգելիչ օգնության իրականացումը և համապատասխան հսկողության կազմակերպումը մաշկավենեռաբանական դիսպանսերներում: Ծրագրի շրջանակներում ներառվել է նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների բժշկական օգնության ծախսերը: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 0.9 %:

- «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 6162 հիվանդանոցային դեպքի բուժում 1535.9 մլն դրամ գումարով՝ 2007 թվականի 5940 դեպքի և 1501.1 մլն դրամի դիմաց: Ծրագրի գծով դեպքերի աճը պայմանավորված է կյանքում առաջին անգամ ախտորոշված հոգեկան խանգարումների թվաքանակի ավելացմամբ, ինչպես նաև դատարանի որոշումներով հարկադիր բուժման ենթարկված հիվանդների թվաքանակի աճով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել քրոնիկ հոգեկան հիվանդների խնամքը, հիվանդների փորձաքննությունը, հարկադիր և սուր վիճակների բուժումը: Ծրագրով նախատեսվում է նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժման ապահովումը: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 8.0 %:

- «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 7679 հիվանդանոցային դեպքի բուժում 888.5 մլն դրամ գումարով՝ 2007 թվականի 6856 դեպքի և 720.2 մլն դրամի դիմաց: Ծրագիրը ձևավորվել է նոր դասակարգման համաձայն, նախկինում այն ներառված էր «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության գծով պետական պատվեր, «Անհետաձգելի բժշկական օգնության գծով պետական պատվեր» և «Մինչև 7 տարեկան երեխաների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրերում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել չարորակ նորագոյացությունների համալիր, վիրահատական և ճառագայթային բուժում: Չարորակ հիվանդների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնարի պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և սիմպտոմատիկ բուժում: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 4.6 %:

- «Վերականգնողական բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 4262 հիվանդանոցային դեպքի բուժում 632.1 մլն դրամ գումարով՝ 2007 թվականի նույն դեպքերի և 597.0 մլն դրամի դիմաց: Ծրագիրը ձևավորվել է նոր դասակարգման համաձայն, նախկինում ծրագիրը ներառված էր «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության գծով պետական պատվեր» և «Մինչև 7 տարեկան երեխաների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրերում: Ծրագրում ընդգրկվել են նաև նախկինում ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության միջոցներից ֆինանսավորվող մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական և շարժողական խանգարումներով տառապող երեխաների վականգնողական բուժման ծավալները: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 3.3 %:

- «Հեմոդիալիզի անցկացման գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 382 դեպքի՝ 1057.9 մլն դրամ գումարով՝ 2007 թվականի 350 դեպքի և 969.4 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 5.5 %:

- «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 38300 հիվանդանոցային դեպքի բուժում 976.5 մլն դրամ գումարով՝ 2007 թվականի նույն դեպքերի և 922.8 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 5.1 %:

«Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայություններ»

- «Մանկաբարձական բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 46640 դեպք 3871.4 մլն դրամ գումարով՝ 2007 թվականի 46145 դեպքի և 2485.6 մլն դրամի դիմաց: Ծրագրի նկատմամբ կիրառվել է դիֆերենցված մոտեցում և տարվա կտրվածքով հաշվարկվել է մոտ 50.0 տոկոս գնի բարձրացում:

Ծրագիրն ընդգրկում է ծննդաբերության հետ կապված բուժօգնությունը՝ ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների բուժօգնությունը: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 20.2%:

- «Երեխաներին բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 31819 հիվանդանոցային դեպքի բուժում 2936.5 մլն դրամ գումարով՝ 2007 թվականի 31510 դեպքի և 2654.9 մլն դրամի դիմաց: Ծրագրի գծով դեպքերի ավելացումը նախատեսվում է ելնելով 2006 թվականի փաստացի կատարողականից:

Ծրագրի գծով նախատեսվում է հիվանդանոցային բժշկական օգնության իրականացումը՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 10.6 %:

- «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 4572 հիվանդանոցային դեպքի բուժում 350.0 մլն դրամ գումարով՝ ՀՀ 2007 թվականի պետական ճշտված բյուջեով հաստատված նույն դեպքերի և 310.5 մլն դրամի դիմաց: Ծրագիրը ձևավորվել է նոր դասակարգման համաձայն, նախկինում ծրագիրը ներառված էր «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության գծով պետական պատվեր» և «Անհետաձգելի բժշկական օգնության գծով պետական պատվեր»: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 1.8 %:

«Հանրային առողջապահական ծառայություններ»

Հանրային առողջապահական ծառայությունների իրականացմանը ուղղվող ֆինանսական միջոցները կապահովեն Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարա համաճարակային անվտանգությունը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովումը:

«Հանրային առողջապահական ծառայություններ»

Դասը ընդգրկում է հետևյալ ծրագրերը.

1. «Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական միջոցառումների իրականացման գծով պետական պատվեր»,
2. «Հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվեր»,
3. «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր»,
4. «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ծրագրի գծով պետական պատվեր»,
5. «Ախտահանման ծառայության ձեռքբերման գծով պետական պատվեր»,
6. «Արյան հավաքագրման և դրան առնչվող ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր»,
7. «Ծխելու դեմ պայքարի պետական ծրագիր»:

«Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական միջոցառումների իրականացման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 1814.6 մլն դրամ 2007 թվականի 1632.4 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 11.2 տոկոս:

Ընդհանուր առմամբ կիրականացվի 1000000 հետազոտություն, 2007 թվականի 965933 հետազոտության դիմաց կամ հետազոտությունների քանակի ավելացումը կկազմի՝ 34067: Նախատեսվում է սանիտարա-քիմիական լաբորատոր հետազոտություններ, մանրեաբանական հետազոտություններ, ֆիզիկական գործոնների հետազոտություններ, խոլերայի նկատմամբ բաց ջրամբարների հետազոտություններ, վարակիչ օջախների ախտահանում և այլն: Աշխատավարձը հաշվարկվել է 437 բժշկի հաստիքային միավորի հաշվով յուրաքանչյուր հաստիքի գծով 55.0 հազ դրամ միջին ամսական աշխատավարձ, նախորդ տարվա 50.0 հազ դրամի դիմաց, 1116

բուժքույրի հաստիքային միավորի գծով 45 հազ դրամ՝ 2007 թվականի 40 հազ դրամ միջին ամսական աշխատավարձի դիմաց, 181 կրտսեր բուժ աշխատողի հաստիքային միավորի գծով 30 հազ դրամ՝ ՀՀ 2007 թվականի ճշտված պետական բյուջեով հաստատված 25 հազ դրամի դիմաց, այլ հաստքային միավորների գծով՝ 522 հաստիք՝ 45 հազ դրամ ՀՀ 2007 թվականի ճշտված պետական բյուջեով հաստատված միջին ամսական 40 հազ դրամի աշխատավարձի դիմաց: «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հաշվակվել է 294.0 մլն դրամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ: Ապրանքների գնման և այլ ծառայությունների վճարման ծախսերը կաճեն մոտ 10.4 տոկոսով:

«Հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվեր» ծրագրով 2008 թվականին նախատեսվում է 322.7 մլն դրամ 2007 թվականի 250.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 29.1 տոկոս: Ընդհանուր ավելացման 41.0 տոկոսը, մոտ 30.0 մլն դրամ ուղղվելու է իմունոկանխարգելիչ դեղորայքի ձեռքբերմանը, որը կկազմի 120.0 մլն դրամ:

Նախատեսվել է հակահամաճարակային, մանրեաբանական, մանկաբուծական, վիրոսոլոգիական, սանիտարահիգենիկ հետազոտություններ: Աշխատավարձը հաշվարկվել է 71 բժշկի հաստիքային միավորի հաշվով 60 հազ դրամ միջին ամսական աշխատավարձ, 28 բուժքույրի հաստիքային միավորի գծով 53 հազ դրամ, 8 կրտսեր բուժ աշխատողի հաստիքային միավորի գծով 30 հազ դրամ, այլ հաստքային միավորի գծով՝ 50 հաստիք 45 հազ դրամ: «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հաշվակվել է 20.7 մլն դրամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ: Հաստիքային միավորների ավելացում չի նախատեսվում: Ծրագրով նախատեսվում է իրականացնել համաճարակաբանական հետազոտություններ վարակային հիվանդությունների օջախներում, ազգաբնակչության իմունիզացիայի կատարման նկատմամբ հսկողություն, մանրէաբանական հետազոտությունների իրականացում, վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների հաշվառում, համաճարակների, բռնկումների, արտակարգ իրավիճակների ժամանակ հատուկ հակահամաճարակային միջոցառումների իրականացում, մալարիայի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացում:

«Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 244.9 մլն դրամ 2007 թվականի 218.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 12.3 տոկոս:

Հատուկ վտանգավոր վարակների կենտրոնը իրականացնում է էպիզոոտոլոգիական հետազոտություն հանրապետության տարածքում ժանտախտի, տուլարեմիայի և այլ բնական օջախային վարակների էպիզոոտիաները հայտնաբերելու և մարդկանց մեջ հիվանդացությունը ժամանակին կանխելու նպատակով: 2008 թվականին նախատեսվում է 1570 էպիզոտոլոգիական հետազոտություն, 11280 ժանտախտի և էրիզիպելոյիդի հետազոտություն, 2050 տուլարեմիայի հետազոտություն, 2600 լեպտոսպիրոզի հետազոտություն, 2050 խոլերայի հետազոտություն: Հաշվարկվել է աշխատավարձի ֆոնդի աճ 7.0%, աշխատավարձը հաշվարկվել է 60 բժշկի

հաստիքային միավորի հաշվով 75 հազ դրամ ամսական հաշվարկային աշխատավարձ, ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով հաստատված 64.3 հազ դրամի դիմաց, 73.5 բուժքույրի հաստիքային միավորի գծով 49.5 հազ դրամ՝ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով հաստատված 45 հազ դրամ հաշվարկային աշխատավարձի դիմաց: Հաստիքային միավորների ավելացում չի նախատեսվում: Ապրանքների գնման ու ծառայությունների վճարման ծախսերում ավելացել են մոտ 17 տոկոսով:

«ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ծրագրի գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է մոտ 80.3 մլն դրամ 2007 թվականի 66.3 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 21.1 տոկոս: ՁԻԱՀ/ՄԻԱՎ կանխարգելման հանրապետական կենտրոնը իրականացնում է ՄԻԱՎ վարակի տարածվածության մասին տեղեկատվության ստացում, ընտրված խմբերում վարակի միտումների ընթացիկ հսկողություն:

Նախատեսվում է ՄԻԱՎ հակամարմնի հայտնաբերման գծով համաճարակաբանական հետազոտություն՝ իմունոֆերմենտային անալիզի մեթոդով, արագ թեստավորման, ռեֆերենսային մեթոդով և այլն, ինչպես նաև մրից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:

Հաշվարկվել է աշխատավարձի ֆոնդի աճ 26 տոկոսով, աշխատավարձը հաշվարկվել է 31 բժշկի հաստիքային միավորի հաշվով 65 հազ դրամ միջին ամսական աշխատավարձ, 2007 թվականի 47.5 հազ դրամի դիմաց, 13 բուժքույրի հաստիքային միավորի գծով 55 հազ դրամ՝ նախորդ տարվա 36 հազ դրամ միջին ամսական աշխատավարձի դիմաց: Հաստիքային միավորների ավելացում չի նախատեսվում:

«Ախտահանման ծառայության ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 66.7 մլն դրամ 2007 թվականի 58.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 15 տոկոս: Ծրագրի շրջանակներում հաշվարկվել է 3706 վարակիչ հիվանդների օջախների ախտահանում յուրաքանչյուրը 18000 դրամով, նախորդ տարվա՝ 3413 վարակիչ հիվանդների օջախների դիմաց (յուրաքանչյուրը 17000 դրամով):

«Արյան հավաքագրման և դրան առնչվող ծառայությունների ձեռքբերում» ծրագրով նախատեսվում է 200.0 մլն դրամ 2007 թվականի 170.9 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 17.0 տոկոս: Նախատեսվում է հազվագույտ արյան հավաքագրման և պաշարման հետազոտության իրականացում՝ 5000 համալիր հետազոտություն 5500 դրամով, արյան հիվանդություններով տառապող հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում՝ 1500 համալիր հետազոտություն 6680 դրամով, նախատեսված են նաև արյան, մեզի, ռեզուս պատկանելության անալիզներ, որոնց գների փոփոխություն չի նախատեսվել: Նախատեսվել է նաև հանրապետության արյան ծառայություններին կազմակերպչամեթոդական օգնության ցուցաբերում:

«Ծխելու դեմ պայքարի պետական ծրագրի» գծով նախատեսվում է 100.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կիրականացվի ծխախոտի օգտագործման համաճարակաբանական հսկողության համակարգի մշակում և ներդնում, ինչպես նաև հասարակության լայն խավերի համար ծխախոտի օգտագործման և առողջության վրա վերջինիս ազդեցության մասին տեղեկատվության պատրաստում, ներկայացում, ինչպես նաև հակածխախոտային ազգային ռազմա-

վարության, ծխելու տարածվածության և դրանից բխող հետևանքների գնահատման մասին զեկույցի հրապարակում: ՀՀ պետական բյուջեից հատկացվում է ֆինանսական միջոցներ՝ հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհ տրամադրելու նպատակով՝ հակածխախոտային քարոզարշավների կազմակերպման համար:

«Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)»

Դասը ընդգրկում է հետևյալ ծրագրերը.

1. «Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր»,
2. «Պաթանատոմիական ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր»,
3. «Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցում»,
4. «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման գծով պետական պատվեր»,
5. «Դեղագործական շուկայի կանոնակարգման և դրան առնչվող ծառայությունների գծով պետական պատվեր»,
6. «Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման գծով պետական պատվեր»,
7. «Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության ապահովման գծով պետական պատվեր»,
8. «Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության գծով պետական պատվեր»,
9. «Այլ բուժօգնության և սպասարկման գծով պետական պատվեր»,
10. «Մարդասիրական օգնության կարգով դեղերի և դեղագործական արտադրանքի մաքսազերծման և բաշխման աշխատանքների գծով պետական պատվեր»,
11. «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցության գծով պետական պետվեր»:
12. «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում»:

Ինչպես նաև այս դասում են ընդգրկված առողջապահության ոլորտում միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը:

«Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 320.0 մլն դրամ 2007 թվականի 280.5 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 14.1 տոկոս: «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իր 11 մարզային բաժիններով սպասարկում է ՀՀ դատախազությանը, ՀՀ արդարադատության և ՀՀ պաշտպանության նախարարություններին, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առնքեր ազգային անվտանգության ծառայությանը և ՀՀ ոստիկանությանը, իրականացնում է դիակների, կենդանի անձանց, իրեղեն ապացույցների, դատաքիմիական, դատաբժշկաքրեագիտական, դատագենետիկ, հյուսվածքաբանական և դատակեն-

սաբանական փորձաքննություններ, ինչպես նաև դիակների արտաշիրիմումներ: Հաշվարկվել է 59 բժշկի հաստիքային միավորի հաշվով 175 հազ դրամ ամսական աշխատավարձ, 50 բուժքույրի հաստիքային միավորի գծով 42 հազ դրամ:

«Պաթանոտոմիական ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 38.3 մլն դրամ 2007 թվականի 33.5 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 14.1 տոկոս: Ծրագրի միջոցով կիրականացվի հիվանդությունների ճշտված ախտորոշումը՝ սեկցիոն, վիրահատական և բիոպսիոն նյութի հետազոտության միջոցով, մանկական դիակների դիահերձումը, մահվան պատճառների ճշտումը: Կիրականացվի վիրահատական և բիոպսիոն նյութերի հետազոտություն, մանրէաբանական և բջջաբանական հետազոտություն:

«Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է 40.4 մլն դրամ 2007 թվականի 34.5 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 17 տոկոս: Նախատեսվում է 97 ուղեգրվող հիվանդի ճանապարհածախսի փոխհատուցման գումար (նախատեսվում է նաև ուղեկցողի ճանապարհածախսը): Հաշվարկվել է Մոսկվա ուղեգրվող 62 հիվանդ, Սիմֆերոպլ 8 հիվանդ, Սանկտ Պետերբուրգ 9 հիվանդ, Ուֆա 10 հիվանդ, Սոչի 8 հիվանդ: Ուղեգրված մեկ հիվանդի ծախսի աճը 2007թ. նկատմամբ կազմում է 10 տոկոս: Ուղեգրվող հիվանդի ավելացումը 2007 թվականի համեմատ կազմում է 5 դեպք: 2006 թվականի փաստացի դեպքերի թիվը կազմում է 82:

«Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 409.5 մլն դրամ 2007 թվականի 350.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 17.0 տոկոս, որը պայմանավորված է 2888դեպք-հետազոտության ավելացմամբ: Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկում ընդգրկված են մոտ 73 տեսակի բարդագույն հետազոտություններ, որոնց գների աճ չի նախատեսվում: 2008 թվականին նախատեսվում է 23327 դեպք-հետազոտություն, 2007 թվականի 20439-ի դիմաց, 2006 թվականի փաստացի կատարողականը կազմել է 16434 դեպք: Ծրագրով նախատեսված գումարը ուղղվելու է յուրահատուկ ու բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ հետազոտությունների իրականացմանը:

«Դեղագործական շուկայի կանոնակարգման և դրան առնչվող ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 21.9 մլն դրամ 2007 թվականի 19.1 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 15.0 տոկոս: Ծրագրի շրջանակներում կիրականացվի դեղագործական քաղաքականությանը վերաբերող աշխատանքներ, հիմնական և հսկվող դեղերի ցուցակների հրապարակում և այլն:

«Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 81.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կիրականացվի հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստումը:

«Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության ապահովման գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 90.0 մլն դրամ: Ծրագիրը ընդգրկում է՝ ամենամյա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառա-

վարության որոշման ու դրանից բխող ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված և ընդունված նորմատիվային ակտերի լուսաբանման աշխատանքները: Բնակչության առողջության պահպանման, բուժկանխարգելման, առողջապահության ոլորտի կառավարման հարցերի վերաբերյալ մեթոդական ձեռնարկների մշակումը, տպագրումը:

«Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 50.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կիրականացվի՝ շաքարային դիաբետով հիվանդների դիսպանսեր հսկողության, կոնսուլտացիոն և լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների և հիվանդներին դեղերով ապահովման աշխատանքների իրականացումը, հանրապետության ուռուցքաբանական ծառայություններին կազմակերպչամեթոդական օգնության ցուցաբերումը, ակտիվ, ոչ ակտիվ և ախտորոշումը չճշտված տուբերկուլյոզով հիվանդների կոնսուլտացիոն բուժօգնության և ախտորոշիչ հետազոտությունների, ինչպես նաև դիսպանսեր հսկողության իրականացումը, նարկոլոգիական, հոգեկան, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացումը, նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց նյարդահոգեբանական փորձաքննության իրականացումը, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող հոգեկան հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացումը, պրոֆեսիոնալ հիվանդություններով տառապող հիվանդների կազմակերպչամեթոդական օգնության իրականացումը, սպինալ հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացումը:

«Այլ բուժօգնության և սպասարկման գծով պետական պատվեր ծրագրով նախատեսվում է 81.8 մլն դրամ:

«Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքների գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվում է 81.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կիրականացվի մարդասիրական օգնության կարգով ստացվող, հսկվող դեղերի և դեղագործական արտադրանքի փաստաթղթային և լաբորատորային դեղագրքային փորձաքննություն ու եզրակացության իրականացումը:

«Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցության գծով պետական պետվեր» ծրագրով նախատեսվում է 81.8 մլն դրամ:

2008 թվականին «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվում է 600.0 մլն դրամ:

Բացի այդ, 2008 թվականին առողջապահության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

1. <u>Թռչնագրիպին հակազդելու ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)</u>

Ծրագրի նպատակն է աջակցել ընտանի թռչունների շրջանում բարձր ախտածին թռչնագրիպի վարակով և կենդանիների այլ հիվանդություններով մարդկանց համար առաջացված վտանգը նվազեցնելու և մարդկանց միջավայրում գրիպի վարակի ու վարակիչ այլ

հիվանդությունների բռնկումների հսկողությանն ու արձագանքմանը պատրաստվելու ուղղությամբ:

Ծրագրի շրջանակներում առողջապահության ոլորտում 2008 թվականին նախատեսվում է ձեռք բերել արագ ախտորոշման թեստեր, բժշկական մահճակալներ, սեզոնային գրիպի դեմ պատվաստանյութեր և հակավիրուսային դեղորայք: Նախատեսվում է նաև ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և համաճարակային տեսչության «Սյունիքի մարզային փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցին տրամադրել ինտերնետային կապ:

2. Առողջապահական համակարգի արդիականացման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել առողջապահության որակն ու մատչելիությունը, բարելավել ընտրված հիվանդանոցային ցանցի որակն ու արդյունավետությունը, մշակել առողջապահության քաղաքականություն:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Ընտանեկան բժշկության զարգացման ոլորտում 2008 թվականի ընթացքում նախատեսվում է նորաստեղծ 50 անկախ խմբային պրակտիկաներին և նորաստեղծ ամբուլատորիաներին տրամադրել բժշկական և համակարգչային սարքավորումներ, կահույք և բժշկական պարագաներ: Այս բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է նաև ֆինանսավորել 240 ընտանեկան բժիշկների և 270 ընտանեկան բուժքույրերի վերապատրաստման գործընթացը, տպագրել 8 ընտանեկան բժշկի գործնական ուղեցույցներ:
- Հիվանդանոցային ցանցի օպտիմալացման և արդիականացման պլանների իրականացման բնագավառում նախատեսվում է Երևանի պետական բժշկական համալսարանի հիվանդանոցների, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» և «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնների գծով, այդ թվում՝ առանձին բաժանմունքների շինարարության ավարտի հետ կապված աշխատանքների իրականացում, բժշկական և համակարգչային սարքավորումների ձեռքբերում և տրամադրում, Կոտայքի մարզի Հրազդանի բժշկական կենտրոնի և Իջևանի բժշկական կենտրոնի վերանորոգում և 10 ՀՀ մարզերի 10 հիմնական հիվանդանոցային համակարգերին ռենտգեն սարքավորումների հատկացում:
- Ինստիտուցիոնալ զարգացման բնագավառում նախատեսվում է մշակել և տպագրել առողջապահական համակարգի արդյունավետության գնահատման զեկույցը, ազգային առողջապահական հաշիվները, մշակել և ամփոփել պետական առողջապահական գործակալության ինստիտուցիոնալ հզորացման նպատակով առաջարկությունները:

3. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարության քաղաքականությանը՝ բարձրացնելու աղքատների և խոցելի խմբերի կենսամակարդակը՝ բարելավելով որակն ու մատչելիությունը և մեծացնել համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների տարածվածությունը աղքատության առավել բարձր աստիճան ունեցող համայնքներում և ամենախոցելի խմբերի համար:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է սկսել շինարարական աշխատանքները մոտավորապես 60 միկրոծրագրերում Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռվա և Շիրակի մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում:

Միաժամանակ 2008 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ պետական առողջապահության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային դրամաշնորհային ծրագրերը.

1. <u>Թռչնագրիպին հակազդելու ճապոնական ծրագիր,</u>
2. <u>Թռչնագրիպին հակազդելու ճապոնական երկրորդ ծրագիր,</u>
3. <u>Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրում ճապոնական ծրագիր:</u>
4. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում զարգացման ծրագիր:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ առողջապահության նախարարության գծով նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 7 աղյուսակում:

Առողջապահության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2006 թվականի փաստացի և 2008 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 10 աղյուսակում:

2008 թվականի Առողջապահության պետական նպատակային ծրագիրը արտացոլված է սույն բացատրագրի N 2 հավելվածում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ առողջապահության նախարարության գծով նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N 7 աղյուսակում:

<u>Հանգիստ, մշակույթի և կրոնի բնագավառում</u> (առանց պետական կառավարման մարմինների կենտրոնական ապարատի) ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները կազմում են 14623.7 մլն դրամ՝ ՀՀ 2007 թվականի 16128.7 մլն դրամի դիմաց կամ նվազումը կազմում է 1505.0 մլն դրամ (9.3 տոկոս):

Ծախսերի նվազումը պայմանավորված է՝

- ծրագրերի ավարտմանք՝ 1057.1 մլն դրամով, որից սարքերի, սարքավորումների գծով՝ 233.1 մլն դրամ,

- 2007 թվականին կատարված միանվագ բնույթ կրող ծախսերի նվազմամբ՝ 973.1 մլն դրամով,

- կապիտալ հիմնանորոգման և շինարարության ծախսերի նվազմամբ՝ 622.0 մլն դրամով:

Միաժամանակ ծախսերը աճել են 1147.2 մլն դրամով, պայմանավորված.

- մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների (գրադարաններ, թանգարաններ, մշակույթի տներ, կենտրոններ, այլ մշակութային հիմնարկներ, թատերա-համերգային կազմակերպություններ, պատմամշակութային ժառանգության հետազոտական կենտրոն), գիտական և մանկական, մանկապատանեկան ամսագրերի, թերթերի խմբագրություն-ների աշխատողների նվազագույն աշխատավարձը 25.0 հազ. դրամ սահմանման հետ կապված՝ աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ծախսեր աճով՝ 26.9 մլն դրամով: Մշակույթի ոլորտի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 35136 դրամ՝ ՀՀ 2007 թվականի՝ 34818 դրամի դիմաց,

- ջեռուցման ծախսերի՝ 28.2 մլն դրամ աճով,

- նոր նախաձեռնությունների և լրացուցիչ ծախսերի՝ 868.9 մլն դրամ աճով,

- Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի նախատեսմամբ՝ 188.2 մլն դրամ,

- Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբե-րության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրի նախատեսմամբ՝ 35.0 մլն դրամ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները ներկա-յացված են ներքոհիշյալ խմբերում ընդգրկված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, խմբագրությունների սուբսիդավորման, մշակութային, երիտասարդական, սպորտային ծրագրերի իրականացման, ընկերություններին, հասարակական կազմակերպություններին պետական աջակցության, գրականության հրատարակման գծով պետական պատվերի ծախսերի տեսքով:

Հանգստի և սպորտի խմբին ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել ազգաբնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, տարբեր տարիքային և սոցիալական խմբերի համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը, հայրենիքի պաշտանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը, բարձրակարգ մարզիկների պատրաստումը, պետական ծրագրերի միջոցով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազգային համակարգի կատարելագործումը:

Հանգստի և սպորտի խմբի համար 2008 թվականին նախատեսվում են 1164.3 մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2007 թվականի՝ 1547.1 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովմանը Պեկինի 29-րդ օլիմպիական խաղերին,

միջազգային տարբեր մակարդակի միջոցառումներին, ուսումնամարզական հավաքներին, հանրապետական առաջնություններին Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովման նպատակով ՀՀ մարզական ֆեդերացիաներին պետական աջակցմանը, մարզերի միջև սպորտային խաղերի անցկացմանը, հավաքական թիմերի համար մարզագույքի, մարզահանդերձանքի ձեռքբերմանը, Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման ծախսերի իրականացմանը, «Չեսս» շախմատային ակադեմիա» հիմնադրամին, նավամոդելային սպորտին պետական աջակցմանը:

Հանգստի և սպորտի գծով ծախսերի նվազումը ՀՀ 2007 թվականի նկատմամբ՝ 382.8 մլն դրամով, կամ 24.7 տոկոսով պայմանավորված է.

- ՀՀ 2007թ. պետական բյուջեով կատարված միանվագ բնույթ կրող սպորտային միջոցառումների ծախսերի նվազմամբ՝ 39.5 մլն դրամ (Երևանում 2007թ. անցկացվելիք մինչև 20 տարեկան պատանիների և աղջիկների շախմատի առաջնության կազմակերպմանը աջակցություն՝ 20.5 մլն դրամ և 2007թ. հուլիսի 2-ից 8-ը Տրապիզոնում անցկացվելիք Սևծովյան տնտեսական համագործակցության երկրների առաջին մարզական խաղերին մասնակցության աջակցություն՝ 19.0 մլն դրամ),

- սպորտային միջոցառումների ավարտմամբ՝ 223.7 մլն դրամ (Համաշխարհային ունիվերսիադային ՀՀ ուսանող -մարզիկների մասնակցության ապահովում՝ 23.0 մլն դրամ, Համահայկական չորրորդ խաղերի անցկացում՝ 80.0 մլն դրամ, Իսպանիայում կայանալիք Եվրոպական երիտասարդության ձմեռային և ամառային օլիմպիական փառատոններին մասնակցություն, համապատասխանաբար՝ 14.1 և 23.6 մլն դրամ, 2007թ. Եվրոպայի առաջնության փնջային նախընտրական մրցաշարերին ՀՀ ֆուտբոլի հավաքական թիմերի նախապատրաստման և մասնակցության ապահովում՝ 50.0 մլն դրամ, 2008 թվականի Պեկինի 29-րդ օլիմպիական խաղերին մասնակցության ապահովում՝ 18.0 մլն դրամ, ՀՀ մարզական կոչումների և մարզական կարգերի վկայականների և կրծքանշանների պատվիրում՝ 5.0 մլն դրամ, 2008 թվականի Պեկինի պարալիմպիկ խաղերին մասնակցության նախապատրաստում՝ 10.0 մլն դրամ),

- Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման նպատակով գույքային ծրագրի ավարտմամբ՝ 225.0 մլն դրամ:

Միաժամանակ ծախսերը աճել են՝ 105.4 մլն դրամով, որից.

- համաձայն Ժամանակացույցի սպորտային միջոցառումների ծախսերի նախատեսմամբ՝ 75.3 մլն,

դրամ (Ուսանողական մարզական խաղերի անցկացում՝ 4.3 մլն դրամ, Պեկինի 29-րդ օլիմպիական խաղերին մասնակցության ապահովում՝ 71.0 մլն դրամ),

- 2007թ. պետական բյուջեով կատարված ծախսերի ճշտմամբ՝ 1.0 մլն դրամ («Արտադպրոցական դաստիարակություն -այլ պետական մարմիններ» կրթության ծրագրի հաշվին մարզաձևերի զարգացման նպատակով աջակցման գումարի ավելացում՝ նետաձգության ազգային ֆեդերացիայի համար),

- «Չեսս» շախմատային ակադեմիա» հիմնադրամի սուբսիդավորում» ծրագրի գծով ծախսերի ավելացմամբ՝ 10.0 մլն դրամով,

- ՀՀ հավաքական թիմերին մարզագույքով և մարզահանդերձանքով ապահովման նպատակով ծախսերի ավելացմամբ՝ 16.0 մլն դրամով,

- «Եվրախորհրդի սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրին անդամակցելու անդամավճար» նոր նախաձեռնության նախատեսմամբ՝ 3.1 մլն դրամ:

Մշակութային ծառայություններ խմբում ընդգրկված են.
գրադարանները, թանգարանները, մշակույթի տները, ակումբները, կենտրոնները, այլ մշակութային կազմակերպությունները, թատերահամերգային կազմակերպությունները, մշակութային միջոցառումները, կինեմատոգրաֆիան, հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնումը և պահպանումը:

Համաձայն նոր դասակարգման նշված խբից հրատարակչական ծառայությունները և «Տեղեկատվության ձեռքբերման նպատակով պետական աջակցություն «Արմենպրես» ՓԲԸ-ին» ծրագիրը տեղափոխվել են «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ» խումբ, համապատասխանաբար՝ 781.4 և 55.8 մլն դրամով, իսկ երիտասարդական ծրագրերը՝ 342.8 մլն դրամով՝ «Կրոնական և համայնքային այլ ծառայություններ» խումբ:

Գրադարանների համար առաջնահերթ նպատակն է գրադարանային հավաքածուի պահպանության և գրադարանային-տեղեկատվական սպասարկման ապահովումը:

Գրադարանների գծով 2008 թվականի համար նախատեսված միջոցները՝ 1420.5 մլն դրամ (ՀՀ 2007 թվականի՝ 964.0 մլն դրամի դիմաց) ուղղվելու են 16 գրադարաններին (10-ը մարզ-կենտրոններում) և Հայաստանի ազգային գրապալատին սուբսիդիայի հատկացման, վերջիններիս համար սարքերի, սարքավորումների ձեռքբերման և մշակութային օբյեկտների հիմնանորգման համար, համապատասխանաբար՝ 855.5 մլն, 65.0 մլն և 500.0 մլն դրամ:

Սուբսիդիաների հատկացումը նպատակ ունի ապահովել.

- գրադարանային հավաքածուների պահպանումը և սպասարկումը՝ 770.2 մլն դրամ,
- գրադարանային հավաքածուների համալրումը՝ 45.1 մլն դրամ,
- գրադարանային միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպումը՝40.2 մլն դրամ,

Գրադարանների գծով ծախսերի աճը՝ 456.5 մլն դրամով, կամ 47.7 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների նվազագույն աշխատավարձը 25000 դրամ նախատեսման հետ կապված ծախսերի աճով՝ 4.2 մլն դրամով,
- ջեռուցման ծախսերի աճով՝ 0.4 մլն դրամով, -
«Տեղեկատու-մատենագիտական ծառայությունների իրականացում» նոր նախաձեռնության ծախսերի նախատեսմամբ՝ 3.6 մլն դրամ,
- սարքերի, սարքավորումների ձեռքբերման ծախսերի աճով՝ 24.6 մլն դրամով,

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների իրականացման ծախսերի աճով՝ 424.0 մլն դրամով:

Միաժամանակ ծախսերը նվազել են 0.3 մլն դրամով, պայմանավորված ՀՀ ԳԱԱ գրադարանների համար նախատեսված «Գրքային հավաքածուի պահպանում» ծրագրի ավարտման հետ:

Գրադարանների 1234 աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 36600 դրամ՝ 2007թ. 36322 դրամի դիմաց:

Թանգարանների գծով 2008 թվականի համար նախատեսված միջոցները՝ 1261.0 մլն դրամ (ՀՀ 2007 թվականի՝ 1437.5 մլն դրամի դիմաց) ուղղվելու են 39 թանգարաններին (12-ը՝ մարզկենտրոններում) սուբսիդիայի հատկացման, թանգարանների գծով կապիտալ ծախսերի իրականացման համար, համապատասխանաբար՝ 1209.5 մլն և 51.5 մլն դրամ:

Թանգարանների սուբսիդիաների հատկացումը նպատակ ունի ապահովել .

- թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանությունը՝ 1072.3 մլն դրամ,
- թանգարանային հավաքածուների հրապարակումը (ցուցադրությունների, ցուցահանդեսների, թանգարանային միջոցառումների կազմակերպում)՝ 94.4 մլն դրամ,
- թանգարանային հավաքածուների համալրումը, մշակութային արժեքների, գեղարվեստական ստեղծագործությունների ձեռքբերումը՝ 42.8 մլն դրամ:

Ծախսերի նվազումը 176.5 մլն դրամով, կամ 12.3 տոկոսով պայմանավորված է.

- ծրագրերի ավարտմամբ՝ 110.5 մլն դրամ, որից ընթացիկ ծախսերի գծով՝ 8.7 մլն դրամ, կապիտալ ծախսերի գծով՝ 101.8 մլն դրամ,
- մշակութային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների իրականացման ծախսերի նվազմամբ՝ 117.7 մլն դրամով:

Միաժամանակ ծախսերը աճել են 51.6 մլն դրամով, պայմանավորված.

- աշխատողների նվազագույն աշխատավարձը 25000 դրամ նախատեսման հետ կապված ծախսերի աճով՝ 5.1 մլն դրամով,
- ջեռուցման ծախսերի աճով՝ 10.7 մլն դրամով,
- «Պ. Սևակի տուն-թանգարանի մշտական ցուցադրության կազմակերպում» նոր նախաձեռնության ծախսերի նախատեսմամբ՝ 7.0 մլն դրամ,
- դաշտային պայմաններում կամ տեղափոխման բնույթ կրող աշխատանքներում ախատողներին տրվող փոխհատուցման ծախսերի ավելացմամբ՝ 28.9 մլն դրամով (ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի N542-Ն որոշում),

Թանգարանների 1486 աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 37181 դրամ՝ 2007թ. 36910 դրամի դիմաց:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների գծով 2008 թվականի համար նախատեսված միջոցները՝ 924.8 մլն դրամ (ՀՀ 2007 թվականի՝ 1371.9 մլն դրամի դիմաց) ուղղվելու են 4 կազմակերպություններին սուբսիդիայի հատկացմանը, վերջիններիս աշխատանքների իրակա-

նացման նպատակով սարքերի, սարքավորումների ձեռքբերմանը, մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների իրականացմանը և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրի իրականացմանը, համապատասխանաբար՝ 23.1 մլն, 0.5 , 866.1 և 35.0 մլն դրամ:

Սուբսիդիաների հատկացումը նպատակ ունի աջակցել մշակույթի տների և կենտրոնների պահպանմանը:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների գծով ծախսերի նվազումը՝ 447.1 մլն դրամով, կամ 32.6 տոկոսով պայմանավորված է.

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների իրականացման ծախսերի նվազմամբ՝ 483.1 մլն դրամով,
- ծրագրերի ավարտմամբ՝ 0.4 մլն դրամով:

Միաժամանակ ծախսերը աճել են՝ 36.4 մլն դրամով, որից.

- աշխատողների նվազագույն աշխատավարձը 25000 դրամ նախատեսման հետ կապված ծախսերի աճ՝ 0.1 մլն դրամով,
- «Տիկնիկային ներկայացումների և գուսանական երգարվեստին նվիրված երեկոների կազմակերպում» նոր նախաձեռնության ծախսերի նախատեսում՝ 1.3 մլն դրամ,
- Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրի նախատեսմամբ՝ 35.0 մլն դրամ:

2008 թվականին մշակույթի տների, ակումբների, կենտրոնների աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 34808 դրամ՝ ՀՀ 2007 թվականի 28798 դրամի դիմաց: Հատկացվող ֆինանսական միջոցներով 2008 թվականին կվարձատրվեն այս ոլորտի 34 աշխատողներ:

Այլ մշակութային հիմնարկների գծով 2008 թվականի համար նախատեսված միջոցները՝ 702.4 մլն դրամ (ՀՀ 2007 թվականի՝ 506.7 մլն դրամի դիմաց), ուղղվելու են «Հայաստանի ազգային արխիվ», «Տեղեկատվական-վերլուծական և հասարակության հետ կապերի կենտրոն», «Ժողովրդական ստեղծագործության և արհեստագործության կենտրոն», «Երևանի կենդանաբանական այգի», «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին սուբսիդիայի հատկացմանը՝ 492.0 մլն դրամ, վերջիններիս աշխատանքների իրականացման նպատակով սարքերի, սարքավորումների ձեռքբերմանը՝ 30.4 մլն դրամ և Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի նախատեսմամբ՝ 180.0 մլն դրամ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով այլ մշակութային հաստատությունների գծով ծախսերի աճը՝ 195.8 մլն դրամով, կամ 38.6 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների նվազագույն աշխատավարձը 25000 դրամ նախատեսման հետ կապված ծախսերի աճով՝ 1.7 մլն դրամով,

- ջեռուցման ծախսերի աճով՝ 0.5 մլն դրամով,

- նոր նախաձեռնությունների ծախսերի նախատեսմամբ՝ 5.2 մլն դրամով (Մշակութային արժեքների փորձագետների վերապատրաստում, փորձի փոխանակում՝ 3.8 մլն դրամ, ժողովրդական ստեղծագործության, ավանդական արհեստեների տարածում և խթանում՝ 1.4 մլն դրամ),

- Հայաստանի ազգային արխիվի 1-ին և 2-րդ արխիվապահոցային մասնաշենքերի օդափոխության և օդաորակման համակարգերի ներդրման ծախսերի նախատեսմամբ՝ 10.1 մլն դրամ,

- Հայոց ավանդական ժառանգության հավաքման, զարգացման ու տարածման նպատակով ծախսերի աճով՝ 0.3 մլն դրամով,

- Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի նախատեսմամբ՝ 180.0 մլն դրամ:

Միաժամանակ ծախսերը նվազել են 2.0 մլն դրամով, պայմանավորված ծրագրերի ավարտման հետ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով այլ մշակութային հաստատությունների աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 39262 դրամ՝ ՀՀ 2007 թվականի 39157 դրամի դիմաց: Հատկացվող ֆինանսական միջոցներով 2008 թվականին կվարձատրվեն հաստատությունների 498 աշխատողներ:

<u>Արվեստի</u> գծով 2008 թվականի համար նախատեսված միջոցները՝ 3224.4 մլն դրամ (ՀՀ 2007 թվականի՝ 4358.5 մլն դրամի դիմաց) կուղղվեն 40 թատերահամերգային կազմակերպություններին սուբսիդիայի հատկացմանը, մշակութային միջոցառումների իրականացմանը, ժողովրդական պատվավոր կոչումների արժանացած անձանց պատվովճարի վճարմանը և կապիտալ ծախսերի իրականացմանը, համապատասխանաբար՝ 2137.6 մլն, 658.6 մլն, 37.8 մլն և 390.4 մլն դրամ:

Սուբսիդիաների տրամադրումը նպատակ ունի ապահովելու թատրոնների, համերգային կազմակերպությունների բնականոն գործունեությունը՝ որպես հայ մշակույթի յուրօրինակության, ազգային ինքնագիտակցության, լեզվի պահպանման և ամրապնդման միջոց:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով արվեստի գծով նախատեսված ծախսերի նվազումը ՀՀ 2007 թվականի նկատմամբ՝ 1134.1 մլն դրամով, կամ 26.0 տոկոսով պայմանավորված է՝

- ծրագրերի ավարտմամբ՝ 566.0 մլն դրամով (Պետական աջակցություն Ֆրանսիայի Հանրապետությունում միջոցառումների իրականացմանը՝ 400.0 մլն դրամ, թատերահամերգային կազմակերպությունների գծով ծրագրեր՝ 166.0 մլն դրամ, որից կապիտալ ծախսեր՝ 159.0 մլն դրամ)/,

- 2007թ. պետական բյուջեով կատարված միանվագ բնույթ կրող մշակութային միջոցառումների ծախսերի նվազմամբ՝ 939.1 մլն դրամով (ՀՀ բանակի ստեղծման 15-րդ և Շուշիի ազա-

տագրման 15-րդ տարեդարձերի միջոցառումների ծախսեր՝ 863.9 մլն դրամ, Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնին աջակցություն՝ 48.5 մլն դրամ, «Թարգմանությունը որպես մշակույթների փոխներթափանցման ձգողական դաշտ» մշակութային միջոցառման ծախսեր՝ 26.7 մլն դրամ),

- մշակութային օբյեկտների հիմնանորգման ծախսերի նվազմամբ՝ 25.0 մլն դրամով,
- Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի նվազմամբ՝ 256.0 մլն դրամով:

Միաժամանակ ծախսերը աճել են 652.0 մլն դրամով, որը պայմանավորված է.

- աշխատողների նվազագույն աշխատավարձը 25000 դրամ նախատեսման հետ կապված ծախսերի աճով՝ 11.9 մլն դրամով,
- ջեռուցման ծախսերի աճով՝ 14.2 մլն դրամով,
- ժողովրդական պատվավոր կոչումների արժանացած անձանց պատվովճարի գումարի ավելացմամբ՝ 2.4 մլն դրամով (անձանց կանխատեսվող թիվը 7-ով ավելացում),
- Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի, Երևանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի և Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի պահպանման ծախսերի աճով՝ 179.2 մլն դրամով,
- մշակութային միջոցառումների իրականացման ծախսերի աճով՝ 181.4 մլն դրամով,
- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ 262.9 մլն դրամով (Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի կազմում «Դպրոցական ֆիլհարմոնիա»-ի գործունեության ապահովում՝ 11.4 մլն դրամ, Հայպետֆիլհարմոնիայի կազմում մենակատարների նվագախմբի ստեղծմանը աջակցություն՝ 9.1 մլն դրամ, Հայաստանի պետական կամերային նվագախմբին կից կամերային երգչախմբին աջակցություն՝ 28.5 մլն դրամ, Մնջախաղի թատրոնների միջազգային փառատոնի անցկացում՝ 8.1 մլն դրամ, ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման միջոցառումների իրականացում՝ 28.1 մլն դրամ, «Հայ գիրքը մշակութային խաչմերուկներում» միջոցառման իրականացում՝ 15.7 մլն դրամ, մարզերում մշակութային ծրագրերի իրականացում՝ 30.1 մլն դրամ, թատերահամերգային կազմակերպությունների համար ընթացիկ ծախսեր՝ 10.0 մլն դրամ և լուսածայնային սարքավորումների և գույքի ծեռքբերման ծախսեր՝ 121.9 մլն դրամ):

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող թատերահամերգային կազմակերպությունների աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 33186 դրամ՝ ՀՀ 2007 թվականի՝ 32835 դրամի դիմաց: Հատկացվող ֆինանսական միջոցներով 2008 թվականին կվարձատրվեն թատերա-համերգային կազմակերպությունների 3501 աշխատողներ:

Կինեմատոգրաֆիային ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ հայրենական կինոարտադրության, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության աջակցությունը, մանուկների և պատանիների համար հայկական կինոնկարների արտադրության և հասարակական-քաղաքական իրադարձությունների, կինոտարեգրության վավերագրման խթանումը:

Կինեմատոգրաֆիայի գծով 2008 թվականի համար նախատեսված հատկացումները՝ 673.7 մլն դրամ (ՀՀ 2007 թվականի՝ 653.7 մլն դրամի դիմաց), կուղղվեն կինոարտադրության կազմակերպմանը՝ 469.4 մլն դրամ, կինոշուկաներին և կինոփառատոներին մասնակցության ապահովմանը՝ 40.4 մլն դրամ, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանն ու համալրմանը՝ 13.7 մլն. դրամ (հայկական ֆիլմերի նոր պատճենների ձեռքբերում), ազգային կինոծրագրերի իրականացման նպատակով «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ին աջակցմանը՝ 93.9 մլն դրամ և ՀՀ արխիվային հավաքածուի մաս կազմող կինոհավաքածուի վերականգնման և թվայնացման աշխատանքների իրականացմանը՝ 56.3 մլն դրամ:

Կինեմատոգրաֆիայի գծով 2008 թվականի ծախսերի աճը ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով ճշտված մակարդակի նկատմամբ՝ 20.0 մլն դրամով, կամ 3.1 տոկոսով պայմանավորված է .

- վավերագրական կինոնկարների արտադրություն կինոժապավենի վրա և կինոփառատոներին մասնակցության ապահովման ծախսերի աճով՝ 30.1 մլն դրամ:

Միաժամանակ ծախսերը նվազել են 10.1 մլն դրամով, պայմանվորված ՀՀ արխիվային հավաքածուի մաս կազմող վերականգնվող և թվայնացվող ֆիլմերի քանակի պակասեցմամբ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գծով 2008 թվականի համար նախատեսված հատկացումները՝ 563.6 մլն դրամ (ՀՀ 2007 թվականի՝ 719.4 մլն դրամի դիմաց), կուղղվեն ՀՀ տարածքում պատմության և մշակույթի հուշարձանների պետական հաշվառմանը, պահպանական գոտիների նախագծերի կազմմանը, հուշարձանների պետական կադաստրի կազմմանը՝ 55.4 մլն դրամ, 24 հուշարձանների համար վերականգնման աշխատանքների իրականացմանը՝ 500.0 մլն դրամ և Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի իրականացմանը՝ 8.2 մլն դրամ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գծով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի նվազումը ՀՀ 2007 թվականի մակարդակի նկատմամբ՝ 155.8 մլն դրամով, կամ 21.7 տոկոսով պայմանավորված է.

- հուշարձանների վերականգնման ծախսերի նվազմամբ՝ 160.3 մլն դրամով,
- մշակութային օբյեկտների շինարարության ծախսերի նվազմամբ՝ 3.8 մլն դրամ :

Միաժամանակ ծախսերը աճել են 8.3 մլն դրամով, որը պայմանավորված է.

- պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի աշխատողների նվազագույն աշխատավարձը 25000 դրամ նախատեսմամբ (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները),
- Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի նախատեսմամբ՝ 8.2 մլն դրամ:

Կենտրոնի 57 աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 42181 դրամ՝ ՀՀ 2007 թվականի 41963 դրամի դիմաց:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ խմբին ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմու-

թյան, մարզական, զվարճալի և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվություն ստանալու ՀՀ քաղաքացիների իրավունքը, գրահրատարակչական արտադրանքի տեսքով ազգային և համաշխարհային գրական, գիտական, մշակութային արժեքների մատչելիությունը:

«Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների խմբի հատկացումները կուղղվեն հեռուստառադիոհաղորդումների պատրաստման ու հեռարձակման, հրատարակչությունների և խմբագրությունների և տեղեկատվության ձեռքբերման աշխատանքների իրականացմանը:

Հեռուստառադիոհաղորդումների գծով 2008 թվականին նախատեսվում են 3200.4 մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2007 թվականի՝ 3189.7 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են հանրային հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը, պահուստային բազայի պահպանմանը, Հասարակական կարծիքի ուսումնասիրմանը, «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժնի իրականացմանը, պետական գնումների հրապարակայնության ապահովմանը, «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

Ծախսերի աճը՝ 10.7 մլն դրամով, կամ 0.3 տոկոսով պայմանավորված է.

- «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերի ավելացմամբ՝ 6.8 մլն դրամով, կամ 10 տոկոսով,

- «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերի աճով՝ 4.8 մլն դրամով,

- ջեռուցման ծախսերի աճով՝ 2.4 մլն դրամով:

Միաժամանակ հեռուստահաղորդումների հեռարձակում արտասահմանի համար ծախսերը նվազել են 3.3 մլն դրամով, կապված տարադրամի փոխարժեքի փոփոխության հետ:

2008 թվականին հանրային հեռուստաընկերության և ռադիոընկերության հաղորդումների պատրաստման և հեռարձակման ժամերի միջին օրական ծավալը նախատեսվում է՝ 18 և 50 ժամ, իսկ Շիրակի հեռուստատեսային և ռադիոյի հաղորդումներինը, համապատասխանաբար՝ 4 և 24 ժամ:

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով 2008 թվականին նախատեսվում են 910.3 մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2007 թվականի՝ 781.4 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են մանկական, հանրագիտարանային, այլ, գիտահանրամատչելի, հոբելյանական, թարգմանական գրականության, թերթերի, ամսագրերի, մենագրությունների, պետական և ոչ պետական մամուլի հրապարակումների հրատարակմանը:

Ծախսերի աճը 128.9 մլն դրամով, կամ 16.5 տոկոսով պայմանավորված է.

- 2008թ. նվազագույն աշխատավարձը 25000 դրամ նախատեսմամբ՝ 3.7 մլն դրամ, որից գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման ծրագրի գծով՝ 0.2 մլն դրամ, մանկական, մանկա-պատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակման ծրագրի գծով՝ 3.5 մլն դրամ,

- 2007-2009թթ. ՄԺԾԾ-ով նախատեսված շարունակական ծրագրերի ծախսերի ավելացմամբ (փոփոխությամբ)՝ 11.0 մլն դրամով («Պաշտոնական հայտարարություններ» կայքէջի ստեղծում և վարում» ծրագրի գծով ծախսերի ավելացում՝ 12.0 մլն դրամով և «Իրավաբանական տերմինաբանության զարգացում» ծրագրի գծով ծախսերի նվազում՝ 1.0 մլն դրամով),

- թարգմանչական աշխատանքների իրականացման ծախսերի աճով՝ 70.6 մլն դրամով,

- նոր նախաձեռնության նախատեսմամբ՝ 57.6 մլն դրամ (ՀՀ մուտքի վիզայի պիտակների և դիվանագիտական անձնագրերի բլանկերի հրատարակում):

Միաժամանակ ՀՀ 2007թ. պետական բյուջեով կատարված միանվագ բնույթ կրող ծախսերը նվազել են՝ 14.0 մլն դրամով (ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ փոփոխություններով և լրացումներով ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակման ծախսեր):

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով, ինչպես և 2007 թվականի բյուջեով Տեղեկատվության ձեռքբերման գծով նախատեսված 55.8 մլն դրամը կուղղվի տեղեկատվության պահպանմանը, արխիվացմանը և պետական կառավարման մարմիններին, զանգվածային լրատվական միջոցներին և օտարերկրյա դեսպանատներին պաշտոնական ինֆորմացիայի հաղորդման նպատակով տեղեկատվության ձեռքբերմանը:

Կրոնական և համայնքային այլ ծառայություններ խմբին ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել երիտասարդական ծրագրերի իրականացումը և քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին, ազգային փոքրամասնություններին աջակցության տրամադրումը:

Երիտասարդական ծրագրերի իրականացման համար 2007 թվականին նախատեսված հատկացումները՝ 342.8 մլն դրամ նախատեսված են ՀՀ 2007 թվականի հատկացումների չափով, որոնք կուղղվեն հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանմանը, երիտասարդների զբաղվածության հնարավորությունների մեծացմանը, երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանմանը, պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համագործակցության մակարդակի բարձրացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ապահովմանը:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին, ազգային փոքրամասնություններին 2008 թվականին պետական աջակցություն տրամադրելու նպատակով հատկացումները՝ 179.6 մլն դրամ (ՀՀ 2007 թվականի՝ 180.2 մլն դրամի դիմաց) կուղղվեն ազգային փոքրամասնություններին, հասարակական կազմակերպություններին պետական աջակցության և «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն, ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին նյութական աջակցության տրամադրմանը, համապատասխանաբար՝ 10.0 մլն, 100.0 մլն և 69.6 մլն դրամ:

Ծախսերի նվազումը՝ 20.6 մլն դրամով , կամ 3.8 տոկոսով պայմանավորված է

- 2007թ. պետական բյուջեով կատարված միանվագ բնույթ կրող ծախսերի նվազմամբ՝ 20.0 մլն դրամով (ազգային փոքրամասնությունների խորհրդի կողմից զբաղեցրած տարածքի կահավորում),

- ՀՀ ԱԺ ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին աջակցման գումարի նվազմամբ՝ 0.6 մլն դրամով (համաձայն հաշվարկի):

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ մշակույթի նախարարության գծով նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 8 աղյուսակում:

Մշակույթի, տեղեկատվության և սպորտի բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2006 թվականի փաստացի և 2007 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 11 աղյուսակում:

2008 թվականի սպորտի և երիտասարդության բնագավառի պետական ծրագիրը արտացոլված է սույն բացատրագրի N 3 հավելվածում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ մշակույթի նախարարության գծով նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N 8 աղյուսակում:

Կրթության համակարգի պահպանումը, զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում, և ՀՀ կառավարության կողմից դիտվում է որպես տնտեսության առաջընթացի առաջնային գերակայություն:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված **կրթության բնագավառի** ծախսերը (առանց պետական կառավարման ապարատի պահպանման և գիտության գծով ծախսերի) կազմում են 103196.6 մլն դրամ: Ծախսերի աճը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 17015.2 մլն դրամ կամ 19.7 տոկոս:

Կրթության բնագավառի 2008 թվականի ծախսերը ՀՀ 2008-2010 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվածի նկատմամբ աճել են 2159.9 մլն դրամով կամ 2.1 տոկոսով: Միջնաժամկետ հեռանկարում կրթության ծախսերը նախատեսվել են՝ 2009 թվականին 126807.7 մլն դրամ, իսկ 2010 թվականին՝ 141428.4 մլն դրամ:

Կրթության բնագավառում հիմնական գերակայություն է համարվում **հանրակրթության ոլորտը**, որին էլ ուղղված են վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից կրթության ոլորտում՝ համակարգի կառավարման ու արդյունավետության բարձրացման, հանրակրթության բովանդակության բարեփոխման ու որակի բարելավման ուղղությամբ իրականացվող միջոցառումները:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով *հանրակրթության գծով* (հանրակրթական, երաժշտական և երեկոյան դպրոցներում ուսուցում) նախատեսվել է 55114.0 մլն դրամ: ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 7313.5 մլն դրամով կամ 15.3 տոկոսով, իսկ ՀՀ 2008-2010 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2008 թվականին նախատեսված ծախսերի նկատմամբ՝ 975.9 մլն դրամով կամ 1.8 տոկոսով:

Նախագծով 2008 թվականի համար ծրագրվող բյուջետային ծախսերի աճը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է.

ա) մանկավարժական, վարչական, ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատողների աշխատավարձերի աճով՝ 8708.3 մլն դրամով (միաժամանակ, երեխաների թվաքանակի նվազման արդյունքում աշխատավարձի ֆոնդի գծով տնտեսվել է 3107.5 մլն դրամ),

բ) պարտադիր սոցիալական ապահովության վճարների աճով՝ 436.6 մլն դրամով՝ կապված աշխատավարձերի բարձրացման հետ,

գ) վառելիքի և ջեռուցման գծով ծախսերի աճով՝ 207.5 մլն դրամով՝ կապված սեփական կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման հետ,

դ/ ավագ դպրոցների համակարգի ներդնման գծով ծախսերի նախատեսմամբ՝ 512.7 մլն դրամի չափով, որից 457.2 մլն դրամը՝ ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաների համար սարքավորումների ձեռքբերման, ինչպես նաև դպրոցական գույքի և համակարգչային սարքավորումների ձեռքբերման գծով,

ե) մնացած աճը պայմանավորված է այլ ծախսերի ձեռքբերման գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ:

Հանրակրթության գծով 2008 թվականի ծախսերը հաշվարկվել են՝ հիմք ընդունելով ՀՀ 2008-2010 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նշված ոլորտում ռացիոնալացման գծով նախատեսված միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է դպրոցներում աշակերտների օպտիմալ թվաքանակի սահմանում՝ ապահովելով ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 24-ի N 1236 և 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 2047-Ն որոշումների կատարումը (թերհամալրված դասարանների վերահամալրում, խիստ թերհամալրված դասարանների դեպքում՝ երկու, երեք դասարանների համախմբում):

Վերջինիս արդյունքում աշակերտ/ ուսուցչական դրույք և աշակերտ/ ոչ ուսուցչական դրույք հարաբերակցությունները կհասցվեն, համապատասխանաբար, 14.54 և 24.1-ի՝ 2007 թվականի համապատասխանաբար 14-ի և 23.2-ի դիմաց:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով հանրակրթության գծով նախատեսված ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 42045.9 մլն դրամը հնարավորություն կտա մանկավարժական անձնակազմի (29163.9 դրույք՝ ներառյալ զինղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 89.6 հազ. դրամի՝ 2007 թվականի 74.0 հազ. դրամի դիմաց, 4004.7 վարչական դրույքների միջին ամսական հաշվար-

կային աշխատավարձը՝ 136.0 հազ. դրամի՝ 2006 թվականի 76.3 հազ. դրամի դիմաց, իսկ 13596.1 ուսումնաօժանդակ ու տնտեսական դրույքներինը՝ 25.4 հազ. դրամի, 2007 թվականի 23.1 հազ. դրամի դիմաց:

Բյուջետային ծախսերի նոր գործառական դասակարգման համաձայն՝ հանրակրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 15182.5 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 27880.8 և 12050.7 մլն դրամի չափով:

Կարևորելով կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության հարցերը, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրացիայի խնդիրները, պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար՝ զարգացման շեղումները շտկելու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով: Պետական ռազմավարությունն այս բնագավառում ուղղված է մի կողմից հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները:

2008 թվականին կշարունակվեն **հատուկ կրթության** համակարգում իրականացվող բարեփոխումները, որոնք ուղղված են համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմանն ու ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործմանը:

ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Ներառական կրթության հայեցակարգի» հիմնական նպատակն է ուրվագծել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպման և հատուկ կրթության բարեփոխման հիմնադրույթները: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով *«Ներառական կրթություն»* ծրագրով նախատեսվել է 196.8 մլն դրամ՝ հանրապետության 14 հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 453 երեխաների ուսուցման կազմակերպման գծով: Բյուջետային ծախսերի նոր գործառական դասակարգման համաձայն՝ ներառական կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 83.9 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 90.8 և 22.1 մլն դրամի չափով:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով *հատուկ կրթության* գծով ծախսերը նախատեսվել են «Հատուկ կրթություն» և «Արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների հանրակրթության կազմակերպում» ծրագրերով, ընդամենը 3700.2 մլն դրամի չափով:

Հատուկ կրթության գծով ծախսերը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազել են 1343.0 մլն դրամով կամ 26.6 տոկոսով, իսկ ՀՀ 2008-2010 թվականների

պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2008 թվականին նախատեսված ծախսերի նկատմամբ՝ 820.2 մլն դրամով կամ 18.1 տոկոսով: Ծախսերի նվազումը 2007 թվականի նկատմամբ հիմնականում պայմանավորված է հատուկ կրթություն իրականացնող հաստատությունների վերակազմակերպումներով, այսպես. ինը հաստատություններ վերակազմակերպվել են հանրակրթական դպրոցների, վեց հատուկ դպրոց վերակազմակերպվել են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, իսկ մեկ հատուկ դպրոց կգործի և՛ որպես հանրակրթական դպրոց, և՛ նրա բազայի վրա կստեղծվի երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություն:

Միաժամանակ, նշված համակարգի աշխատողների աշխատավարձերի բարձրացումը կիրականացվի հանրակրթության համակարգում իրականացվող աշխատավարձերի բարձրացումների ընդհանուր սկզբունքներով: Նախագծի հաշվարկներում միջոցներ են նախատեսվել 2008 թվականի սեպտեմբերից Ապարանի ռազմամարզական վարժարանում ուսուցման կազմակերպման նպատակով՝ 38.9 մլն դրամի չափով, որը ՀՀ 2007 թվականի ճշտված պետական բյուջեով նախատեսված չի եղել:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով հատուկ կրթության գծով նախատեսված ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 2069.1 մլն դրամը հնարավորություն կտա 1352.8 մանկավարժական դրույքների (ներառյալ զինղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 89.6 հազ. դրամի՝ 2007 թվականի 73.5 հազ. դրամի դիմաց, 123.8 վարչական դրույքներինը՝ 135.7 հազ. դրամի՝ 2007 թվականի 77.0 հազ. դրամի դիմաց, իսկ 1286.8 ուսումնաօժանդակ և տնտեսական դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 26.7 հազ. դրամի՝ 2007 թվականի 24.1 հազ. դրամի դիմաց:

Բյուջետային ծախսերի նոր գործառական դասակարգման համաձայն՝ հատուկ կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 753.8 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 2108.7 և 837.7 մլն դրամի չափով:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով **նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով** նախատեսվել է 1680.3 մլն դրամ, որը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 202.6 մլն դրամով կամ 13.7 տոկոսով, իսկ ՀՀ 2008-2010 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվածի նկատմամբ նվազել է 267.7 մլն դրամով կամ 13.7 տոկոսով: Աճը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է համակարգի աշխատողների աշխատավարձերի նախատեսվող բարձրացմամբ, որը կիրականացվի հանրակրթության համակարգում իրականացվող աշխատավարձերի բարձրացումների ընդհանուր սկզբունքներով:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատությունների ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 1075.4 մլն դրամը հնարավորություն կտա 792 մանկավարժական դրույքների (ներառյալ զինղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 80.8 հազ. դրամի՝ 2007 թվականի 66.8 հազ. դրամի դիմաց, 69 վարչական դրույքներինը՝ 121.9 հազ. դրամի՝ 2007 թվականի 71.5 հազ. դրամի դիմաց և 670.7 ուսումնաօժանդակ ու տնտեսական դրույքներինը՝ 25.7 հազ. դրամի՝ 2007 թվականի 23.5 հազ. դրամի դիմաց:

<u>Միջին մասնագիտական կրթության գծով</u> ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 2427.2 մլն դրամ: Աճը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 242.7 մլն դրամ կամ 11.1 տոկոս, իսկ նվազումը ՀՀ 2008-2010 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվածի նկատմամբ՝ 121.6 մլն դրամ կամ 4.8 տոկոս:

ՀՀ 2007 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է՝

- աշխատավարձերի նախատեսվող բարձրացմամբ, ինչը հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա ուսուցում իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում հաշվարկվել է հանրակրթության համակարգում առաջարկվող բարձրացումների ընդհանուր սկզբունքներով, իսկ մնացած միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատավարձերի հաշվարկում հաշվի է առնվել 2008 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 25.0 հազ. դրամի չափով նախատեսվող սահմանումը: Վերոնշվածների հետ կապված՝ աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ծախսերն աճել են 205.6 մլն դրամով:

- Սովորողների թվի ավելացման հետ կապված՝ կրթաթոշակի ֆոնդի և սննդամթերքի ձեռքբերման գծով ծախսերի ավելացմամբ, համապատասխանաբար՝ 11.9 և 8.1 մլն դրամով:

Մնացած աճը պայմանավորված է սովորողների թվաքանակի ավելացման հետ կապված՝ ապրանքների ձեռքբերման գծով լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ:

Նախագծի հաշվարկներում միջոցներ են նախատեսվել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ում պետական պատվերի տեղադրման նպատակով՝ 5.4 մլն դրամի չափով:

<u>Բարձրագույն կրթության գծով</u> ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 6515.5 մլն դրամ, որը ՀՀ 2007 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ծախսերի նկատմամբ աճել է 1046.1 մլն դրամով կամ 19.1 տոկոսով, իսկ ՀՀ 2008-2010 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2008 թվականի համար նախատեսվածի նկատմամբ՝ 423.1 մլն դրամով կամ 6.9 տոկոսով:

Ծախսերի աճը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է՝

- 2008 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 25.0 հազ. դրամի չափով նախատեսվող սահմանմամբ, որի հետ կապված աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ծախսերն աճել են 608.6 մլն դրամով,

- ասպիրանտների և օրդինատորների կրթաթոշակները 25.0 հազ.դրամ նախատեսելու հետ կապված ծախսերի աճով՝ 81.9 մլն դրամի չափով,

- ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ ասպիրանտական ընդունելության գծով լրացուցիչ 39.9 մլն դրամի նախատեսմամբ,

- ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության՝ օտարերկրյա պետություններում սովորողների կրթաթոշակի գծով ծախսերի ավելացմամբ՝ 34.6 մլն դրամի չափով,

- ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության գծով ծախսերի աճով՝ 159.8 մլն դրամի չափով՝ Ոստիկանության ակադեմիայում ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գծով ծախսերի ավելացման հետ կապված,

- ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդին՝ ՀՀ կառավարման ակադեմիայի համար վարչական սարքավորումների ձեռքբերման գծով, 50.0 մլն դրամի չափով ծախսերի նախատեսմամբ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով **«Արտադպրոցական դաստիարակություն»** դասի գծով նախատեսվել է 1476.6 մլն դրամ, որը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 272.3 մլն դրամով կամ 22.6 տոկոսով, իսկ ՀՀ 2008-2010 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2008 թվականին նախատեսված ծախսերի նկատմամբ նվազել է 20.8 մլն դրամով կամ 1.4 տոկոսով:

Ծախսերի աճը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է՝

- 2008 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 25.0 հազ. դրամի չափով նախատեսվող սահմանմամբ, ինչպես նաև մարզերի երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների մասով պետական պատվերի տեղադրման նպատակով ծախսերի ավելացմամբ:

Նախագծի հաշվարկներում միջոցներ են նախատեսվել ՀՀ մշակույթի նախարարությանը՝ ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցների մեթոդական աշխատանքների իրականացման, ինչպես նաև երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման համար՝ համապատասխանաբար 33.4 և 17.1 մլն դրամի չափով, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը՝ «Երևանի առագաստային ակումբ» հասարակական կազմակերպությանը պետական աջակցության գծով՝ 38.2 մլն դրամի չափով (նշված ծրագրերը ՀՀ 2007 թվականի ճշտված պետական բյուջեով նախատեսված չեն եղել):

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով **«Լրացուցիչ կրթություն»** դասի գծով նախատեսվել է 869.6 մլն դրամ, որը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատ-

մամբ աճել է 328.6 մլն դրամով կամ 60.7 տոկոսով, իսկ ՀՀ 2008-2010 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2008 թվականին նախատեսված ծախսերի նկատմամբ՝ 186.0 մլն դրամով կամ 27.2 տոկոսով:

Ծախսերի աճը ՀՀ 2007 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է 2008 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 25.0 հազ. դրամի չափով նախատեսվող սահմանմամբ, ինչպես նաև վերապատրաստման, վերաորակավորման ինստիտուտներում և մասնագիտական դասընթացներում վերապատրաստվողների թվաքանակի ավելացման հետ կապված ծախսերի աճով:

Հաշվարկներում լրացուցիչ միջոցներ են նախատեսվել

- ՀՀ առողջապահության նախարարությանը՝ 65.3 մլն դրամի չափով (վերապատրաստվող ընտանեկան բժիշկների հանրակացարանային ծախսերի գծով նախատեսվել է 65.7 մլն դրամ, կրթաթոշակի ֆոնդի գծով ծախսերն աճել են 12.1 մլն դրամով, միաժամանակ, հաշվարկների ճշգրտման արդյունքում մնացած ծախսերը նվազել են 12.5 մլն դրամով),
- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ հատուկ ծառայողների վերապատրաստման նպատակով՝ 65.9 մլն դրամի չափով,
- Դատական դպրոցին՝ դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման և ունկնդիրների ուսուցման գծով՝ 123.7 մլն դրամի չափով,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝ համայնքային ծառայողների վերապատրաստման գծով՝ 27.4 մլն դրամի չափով:

Միաժամանակ, Նախագծի հաշվարկներում 43.7 մլն դրամ է նախատեսվել ՀՀ դատախազությանը՝ «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ին պետական աջակցության գծով (վերջինս ՀՀ 2007 թվականի ճշտված պետական բյուջեով նախատեսված չի եղել):

Բյուջետային ծախսերի նոր գործառնական դասակարգման համաձայն՝ հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում իրականացվող մի շարք ծրագրեր, ինչպես նաև մասնագիտական կրթության գծով որոշ ծրագրեր նախատեսվել են ***«Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ»*** դասում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով զգալի միջոցներ են նախատեսվել ներքոհիշյալ ծրագրերի գծով, այսպես.

- տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում՝ 469.4 մլն դրամ («Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետությունը տարրական ընդհանուր կրթական ծրագրերով սովորող բոլոր երեխաներին անվճար ապահովում է դասագրքերով (բացառությամբ օտար լեզվի և երաժշտության դասագրքերի), իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով):
- դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում՝ 155.3 մլն դրամ,
- հանրապետության հանրակրթական դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման նպատակով՝ 352.1 մլն դրամ (ինտերնե-

տային կապով ապահովման գծով ծախսերը տարեկան կտրվածքով նախատեսվել են 324 դպրոցի հաշվով, իսկ ևս 320 դպրոցի գծով ծախսերը նախատեսվել են 2008 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար),

- կենտրոնացված կարգով ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների ձեռքբերման, 12-ամյա կրթության անցումն ապահովող հանրակրթական ծրագրերի մշակման և տպագրման, ուսուցիչների համար մեթոդական ձեռնարկների տպագրման և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման նպատակով՝ 409.5 մլն դրամ,
- դպրոցականների սպարտակիադայի և օլիմպիադաների անցկացման նպատակով, համապատասխանաբար, 35.0 և 27.0 մլն դրամ,
- Հայաստանի Հանրապետության հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները մանկավարժական կադրերով համալրելու նպատակով՝ 83.2 մլն դրամ,
- ռազմագիտության կաբինետների վերականգնման նպատակով՝ 30.3 մլն դրամ,
- կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման նպատակով պետական աջակցություն «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին՝ 457.7 մլն դրամ,
- քննությունների թեստերի մշակման և միասնական քննությունների անցկացման նպատակով պետական աջակցություն «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ 374.4 մլն դրամ,
- Ներքին սփյուռքի դպրոցների դասագրքերի պահանջարկը բավարարելու և դասագրքերի տպագրման միասնական քաղաքականություն ապահովելու, ինչպես նաև Ջավախքի դպրոցների համար գույքի ձեռքբերման նպատակով, համապատասխանաբար, 70.0 մլն և 30.0 մլն դրամ,
- ՀՀ Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու և տրանսպորտային ծառայությունների վճարների գծով՝ 43.9 մլն դրամ,
- 12-ամյա կրթության անցման կապակցությամբ 6 տարեկան երեխաների ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման նպատակով՝ 1266.1 մլն դրամ,
- սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելու նպատակով սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ամենամյա դասընթացների իրականացման գծով ծախսեր՝ 1.2 մլն դրամ:

Վերոնշյալներից բացի՝ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով համապատասխան միջոցներ են նախատեսվել նաև կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով, ընդ որում՝ ավագ դպրոցների հիմնանորոգման գծով նախագծա-նախահաշվային աշխատանքները կկատարվեն տարվա ընթացքում և ըստ այդմ կհստակեցվի յուրաքանչյուր դպրոցի համար նախատեսվող չափը:

Բացի այդ, 2008 թվականին կրթության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

1. Կրթության որակի և համապատասխանության ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն), որի նպատակն է՝ ուղղորդել Հայաստանի կրթական համակարգի զարգացումը դեպի համընդհանրացման արդի պայմաններում «գիտելիքների տնտեսության» պահանջները:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Հանրակրթության կրթակարգի, առարկայական ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի ստեղծում բաղադրիչի շրջանակներում կստեղծվի և կներդրվի հանրակրթական պետական չափորոշիչի, հենքային ուսումնական պլանի, առարկայական ուսումնական ծրագրերի ամբողջական համալիր,
- «Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում հանրակրթության համակարգում» բաղադրիչի շրջանակներում դպրոցներում հիմնարար կբարեփոխվի ինֆորմատիկա առարկայի դասավանդման գործընթացը, հանրակրթական համակարգը կզինվի տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներով, պարտադիր առարկաների ուսուցման գործընթացում կապահովվի ՏՀՏ-ի կիրառումը,
- «Ուսուցիչների մասնագիտական կատարելագործում» բաղադրիչի շրջանակներում կստեղծվի մասնագիտական կադրային բազա, կհիմնվի ուսուցիչների մասնագիտական զարգացման մոտ 60 դպրոց-կենտրոնների համակարգ, կբարելավվի դպրոցների և ուսուցիչների միջև համագործակցության և փորձի փոխանակումը,
- Հանրակրթության համակարգի կառավարում և արդյունավետություն բարձրացում բաղադրիչի շրջանակներում կընդլայնվի հանրակրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխումները, կվերապատրաստվեն ղեկավար և վարչական կադրերը, կռացիոնալացվի հանրակրթության ոլորտը՝ հանրակրթությանը հատկացվող բյուջետային միջոցների և գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով աջակցություն կցուցաբերվի դպրոցների ֆինանսավորման և կառավարման հարցերում համայնքների ու ծնողների ներգրավման գործընթացին:

2. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարության քաղաքականությանը՝ բարձրացնելու աղքատների և խոցելի խմբերի կենսամակարդակը՝ բարելավելով որակն ու մատչելիությունը և մեծացնել համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների տարածվածությունը աղքատության առավել բարձր աստիճան ունեցող համայնքներում և ամենախոցելի խմբերի համար:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է սկսել շինարարական աշխատանքներ մոտավորապես 60 միկրոծրագրերում Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռու և Շիրակի մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում: Մշակույթի տներին նախատեսվում է տրամադրել նոր կահույք, դաշտային աշխատանքների համար գնել մեկ ավտոմեքենա, բոլոր շինարարական աշխատանքների համար մշակել նախագծեր:

Ծրագրի շրջանակներում «ֆինանսական ուսուցում» թեմայով կիրականացվեն նաև դասընթացներ տեղական իշխանությունների համար: Նախատեսվում է նաև կատարել տարեկան ֆինանսական աուդիտ և շահառուների գնահատում, բարձրացնել աշխատակազմի որակավորումը, միջազգային և տեղական կոնֆերանսներին, սեմինարներին և դասընթացներին մասնակցելու միջոցով:

Միաժամանակ, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին ՀՀ Տավուշի մարզում իրականացվող մարզային զարգացման ծրագրի գծով նախատեսվել է 5.0 մլն դրամ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով միջոցներ են նախատեսվել նաև ներքոնշյալ ծրագրերի գծով (նշվածները ՀՀ 2007 թվականի ճշտված պետական բյուջեով նախատեսված չեն եղել).

- «Պետական աջակցություն «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ին»՝ 187.1 մլն դրամ,
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ»՝ 3217.2 մլն դրամ,
- «Պետական աջակցություն «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային ծառայության կենտրոնին»՝ 65.7 մլն դրամ,
- «Բուհերում ուսման գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման, կրթության որակի ապահովման, հավաստման և որակավորումների ազգային համակարգի ներդնում» ծրագրի իրականացման համար պետական աջակցություն Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին»՝ 30.0 մլն դրամ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարության գծով նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 10 աղյուսակում:

Կրթության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2006 թվական) փաստացի և ընթացիկ (2007 թվական) բյուջետային տարվա համար ճշտված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 12 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարության գծով նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N 10 աղյուսակում:

Գիտությունը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն գտնվում է պետության հովանավորության ներքո: Հիմք ընդունելով 2007 թվականի հուլիսի 11-ի ՀՀ վարչապետի կողմից վավերացված «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները», 2008 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված գիտության ծախսերը կուղղվեն.

ա/ գիտական ոլորտի բարեփոխումներին,

բ/ գիտական աշխատողների աշխատավարձի բարձրացմանը,

գ/ գիտաշխատողների գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների բարձրացմանը,

դ/ գիտական ներուժի վերարտադրությանը,

ե/ ասպիրանտների կրթաթոշակի բարձրացմանը,

զ/ բազային ֆինանսավորմամբ ծրագրերի նոր մրցույթի անցկացմանը,

է/ Գիտության առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամին /ԳԱՏԱՀ/ պետական աջակցությանը,

ը/ նախկին Խորհրդային Միության երկրների գիտնականների հետ համագործակցության խթանման Միջազգային ասոցիացիային /ԻՆՏԱՍ/ պետական աջակցությանը:

Գիտության ոլորտի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մեջ գիտության գործուն դեր ունենալը, գիտական հետազոտությունների արդյունքները տնտեսության մեջ արդյունավետ օգտագործելը:

Գիտության զարգացումը պետք է ընթանա «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի և գիտության ու գիտատեխնիկական քաղաքականության հիմնադրույթներով, ըստ որի պետության կողմից գիտության ֆինանսավորումն կիրականացվի

- բազային,
- պայմանագրային (թեմատիկ) ,
- նպատակային-ծրագրային ֆինանսավորման ձևերով:

2005 թվականից գործածության մեջ է դրվել բազային ֆինանսավորմամբ հիմնարար և կարևորագույն կիրառական նշանակություն ունեցող թեմաների ֆինանսավորումը, որը կշարունակվի նաև 2008 թվականին:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված գիտության բնագավառի ծախսերը կազմում են **6842.9** մլն դրամ: Ծախսերի աճը ՀՀ 2007 թվականի ճշտված բյուջեի նկատմամբ կազմում է 969.5 մլն դրամ կամ 16.51 տոկոս: Առանց կապիտալ ծախսերի ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում գիտության ծախսերը ներկայացվել են ՀՀ 2007 թվականի ճշտված բյուջեով համապատասխան ցուցանիշի նկատմամբ 19.35 տոկոս աճով, կամ ծախսերի աճը կազմել է 1109.5 մլն դրամ:

Գիտության բնագավառի 2008 թվականի ծախսերը միջնաժամկետ ծախսերի ծրագրով այդ տարվա համար նախատեսվածի նկատմամբ աճել են 314.0 մլն դրամով կամ 4.81 տոկոսով: Միջնաժամկետ հեռանկարում գիտության ծախսերը նախատեսվել են 2009 թվականին՝ 7330.3 մլն դրամի չափով, իսկ 2010 թվականին՝ 8130.9 մլն դրամի չափով:

Գիտության ամփոփ ծախսերն արտացոլված են սույն բացատրագրի N 24.4 աղյուսակում: Ըստ ուղղությունների նախատեսվում են.

Բազային ֆինանսավորում ստացող կազմակերպությունների համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է **3893.8** մլն դրամ՝ 2007 թվականի 3559.4 մլն դրամի դիմաց այդ թվում.

- Հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման ծրագրի գծով՝ **1834.5** մլն դրամ, որը 2007թվականի նկատմամբ պակաս է 285.8 մլն դրամով, այն հիմնականում պայմանավորված է 2008 թվականին գիտաշխատողների գիտական աստիճանի համար տրվող հավելավճարները առանձին ծրագրով նախատեսելուն:

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի գծով՝ **1507.3** մլն դրամ, կամ աճը 2007 թվականի նկատմամբ կազմում է 370.4 մլն դրամ, այն հիմնականում պայմանավորված է գիտաշխատողների միջին հաշվարկային աշխատավարձի շուրջ 50%-ով ավելացմամբ, ինչպես նաև՝ Սինքրոտրոնային ճառագայթման օգտագործմամբ գիտահետազոտությունների կենտրոնին /CANDLE/ 60 մլն դրամի չափով, նախկին Խորհրդային Միության երկրների գիտնականների հետ համագործակցության խթանման Միջազգային ասոցիացիային /ԻՆՏԱՍ/ 35 մլն դրամի չափով, Գիտության առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամին /ԳԱՏԱՀ/17.3 մլն դրամի չափով պետական աջակցություն ցուցաբերելու հետ:

- Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի գծով՝ **164.8** մլն դրամ , կամ 2007 թվականի համեմատ ծախսերը աճել են 1.4 մլն դրամով, որը պայմանավորված է Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի («Մատենադարան») ծախսերի ավելացմամբ:

- Գիտական կադրերի պատրաստման պետական ծրագրի գծով՝ **100.9** մլն դրամ, կամ աճը 2007 թվականի նկատմամբ կազմում է 0.3 մլն դրամ:

Նախատեսվում է նաև **286.3** մլն դրամի լրացուցիչ ծախս բազային ֆինանսավորմամբ ծրագրերի նոր մրցույթի անցկացման նպատակով:

Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման համար նախատեսվում է **943.3** մլն դրամ՝ 2007 թվականի 833.0 մլն դրամի դիմաց: Աճը պայմանավորված է 84.2 մլն դրամի չափով ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով ծախսերի ավելացմամբ և 26.1 մլն դրամի չափով նոր՝ «Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ – թանգարան

(,,Մատենադարան,,)» ՊՈԱԿ-ին «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» բազմահատորյակի ստեղծման և հրատարակման ծրագրի նախատեսմամբ:

Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար նախատեսվում է **1455.8** մլն դրամ՝ 2007 թվականի 1340.9 մլն դրամի դիմաց, աճը պայմանավորված է գիտաշխատողների միջին հաշվարկային աշխատավարձը շուրջ 50%-ով ավելացմամբ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով առանձին ծրագրով նախատեսվում է նաև 549.9 մլն դրամ գիտաշխատողների գիտական աստիճանների հավելավճարներ սահմանելու համար, այն 2008թվականին գիտության դոկտորների համար կկազմի 20 հազ. դրամ, իսկ թեկնածուների համար՝ 10 հազ. դրամ 2007 համապատասխանաբար՝ 10 հազ. դրամի և 5 հազ. դրամի փոխարեն:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարության գծով նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 9 աղյուսակում:

Գիտության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2006 թվական) փաստացի և ընթացիկ (2007 թվական) բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 13 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարության գծով նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N 9 աղյուսակում:

<u>Սոցիալական պաշտպանության</u> բնագավառի համար 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերն ուղղված են բնակչության սոցիալական խնդիրների լուծմանը:

Այս բնագավառում նախատեսվող միջոցառումներն ուղղվելու են բնակչության սոցիալական ապահովության քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների՝ պետական կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, աշխատանքի, բնակչության զբաղվածության, ընտանիքի, հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության, փախստականների սոցիալական խնդիրների լուծման, օրենսդրության կատարելագործման ու դրա իրականացման ապահովմանը, ինչպես նաև անհատական ծածկագրային համակարգի ներդրման գործընթացի շարունակությանը:

2008 թվականին սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը (առանց ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության ապարատի պահպանման) կկազմեն 217430.3 մլն դրամ (2008թ. ծախսերում ներառվել է ՀՀ սոցիալական ապահովագրության բյուջեի ծախսերը) կամ 2007 թվականի համախմբված բյուջեի ծախսերը գերազանցում են 69282.2 մլն դրամով (2007թ.՝ 148148.1 մլն. դրամ):

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը ըստ խմբերի և դասերի բնութագրվում են հետևյալ կերպ.

Վատառողջություն

-«Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է 78.6 մլն դրամի չափով ծախս: 2007թ. նկատմամբ ծախսերի աճը կազմում է 13.8 մլն. դրամ, որը պայմանավորված է վնասի հատուցում ստացող անձանց կանխատեսվող միջին տարեկան թվաքանակի նվազմամբ՝ 9 մարդով (2007թ. 892 մարդ) և Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի կանխատեսվող չափի բարձրացմամբ 5000 դրամով (2007թ.՝ 20000 դրամ):

-«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում բժշկասոցիալական վերականգնման, աշխատունակության փորձաքննության տրամադրման նպատակով պետական աջակցություն «Արթմեդ» բժշկավերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ին ծրագրով նախատեսվում է 96.8 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 64.8 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 31.9 մլն. դրամով, պայմանավորված մեկ հիվանդի 1 օրվա բուժման միջին գնի բարձրացմամբ և հիվանդների թվաքանակի ավելացմամբ՝ հաշվի առնելով 2006թ. նախա և հետ պրոթեզավորման հետ կապված փաստացի բուժում ստացած մարդկաց թվաքանակը, 2008թ. հիվանդների թվաքանակը կկազմի 564 մարդ (2007թ. 407 մարդ):

Անաշխատունակություն

-«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում հոգեկան առողջության վերականգնման նպատակով պետական աջակցություն «Սթրես-կենտրոն» ՓԲԸ-ին ծրագրով նախատեսվում է 64.8 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 56.3 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 8.5 մլն. դրամով պայմանավորված մեկ հիվանդի 1 օրվա բուժման միջին գնի բարձրացմամբ, պահպանելով հիվանդների թվաքանակը՝ 392 մարդ:

-«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում ծրագրով նախատեսվում է 897.5 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 813.2 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 54.3 մլն. դրամով պայմանավորված 2008թ. ՄԺԾԾ հաստատված պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական և դրանց նորոգման պարագաների թվաքանակի փոփոխությամբ, որի արդյունքում նրանց թիվը կազմում է 14104 (2007թ.՝ 16359 պարագա), ինչպես նաև առանձին պարագաների գծով գների փոփխության հետ կապված ծախսերի ավելացմամբ:

-«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում դպրոցն ավարտաց, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսաղ գրքերի» ձայնագրության ծառայության ձեռքբերում» ծրագրով նախատեսվում է 11.7 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 11.5 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 0.2 մլն.

դրամ, պայմանավորված Բրալյան տետրերի քանակի ավելացմամբ՝ 740 տետր (2007թ.՝ 260 տետր):

-«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում պետական աջակցություն տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցանելու և համակարգչային տեխնիկայով ապահովելու համար ծրագրով նախատեսվում է 20.2 մլն դրամի չափով ծախս: Սույն ծրագրով նախատեսված է աջակցել 20 տեսողությունից հաշմանդամ երիտասարդ, հիմնականում ուսանող անձանց լիարժեք կյանքով ապրելու, սովորելու, աշխատելու, հաղորդակցվելու գործում, այսինքն ինտեգրվելու հասարակություն՝ անվճար համակարգիչ, համակարգչային հատուկ ծրագիր և համապատասխան ուսուցում ստանալու միջոցով:

-«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում պետական աջակցություն «Փրկություն» հասարակական կազմակերպության հաշմանդամ երեխաների և պատանիների սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնին ծրագրով նախատեսվում է 16.5 մլն դրամի չափով ծախս: Սույն ծրագրով նախատեսված է աջակցել հաշմանդամ երեխաների ու պատանիների (հիմնականում մտավոր խնդիրներ ունեցող) և նրանց ընտանիքների սոցիալական, կրթական և առողջապահական հիմնախնդիրների լուծման միջոցով նրանց ինտեգրումն է հասարակություն: Պետական բյուջեից հատկացվող միջոցները ուղղված են «Փրկություն» հասարակական կազմակերպության 24 աշխատողի աշխատավարձերի և սոցիալական վճարների վճարմանը (աշխատավարձի հաշվարկման համար հիմք է ընդունվել Գյումրու տարեցների տուն-ինտերանատի աշխատողների միջին աշխատավարձի չափը՝ 46 300 դրամ:):

Ծերություն

-«Սպայական անձնակազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում» ծրագրով նախատեսվում է 19473.2 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 11197.1 մլն. դրամ): Ծախսերի աճը 2007 թվականի նկատմամբ կազմում է 8276.0 մլն դրամ, որը այմանավորված է՝ ա) բազային կենսաթոշակի 2000 դրամով, բ) միջին ամսական կենսաթոշակի 60%-ով, գ) ոստիկանության համակարգի 145 քննիչների ու դատախազների կենսաթոշակների չափերի բարձրացումներով, դ) կենսաթոշակառուների միջին տարեկան թվի 760 մարդով ավելացմամբ (2007թ.՝ 36369 մարդ), ե) բոլոր ուժային կառույցների (առանց թաղման և վճարման ծառայության ծախսերի) կենսաթոշակի միջին ամսական չափի բարձրացմամբ՝ 17171.6 դրամով (2007թ.՝ 25362.6դրամ):

-«Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում» ծրագրով նախատեսվում է 3324.1 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի նկատմամբ աճել են 977.7 մլն դրամով, որը պայմանավորված է ա) բազային կենսաթոշակի 2000 դրամով (2007թ.՝ 3000 դրամ), բ) միջին ամսական կենսաթոշակի շուրջ 63.6 %-ով բարձրացմամբ (2007թ.՝ 10812 դրամ):

-«Սոցիալական կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 5260.92 մլն դրամի չափով ծախս: Աճը 2007թ. պետական բյուջեի նկատմամբ 2016.7 մլն. դրամով պայմանավորված է. ա) կենսաթոշակի հիմնական չափի 2550 դրամով բարձրացմամբ (2007թ.՝ 4250 դրամ), բ) կենսաթոշակառուների թվաքանակի աճով՝ 974 մարդ (2007թ.՝ 45259 մարդ):

-«Ապահովագրական կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 126111.6 մլն դրամի չափով ծախս: Աճը 2007թ. նկատմամբ 49199.4 մլն. դրամով պայմանավորված է կենսաթոշակի հիմնական չափի 2550 դրամով (2007թ.՝ 4250 դրամ), ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը 165 դրամով բարձրացմամբ (2007թ.՝ 230 դրամ), կենսաթոշակառուների թվաքանակի նվազման պայմաններում 2063 մարդով (2007թ.՝ 471864 մարդ):

-«Ապահովագրական կենսաթոշակների վճարման հետ կապված փոստային ծառայությունների ձեռքբերում» ծրագրով նախատեսվում է 1797.7 մլն դրամի չափով ծախս: Աճը 2007թ. նկատմամբ 702.2 մլն. դրամով պայմանավորված է ապահովագրական կենսաթոշակներին ուղղվող գումարի փոփոխությամբ:

-«ՀՀ պետական բյուջեից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված ապահովագրական ստաժի համար ֆինանսավորում» ծրագրի ծախսերը կազմում են 2292.0 մլն դրամ: Աճը կազմում է 957.4 մլն.դրամ, որը կապված է ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի 165 դրամով բարձրացմամբ (2007թ.՝ 230 դրամ), միաժամանակ պահպանվել է 2007թ. բյուջեով հաստատված ապահովագրական ստաժի տարիները՝ 483554 տարի:

-«ՀՀ օրենքներով և կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակներ և ամենամսյա դրամական օժանդակություն» ծրագրով նախատեսվում է 172.4 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի համեմատությամբ աճել են 16.9 մլն. դրամ, որը պայմանավորված նրանով, որ դատավորների կենսաթոշակների չափերի հաշվարկներում հաշվի է առնված դատավորների աշխատավարձի 25 %-ով ու կենսաթոշակի հիմնական ու ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացումները: Միաժամանակ ՀՀ ազգային հերոսի կոչում ստացած անձած և նրանց ընտանիքի անդամների դրամական օժանդակության ծախսերը տեղափոխվել են նպաստների համակարգ՝ առանձին ծրագրով:

-«Տարեցներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում տարեցների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով պետական աջակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված «Տարեցների տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներին ծրագրով նախատեսվում է 1147.1 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 1098.0 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 49.0 մլն. դրամով, պայմանավորված. ա/ վառելիքի ծախսերի ավելացմամբ՝ 15.9 մլն. դրամ, բ/ անկողնային հիվանդ խնամվողների համար տակդիրների ձեռքբերման համար՝ 19.8 մլն. դրամ, գ/ հուղարկավորության հետ կապված պայմանագրային գնի բարձրացմամբ՝ 2.6 մլն. դրամ, դ/ առանձին հոդվածների հաշվարկների ճշտմամբ՝ 10.7 մլն. դրամ:

-«Տարեցներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով պետական աջակցություն «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ին ծրագրով նախատեսվում է 96.8 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 64.8 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 31.9 մլն. դրամով, պայմանավորված տնային պայմաններում սոցիալական սպասարկում ստացող 300 միայնակ տարեցների և հաշմանդամների թվաքանակի ավելացման հետ կապված ծախսերի աճով (2007թ.՝ 1200 խնամվող):

-«Տարեցների մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վերականգնման նպատակով պետական աջակցություն «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին ծրագրով նախատեսվում է 13.8 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-«Տարեցների մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով պետական աջակցություն «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ին ծրագրով նախատեսվում է 127.2 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 109.0 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 18.2 մլն. դրամով, որը պայմանավորված է նրանով, որ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության աշխատողների թիվը ավելացել է 40 մարդով (2007թ.՝ 239 աշխատող)՝ Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում ևս 600 միայնակ անապահով տարեց ու հաշմանդամ մարդկանց տնային պայմաններում և տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ մատուցելու համար: Ընդ որում, պետական բյուջեով նախատեսվել է միայն աշխատողների աշխատավարձի և սոցվճարների վճարման ծախսերը (հաշվարկներում մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձի չափի հաշվարկման հիմք է ընդունվել ՀՀ պետական բյուջեի «Տարեցներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում պետական աջակցություն ՀՀ մարզերում միայնակ տարեցների և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկման իրականացման նպատակով» ծրագրով 2006թ. պետական բյուջեով նախատեսված չափը՝ 29.6 հազ. դրամ:)

Հարազատին կորցրած անձինք

-Հայաստանի զոհված ազգային հերոսների ընտանիքներին նպաստ ծրագրով նախատեսվում է 14.6 մլն դրամի չափով ծախս: Ծրագրով նախատեսվում է 2008 թվականի հունվարի 1-ից Հայաստանի զոհված ազգային հերոսների ընտանիքներին նպաստի նշանակման և վճարման լիազորությունը փոխանցել սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին: Ծրագրով նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 6, յուրաքանչյուր ընտանիքին տրվող նպաստի չափը՝ 200.0 հազ. դրամ:

-«Թաղման նպաստի վճարում առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկի մահվան դեպքում» ծրագրով ծախսերը կկազմեն 5.4 մլն դրամ՝: Աճը 2007թ. բյուջեի նկատմամբ կազմում է 1.1 մլն. դրամ (2007թ.՝ 4.3 մլն. դրամ), պայմանավորված Հայաստանի Հանրապետություն նվազագույն աշխատավարձի կանխատեսվող չափի բարձրացմամբ (թաղման նպաստ վճարվում է գործազրկության նպաստի եռապատիկ չափով):

-Թաղման նպաստի վճարում աշխատող քաղաքացիների մահվան դեպքում ծրագրով նախատեսվում է 17.5 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

Ընտանիքի անդամներ և զավակներ

-«Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն» ծրագրով ծախսերը կկազմեն 29408.0 մլն դրամ՝ 2007 թվականի 26429.8 մլն դրամի դիմաց: Աճը 2007թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 2978.2 մլն. դրամ, պայմանավորված վառելիքի ծախսերի նախատեսմամբ՝ 1200.0 հազ. դրամ և ընտանեկան նպաստի համակարգում ընդգրված ընտանիքներում երրորդ և ավելի երեխա ծնվելու կապակցությամբ յուրաքանչյուր երեխայի համար միանվագ նպաստի չափի բարձրացմամբ 100.0 հազ. դրամով (2007թ.՝ 200.0 հազ. դրամ) նպաստառու ընտանիքների թվի նվազման պայմաններում 8.8 հազ. ընտանիքով (2007թ. 125.0 ընտանիք) բարձրացնելով նպաստի միջին ամսական չափը 3.6 հազ. դրամով (2007թ. 17.5 հազ. դրամ):

-«Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ» ծրագրով նախատեսվում է 217.9 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» ծրագրով նախատեսվում է 1,335.8 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 1,326.0 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 9.8 մլն. դրամով, պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնված վերջին երեք տարիների ծնելիության միջին աճի տեմպը՝ 0.4%, պահպանվել է 2007թ. հաստատված միանվագ դրամական նպաստի չափը՝ 35 հազ. դրամ, կանխատեսվում է, որ 2008 թվականին այդ նպատակով սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ կդիմեն 37713 մարդ (2007թ.՝ 37437 մարդ) և արդյունքում ծախսերը կկազմեն 1,320.0 մլն. դրամ: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման փոստային ծառայությունների ձեռք բերման նպատակով նախատեսվում է դրամական միջոցներ փաստացի վճարումների 1.2 % -ի չափով, որը կազմում է 15,8 մլն դրամ:

-«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով պետական աջակցություն ՀՀ ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված երեխաների տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներին ծրագրով նախատեսվում է 1,374.6 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 1,268.1 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 106.5 մլն. դրամով, պայմանավորված «Առանց

ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, որով նախատեսված է, որ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացնող մասնագիտացված մանկատների աշխատողների ամսական աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված չափի եռապատիկից, որի նկատմամբ սահմանվում է նաև հավելավճար՝ աշխատողի տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) 50 տոկոսի չափով՝ 99.6 մլն. դրամ, վառելիքի ծախսերի ավելացմամբ՝ 3.2 մլն. դրամ և առանձին հոդվածների ծախսերի ճշտմամբ՝ 3.7 մլն. դրամ:

-«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին ծրագրով նախատեսվում է 416.6 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 379.3 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 37.3 մլն. դրամով, պայմանավորված ծրագրի շրջանակներում բնակարանների գնման համար նախատեսված միջին գնի՝ 5.7 մլն.դրամի փոփոխմամբ, որի արդյունքում մեկ բնակարանի միջին գինը նախատեսվել է 6.7 մլն.դրամ, ինչպես նաև գուքի ձեռք բերման գնի փոփոխմամբ՝ 950.0 հազ. դրամից 964.9 հազ. դրամ, պահմանելով 2007թ. նախատեսված շահառուների թվաքանակը՝ 50 շրջանավարտ:

-«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում պետական աջակցություն մանկական խնամակալական կազմակերպություններին բեռնաթափման նպատակով ծրագրով նախատեսվում է 416.6 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 379.3 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 2.6 մլն. դրամով, պայմանավորված տրանսպորտային ծախսերի մասով՝ 1.0 մլն. դրամ, ուղղակի աշխատուժի բեռնաթափման մասով՝ 1.0 մլն. դրամ, ծրագրի կառավարման,ուղղակի աշխատուժի կանխարգելման մասով՝ 0.2-ական մլն. դրամ ավելացմամբ: 2008թ. նախատեսվում է Լոռու մարզում 40 երեխաների տեղավորում կենսաբանական ընտանիքներ և 10 երեխայի հաստատություն տեղավորելու կանխարգելում, պահպանելով 2007թ. բեռնաթափման ենթակա երեխաների թվաքանակը:

-«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության տրամադրման նպատակով պետական աջակցություն ՀՀ ԱՍՀՆ հանձնված «Երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ներին ծրագրով նախատեսվում է 132.8 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 130.7 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 2.1 մլն. դրամով, պայմանավորված վառելիքի ծախսերի 0.4 մլն. դրամով ավելացմամբ և 2008թ. ՄԺԾԾ հաստատված առանձին հոդվածների գծով ծախսերի աճով (սպասարկվող երեխաների կրթական աշխատանքները կազմակերպելու համար սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին գրենական պիտույքների, խաղալիքների և այլ նյութերի ապահովման ու տրանսպորտային ծառայությունների և գործուղման ծախսերի մասով):

-«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության իրականացման նպատակով պետական աջակցություն ՀՀ ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություն հանդիսացող ՊՈԱԿ-ներին» ծրագրով նախատեսվում է 861.0 մլն դրամի չափով ծախս: Ծրագիրը ՀՀ կրթության և գիտության ոլորտից տեղափոխվել է ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտ (Հիմք՝ ՀՀ կառավարության 08.09.05թ. N1646-Ն, 20.07.07թ.N890-Ն, 19.08.07թ. N923-Ն որոշումներ):

Ծախսերի հաշվարկման հիմքում դրվել են ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող ՀՀ ԱՍՀՆ հանձնված ՊՈԱԿ-ների ծախսերի հաշվարկման սկզբունքը, միաժամանակ հաշվի է առնվել նաև այն, որ երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության 7 հաստատություններում խնամվելու են դրանցում և վերակազմակերպված մյուս կազամակերպությունների միայն գիշերող երեխաները, ինչպես նաև այդ հաստատություններ ընդունվելու չափորոշիչներին համապատասխանող սոցիալապես անապահով այլ երեխաներ ու կազմակերպության գործունեության բնույթը փոխվելու կապակցությամբ առաջացած լրացուցիչ ծախսերի պահանջը, մասնավորապես՝ որոշ կազմակերպությունների երեխաներին հանրակրթական դպրոց տանել-բերելու համար:

-«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում պետական աջակցություն «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության երեխաների խնամքի չորս ցերեկային կենտրոններին ծրագրով նախատեսվում է 51.3 մլն դրամի չափով ծախս:

Ծրագրով նախատեսվում է փոխհատուցել կենտրոնի 84 աշխատողների համար աշխատավարձի և պարտադիր սոցիալական վճարներ հոդվածներով հաշվարկված գումարները, որի նպատակն է կենտրոն այցելող 515 հաշմանդամ երեխաների սպասարկման կազմակերպումը, 600 հաշմանդամ երեխաներին սոցիալ-հոգեբանական խորհրդատվության տրամադրումը Տավուշի մարզի՝ Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան և Բերդ տարածաշրջաններում:

-«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման հետ կապված ծախսեր ծրագրով նախատեսվում է 22.1 մլն դրամի չափով ծախս: Հաշվարկների հիմքում դրվել է «Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող ՀՀ ԱՍՀՆ հանձնված ՊՈԱԿ-ների ծրագրով մեկ երեխայի հաշվով կատարված ծախսերի հաշվարկման սկզբունքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձի չափով խնամատար ծնողի աշխատանքի վարձատրությունը:

-Մարդասիրական օգնության կարգով ստացվող պարենամթերքի բաշխման ծառայությունների ձեռքբերում ծրագրով նախատեսվում է 54.9 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-«Սոցիալական աջակցություն» ծրագրի շրջանակներում սոցիալապես անապահով քաղաքացիներին կամ ընտանիքներին դրամական օժանդակություն հրատապ օգնության համար ծրագրով նախատեսվում է 13.4 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 8.3 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 3.6 մլն. դրամով, պայմանավորված դրամական օգնություն ստացող քաղաքացիների թվաքանակի ավելացմամբ, տարվա կտրվածքով՝ 1700 մարդու համար (2007թ. 1178 մարդու դիմաց) պահպանելով դրամական օգնության միջին չափը՝ 7000 դրամ:

-«Փոխհատուցում զոհված (մահացած) զինծառայողների երեխաներին բուհերում վճարովի ուսուցման համար» ծրագիրը ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտից տեղափոխվել է ՀՀ կրթության և գիտության ոլորտ:

-«Միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ ՀՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին» ծրագրի ծախսը կազմում է 130.0 մլն դրամ (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-Վարժական հավաքների և զինծառայության և փրկարար ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 370.0 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճում են շուրջ 155.0 մլն.դրամ, որը պայմանավորված է ՀՀ կառավարության 22.09.06թ. N1355-Ն և 22.12.06թ. N1828-Ն որոշումներում կատարված փոփոխություններով, որով վարժական հավաքների, զինծառայողների ու փրկարար ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի՝ փոխհատուցման համար նախատեսված գումարների ավելացմամբ՝ հուղարկավորության համար 475.0 հազ. դրամով (2007թ.՝ 225.0 հազ. դրամ), իսկ գերեզմանների բարեկարգման համար՝ 950.0 հազ. դրամ (2007թ.՝ 450.0 հազ. դրամ):

-«ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման» ծրագրով նախատեսվում է հատկացնել 1.1 մլն դրամ (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

Գործազրկություն

-«Զբաղվածության ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագրով նախատեսվում է 700.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-«Զբաղվածության ծառայություններ» ծրագրի շրջանակներում աշխատաշուկայում հավասարակշռության ստեղծման նպատակով պետական աջակցություն «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ին ին ծրագրով նախատեսվում է 13.8 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 7.7 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 6.1 մլն. դրամով, պայմանավորված կենտրոնի աշխատողների թվաքանակի ավելացմամբ՝ 3 հաստիքով (2007թ. 6 հաստիքային միավոր) և դրա հետ կապված առանձին հոդվածների գծով ծախսերի ավելացմամբ և շենքի վարձակալության վճարի աճով՝ այն նախատեսվել է 523.4 հազ. դրամ (2007թ. 246.0 հազ. դրամ):

-«Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինասական աջակցություն» և «Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերակագնման կազմակերպում» ծրագրերով նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 2.2 և 5.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին ծրագրով նախատեսվում է հատկացնել 48.9 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 25.1 մլն. դրամ, պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի կանխատեսվող չափի բարձրացմամբ:

-Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում ծրագրով նախատեսվում է 77.0 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 16.8 մլն. դրամ, պայմանավորված կանխատեսվող մեկ մարդու մասնագիտական ուսուցման ծախսի աճով՝ 30.0 հազ. դրամի չափով, թվաքանակի 53 մարդով նվազման պայմաններում՝ (2007թ.՝ 753 մարդ):

-«Գործազկության նպաստի վճարում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 2610.0 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 1171.6 մլն. դրամ (2007թ. ճշտված բյուջեով 1438.4 մլն. դրամ) պայմանավորված գործազրկության նպաստ ստացողների թվաքանակի աճով՝ 4511 մարդ (2007թ. ճշտված բյուջեով 9989 մարդ) և Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի կանխատեսվող չափի բարձրացմամբ, որի

արդյունքում գործազրկության նպաստի ամսական չափը կկազմի 15000 դրամ (2007թ.՝ 12000 դրամ):

-«Առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 66.0 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 38.4 մլն. դրամ (2007թ. ճշտված բյուջեով 27.6 մլն. դրամ) պայմանավորված մասնագիտական ուսուցում ստացողների թվաքանակի աճով՝ 232 մարդ (2007թ. 368 մարդ) և ուսուցման գնի բարձրացմամբ՝ 110.0 հազ.դրամով (2007թ.՝ 75.0 հազ.դրամ):

-«Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 1.2 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 0.1 մլն. դրամ (2007թ.՝ 1.1 մլն. դրամ) պայմանավորված այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ գործազուրկներին նյութական ծախսերի հատուցման ծախերի ավելացմամբ՝ 60780 դրամ (2007թ.՝ 54900 դրամ):

-«Առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերակագնման կազմակերպում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 9.8 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ նվազում են 4.8 մլն. դրամ (2007թ.՝ 14.6 մլն. դրամ) պայմանավորված մասնագիտական ուսուցում ստացող հաշմանդամների թվաքանակի նվազմամբ 80 մարդով (2007թ.՝ 150 մարդ):

-Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 1.7 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ նվազում են 5.3 մլն. դրամ (2007թ.՝ 7.0 մլն. դրամ) պայմանավորված վերամասնագիտացում ստացող կենսաթոշակառուների թվաքանակի նվազմամբ 62 մարդով (2007թ.՝82 մարդ):

-«Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 5.0 մլն դրամի չափով ծախս: Սույն ծրագրի նպատակն է աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպման համար «Աշխատաշուկայի ուսումնասիրություն գյուղական վայրերում» թեմայով ուսումնասիրության կատարումն է, որը վեր է հանելու գյուղական վայրերում հողի սեփականաշնորհումից օգտված անձանց զբաղվածության խնդիրները:

Բնակարանային ապահովում

-«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանի տրամադրման հետ կապված ծախսեր ծրագրով նախատեսվում է 124.0 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 85.5 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 38.5 մլն. դրամով, պայմա-

նավորված բնակարանների գների շարունակական աճի հետ՝ նախատեսվել է 6.2 մլն. դրամ (2007թ.՝ մեկ բնակարանի միջին գինը 5.7 մլն. դրամ) 20 շահառուի համար (2007թ.՝ 15 շահառու):

-«Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բակարանային պայմանների բարելավման համար» ծրագրով նախատեսվում է հատկացնել 3000.0 մլն դրամ (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-«Փախստականներին բնակարանով ապահովելու համար սերտիֆիկատների ձեռքբերում», «Գյումրի և Սպիտակ քաղաքներին՝բնակարաններ ձեռք բերելու համար սերտիֆիկատների տրամադրում» և «Գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն» ծրագրերով նախատեսվում է հատկացնել 815.0-ական մլն դրամ (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)

-«Տարեցներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման նպատակով պետական աջակցություն «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին ծրագրով նախատեսվում է 43.4 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 41.2 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 2.1 մլն. դրամով, պայմանավորված վառելիքի ծախսերի ավելացմամբ՝ 0.9 մլն. դրամ և առանձին հոդվածներով ծախսերի ճշտմամբ՝ 1.2 մլն. դրամ:

-Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց միանվագ դրամական փոխհատուցում ծրագրով նախատեսվում է 2.6 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-«ՎՏԲ- Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ծրագրով նախատեսվում է 1100.0 մլն դրամի չափով ծախս, որի աճը 2007թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 100.0 մլն. դրամ:

-Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ ծրագրով ծախս է նախատեսվել 14.0 մլն դրամ (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-«Պետական աջակցություն «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ին» ծրագրով նախատեսվում է հատկացնել 9.7 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճում են 1.6 մլն. դրամով (2007թ.՝ 8.1 մլն. դրամ) պայմանվորված 2008թ. նախատեսվող ՀՀ նվազագույն

ամսական աշխատավարձի 25.0 հազ. դրամ սահմանելու հետ կապված աշխատակիցների աշխատավարձի չափի բարձրացմամբ և փախստականների համար նախատեսված պարտադիր բուժզննման գնի աճով:

-«Փախստականի կարգավիճակ հայցողին միանվագ նպաստ» ծրագրով ծախս է նախատեսվել 0.5 մլն դրամ (պահպանվել է 2007թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-«Վետերանների պատվովճարներ» ծրագրով նախատեսվում է հատկացնել 763.6 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ նվազում են շուրջ 100.0 մլն.դրամ, որը պայմանավորված է պատվովճար ստացողների թվաքանակի նվազմամբ՝ 825 մարդ (2007թ.՝ 7125 մարդ), անփոփոխ է թողնվել վետերանների պատվովճարի ամսական չափը՝ 10.0 հազ. դրամ:

-«Հայրենական Մեծ Պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձածներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում» ծրագրով ծախս է նախատեսվել 2322.3 մլն դրամ: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ նվազում են շուրջ 155.0 մլն.դրամ, որը պայմանավորված է դրամական օգնություն ստացողների թվաքանակի նվազմամբ՝ 969 մարդով (2007թ.՝ 30029 մարդ), անփոփոխ է թողնվել 2007թ. պետական բյուջեով նախատեսված դրամական օգնության ամսական չափերը:

Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)

- Կենսաթոշակային ապահովության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի ապարատի պահպանման համար 2008թ. համար ծախս է նախատեսվել 2191.0 մլն դրամ, որից կապիտալ ծախսը կազմում է 102.1 մլն. դրամ: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճում են 437.1 մլն.դրամ (2007թ.՝ 1753.9 մլն. դրամ), որը պայմանավորված է աշխատավարձի ֆոնդի 9% չափով բարձրացմամբ, կապի ծառայությունների, նորմատիվներով հաշվարկված էլեկտրաէներգիայի և տարածքի վարձակալության գների փոփոխությամբ պայմանավորված սպասվելիք ծախսերի աճով:

-«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում հաշմանդամների տվյալների տեղեկատվական համակարգի շահագործման և սպասարկման նպատակով պետական աջակցություն «Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին ծրագրով նախատեսվում է 17.8 մլն. դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճում են 1.0 մլն.դրամ (2007թ.՝ 16.8 մլն դրամ), որը պայմանավորված է աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ՝ 12.7%-ով:

-«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում «ԲՍՓ ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերում» ծրագրով նախատեսվում է 7.1 մլն

դրամի չափով ծախս (2007թ.՝ 4.7 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 2.4 մլն. դրամով, պայմանավորված պարբերական մրցույթում գների աճով, 2007թ. պետական բյուջեով հաստատված չափաքանակի միևնույն ծավալային ցուցանիշների պահպանման պայմաններում (330190 հատ):

-«Զբաղվածության ծառայություններ» ծրագրի շրջանակներում գործազուկների տվյալների տեղեկատվական համակարգի /«Գործ» համակարգ/ շահագործման և սպասարկման նպատակով պետական աջակցություն «Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրո ՓԲԸ-ին ծրագրով նախատեսվում է 20.7 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճում են 1.2 մլն.դրամ (2007թ.՝ 19.5 մլն դրամ), որը պայմանավորված է աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ՝ 12.7%-ով:

-«Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Սոցիալական ապահովության քարտերի համակարգի ներդրման, տեղեկատվական բազայի վարման և շահագործման նպատակով» պետական աջակցություն «Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն ՓԲԸ–ին ծրագրով նախատեսվում է 150.2 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճում են 8.1 մլն.դրամով (2007թ.՝ 142.1 մլն դրամ), որը պայմանավորված է աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ՝ 12.7%-ով և ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թ. հոկտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-649 որոշման շրջանակներում սոցիալական քարտերից հրաժարվող քաղաքացիներին առաջարկված այլընտրանքային լուծումների տեխնիկական ապահովմամբ:

-«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Մանուկ» տեղեկատվական համակարգի շահագործման և վարման նպատակով պետական աջակցություն «Նորք»տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին ծրագրով նախատեսվում է 15.2 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճում են 1.0 մլն.դրամով (2007թ.՝ 14.3 մլն. դրամ), որը պայմանավորված է աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ 12.7%-ով և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառման տեղեկատվական համակարգի ստեղծման և շահագործման ու գիշերօթիկ խնամքի հաստատություններում խնամվող երեխաների հաշվառման տեղեկատվական համակարգի ստեղծմամբ և շահագործմամբ:

-«Սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության վճարման հետ կապված փոստային ծառայությունների ձեռքբերում ծրագրով նախատեսվում է 352.7 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 316.9 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 35.8 մլն. դրամով, պայմանավորված «Ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնություն» ծրագրով նախատեսված ծախսերի ավելացմամբ:

-«Սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում ընտանեկան նպաստի տվյալների տեղեկատվական համակարգի շահագործման և սպասարկման նպատակով

պետական աջակցություն «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին ծրագրով նախատեսվում է 31.0 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճում են 1.8 մլն.դրամով (2007թ.՝ 29.2 մլն դրամ), որը պայմանավորված է աշխատողների աշխատավարձի 12.7%-ով բարձրացմամբ:

-«Սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում ՍԾՏԳ ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերում ծրագրով նախատեսվում է 11.5 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 11.7 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ նվազել են 0.2 մլն. դրամով, պայմանավորված ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության համակարգում ընդգրկված և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների թվաքանակի նվազմամբ և առկա փաստաթղթերի քանակից ելնելով 2008թ. համար հաշվարկված անհրաժեշտ 195900 միավորով նվազմամբ (2007թ.՝ 960900 միավորի դիմաց), պարբերական մրցույթի արդյունքներում ձևավորված ձևաթղթերի գների աճի պայմաններում:

-«Սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում մինչև երկու տարեկան երեխայի խնամքի և նրա ծննդյան միանվագ նպաստների տվյալների «Նպաստ_2» համակարգի շահագործման և սպասարկման նպատակով պետական աջակցություն «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին ծրագրով նախատեսվում է 9.1 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճում են 0.5 մլն.դրամով (2007թ.՝ 8.6 մլն դրամ), որը պայմանավորված է աշխատողների աշխատավարձի 12.7%-ով բարձրացմամբ:

-Մեթոդաբանական ձեռնարկների մշակման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական աջակցություն «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին ծրագրով նախատեսվում է 63.3 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 59.0 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 4.3 մլն. դրամով, որը պայմանավորված նրանով, որ հաշվարկներում ներառվել են միայն ազգային ինստիտուտի պահպանության և հասարակական կարգի ապահովման համար ծախսը՝ 1.6 մլն. դրամ և ձեռքբերված տեխնիկայի համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի ծախսերի ավելացումը՝ 2.5 մլն. դրամ:

Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում ծրագրով նախատեսվում է 273.1 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 148.4 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 124.7 մլն. դրամով, որը պայմանավորված է Երևանի քաղաքապետարանի սոցիալական ծառայությունների աշխատողների աշխատավարձի չափերը ՀՀ մարզպետարանների սոցիալական ծառայությունների աշխատողների աշխատավարձերի չափերին հավասարեցնելու հետ:

-«Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսվում է 15.3 մլն դրամի չափով ծախս: Ծրագրի նպատակն է սոցիալական ապահովության ոլորտի

պետական քաղաքականության մասին հասարակայնությանը տեղեկացնելը, նախարարության շահառու համարվող խոցելի խմբերի իրազեկման մակարդակի բարձրացումը, աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտին վերաբերող հարցերի, բարեփոխումների և յուրաքանչյուր ուղղությամբ նախանշված ծրագրերի լուսաբանման բարելավումը:

-Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվական ծառայություն-ների գնման, գծով ծրագրի շրջանակներում պետական աջակցություն «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ին ծրագրով նախատեսվում է 35.5 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 39.4 մլն դրամ): Ծախսերի նվազումը 2007թ. պետական բյուջեի նկատմամբ շուրջ 4.0 մլն. դրամով պայմանավորված է կապիտալ ակտիվների ձեռքբերման ծախսերի նվազմամբ (2007թ. ձեռք են բերվել 2 սերվերներ), միաժամանակ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության նվազա-գույն ամսական աշխատավարձի 2008թ. նախատեսվող բարձրացումը՝ աճել է աշխատավարձի ֆոնդը:

-«Ժամանակավոր անաշխատունակության նպաստ» ծրագրով նախատեսվում է 2242.8 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 2128.7 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 114.4 մլն. դրամով, պայմանավորված նրանով, որ պահպանվել է ժամանակավոր անաշխատունակության 2006 թվականների փաստացի օրերի աճի տեմպը 2005թ. փաստացիի նկատմամբ՝ 1.7%, արդյունքում օրերի թիվը 2008թ. կկազմի 860889 օր (2007թ. բյուջեով նախատեսված 846499օր x 1.7%) և ժամանակավոր անաշխատունակության միջին օրական նպաստի չափի աճի տեմպը՝ 3.6%, արդյունքում միջին օրական նպաստի չափը կկազմի 2605.2 դրամ (2007թ. բյուջեով նախատեսված 2514.7 դրամ x 3.6 %):

-«Հղիության և ծննդաբերության նպաստ» ծրագրով նախատեսվում է 1760.2 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 1513.7 մլն դրամ): Ծախսերը 2007 թվականի համեմատությամբ աճել են 246.5 մլն. դրամով, պայմանավորված նրանով, որ պահպանվել է հղիության և ծննդաբերության 2006 թվականների փաստացի օրերի աճի տեմպը 2005թ. փաստացիի նկատմամբ՝ 7.1%, արդյունքում օրերի թիվը 2008թ. կկազմի 904781 օր (2007թ. բյուջեով նախատեսված 844800 օր x 7.1%) և հղիության և ծննդաբերության միջին օրական նպաստի չափի աճի տեմպը՝ 8.6 %, արդյունքում միջին օրական նպաստի չափը կկազմի 1945.4 դրամ (2007թ. բյուջեով նախա-տեսված 1791.8 դրամ x 8.6 %):

«Այլ օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվում է մլն. դրամի չափով ծախս, որով նախատեսվում է

-«Այլ օբյեկտների շինարարություն» ծրագրով նախատեսվում է 478.2 մլն. դրամի չափով ծախս, որով նախատեսվում է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի նոր ննջարանային և Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցում:

-«Այլ օբյեկտների հիմնանորգում» ծրագրով նախատեսվում է 110.8 մլն. դրամի չափով ծախս, որով նախատեսվում է «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հանրակացարանային մասնաշենքի, «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վետերան օթևան» կացարանի, ՀՀ աշխատանքի և

սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՀՀ ԲՍՓ գործակալության մանկական և հոգեբուժական մասնագիտացված ԲՍՓՀ-ների կողմից զբաղեցված շենքի հիմնանորոգում:

Բացի այդ, 2008 թվականին սոցիալական ապահովության ոլորտում Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվում է իրականացնել նաև

1. Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն),

Ծրագրի նպատակն է բնակչության աղքատ և խոցելի խավի սոցիալական պաշտպանվածության բարձրացումը: Ծրագիրն ուղղված է ժամանակակից սոցիալական ապահովության կառավարման համակարգի ստեղծմանը, որը հնարավորություն կտա ոչ միայն պետական սոցիալական ծրագրերի արդյունավետ կառավարման և վերահսկողության իրականացման համար, այլ նաև հիմք կհանդիսանա աղքատ ընտանիքներին և բնակչության առանձին խմբերին բարելավված սոցիալական ծառայություններ մատուցելու համար:

Ծրագիրը համաձայն վարկային համաձայնագրի նախատեսվում էր ավարտել 2007 թվականի դեկտեմբերի 31-ին, սակայն ծրագրի շրջանակներում կնքված որոշ պայմանագրերի գծով վճարումները նախատեսված է իրականացնել 2008 թվականի ընթացքում՝ կապված պայմանագրերով նախատեսված մատակարարվող ապրանքների, իրականացվող աշխատանք-ների և ծառայությունների ընդունման և վճարման համար պահանջվող ժամկետներից:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին, այդ թվում՝ տեղեկատվական հոսքերի կորպորատիվ ցանցի ստեղծում և ներդրում, ոլորտում կառավարման տեղեկատվական համակարգի կատարե-լագործում, զբաղվածության ծառայությունների բարելավում, հաշմանդամ գործազուրկների համար աշխատանքային վերականգնման կենտրոնների ստեղծում, գործազուրկ երիտասարդ-ների համար մասնագիտական կողմնորոշման ծառայությունների մատուցում, ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեխնիկական հզորացում, կենսաթոշակային արդիական համակարգի ստեղծման նպատակով կենտրոնացված գրանցման համակարգի ստեղծում, սոցիալական աջակցության կենտրոնական և տեղական բաժանմունքների աշխատակիցների ուսուցում, գործազուրկների վերապատրաստման դասընթացների կազմակերպում, խորհրդատվական և ուսուցողական այլ աշխատանքների իրականացում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և կենսաթոշակային ապահովության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 10 և N 11 աղյուսակներում:

Սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2006 թվականի փաստացի և 2008 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված են սույն բացատրագրի N14 աղյուսակում:

Զբաղվածության կարգավորման, Երեխաների իրավունքների պաշտպանության Հաշման-դամների սոցիալական պաշտպանության 2008 թվականի տարեկան և 2007 թվականի պետա-կան ծրագրերը արտացոլված են սույն բացատրագրի համապատասխանաբար NN 4-րդ, 5-րդ և 6-րդ հավելվածներում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախա-րարության և կենսաթոշակային ապահովության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի գծով նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N 10 և N 11 աղյուսակներում:

<u>Ջրային տնտեսության ոլորտին</u> ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 8,424.200.0հազ. դրամ (առանց նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) ՀՀ 2007թ. պետական բյուջեով նախատեսված 8305.000.0 հազ. դրամի դիմաց:

Ոլորտում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

«Որոտան-Արփա-Սևան ԹՇ վարչություն» ՊՀ-ի պահպանում, Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործում, տեխնիկական վիճակի բարելավում և նորոգում» «ՈԱՍ ԹՇՎ» ՊՀ-ի պահպանման և «Որոտան-Արփա-Սևան» թունելի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 311.790.0 հազ դրամ:

ՀՀ 2007թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է սուբսիդիա որից՝

ա) *Ոռոգման համակարգի ընկերությունների* համար՝ 4952.3 մլն դրամ: Նշված գումարը սահմանվել է ՀՀ կառավարության 08.02.2007թ. «Ջրօգտագործողների ընկերությունների պետա-կան ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնադրույթները և մատակարարված ոռոգման ջրի կորուստների նորմաները հաստատելու մասին» N<u>0</u> 188-Ն որոշման համաձայն, որի հիմքում ընկած է «Հայաստանի Հանրապետության ոռոգման հատվածում ֆինանսական և կառուցվածքային բարեփոխումների իրականացում» խորհրդատվական աշխատանքների շրջանակներում հաշվարկված սուբսիդիայի մեծությունների վերաբերյալ առաջարկությունները:

բ) «Հ*այջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին՝ 1,213.53 մլն դրամ:* Նշված գումարը նախատեսվել է ՀՀ կառավարության 25.06.04թ. N<u>0</u> 942-Ն որոշմամբ, համաձայն որի հաստատվել է ընկերության գործադիր մարմնի լիազորությունները մասնավոր կառավարչին փոխանցելու մրցույթում հաղթող ճանաչված ֆրանսիական «Սաուր» կազմակերպության մրցույթային արդյունքները: Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները մասնավոր կառավարչին փոխանցելու կառավարման պայմանագրի համաձայն, կանխիկ դրամի բոլոր կարիքները հոգալու համար (որոնք չեն կարող ծածկվել հավաքագրված հասույթներից) կտրամադրվեն գործառնական

սուբսիդիաներ կառավարիչի կողմից ներկայացված համապատասխան հիմնավորումների հիման վրա:

գ) «*Նոր Ակունք» ՓԲԸ-ի սուբսիդավորում՝* 73.5 *մլն դրամ:* Նշված գումարը նախատեսվել է ՀՀ կառավարության 05.08.2004թ. N0 1141-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն, ըստ որի ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև ֆինանսական համագործության շրջանակներում 21.06.2000թ. և 12.09.2001թ. կնքված վարկային պայմանագրի շրջանակներում տրամադրված միջոցների օգտագործումից հետո լրացուցիչ ճեղքվածք առաջանալու դեպքում համապատասխան հիմնավորող փաստաթղթերի և հաշվարկների հիման վրա այն պետք է մարվի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում (333.0 մլն դրամ)

2008թ բյուջեի նախագծով կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 333.0 մլն դրամ: Ծրագրի իրականացման արդյունքում կմաքրվեն և կվերանորոգվեն 309 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցեր, որի հետևանքով կբարելավվի շուրջ 8000 հա ոռոգելի գյուղատնտեսական հողատեսքերի մելիորատիվ վիճակը:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ (87,0 մլն դրամ)

Ծրագրային միջոցառումները 2004թ. իրականացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության՝ «Մելիորացիա» ՓԲԸ կողմից, որի կառավարման լիազորությունները համաձայն ՀՀ կառավարության 30.09.04թ. N0 1348-Ն որոշման 2005 թվականի հունվարի 1-ից վերապահվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին: Ծրագրով նախատեսվում է իրականացնել.

- հանրապետության գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշում՝20,0 մլն դրամ,

- կոլեկտորադրենաժային ցանցերի շահագործման ծավալային աշխատանքներ՝ 48.4 մլն դրամ,

- ցանցերի տեխնիկական վիճակի և մաքրման, նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկման աշխատանքներ՝ 18.6 մլն դրամ:

Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի պահպանում (14.0 մլն դրամ) Նշված հանձնաժողովը մշտապես գործող մարմին է, որ ստեղծվել է ՀՀ ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 08.05.03թ. «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և գննման կարգը հաստատելու մասին» N0 686 որոշման և ՀՀ վարչապետի 27.05.2005թ. N0 024-3037 հանձնարարականի համաձայն՝

ՀՏԿ-ների գննման,

ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության,

տվյալ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով:

Ոռոգման համակարգերի հիմնանորոգում (1407.9 մլն դրամ) Ծրագիրը ներկայացվել է համաձայն ԱՄՆ-ի Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի և ՀՀ կառավարության միջև վավերացրած Հազարամյակի մարտահրավեր Համաձայնագրի, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը պարատավորվել է իրականացնել ոռոգման համակարգերի ամենամյա նորոգումներ: ՀԲ-ի պատվերով իրականացված «Ոռոգման համակարգերի զարգացում» վարկային ծրագրի շրջանակներում մշակվել է «Պետական սեփականություն հանդիսացող ոռոգման և դրենաժային համակարգերի տեխնիկական զննման ու 2007-2009 թվականների անհրաժեշտ հիմնանորոգման աշխատանքների արժեքների հաշվարկ» հաշվետվությամբ ներկայացվել է 4417.7 մլն դրամ հիմնանորոգման գնահատում՝ 2008թ. համար նախատեսվել է 1407.9 մլն դրամ:

ՀՀ 2008թ. պետական բյուջեով նախատեսվում է իրականացնել հետևյալ նոր ծրագիրը.

Մեծամորի ռեզերվային հորի կառուցման ծրագիր (31,2 մլն.դրամ)

Ծրագրով նախատեսվում է իրականացնել Մեծամորի ռեզերվային հորի կառուցում, որի արդյունքում մոտ 68 հազ. մարդ կապահովվի անհրաժեշտ քանակի (միջինը 70լ/անձ/օր) անխափան ջրամատակարարամբ:

Ոլորտում ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվող ծախսերի համեմատությունը՝ ՀՀ 2006թ. բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2007թ. բյուջետային տարվա համար հաստատված և/կամ ճշտված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 5 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 3 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N 3 աղյուսակում:

Բացի այդ 2008 թվականին ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

1. <u>Արմավիրի մարզի կոյուղու համակարգի պարզարանային կայանի կառուցման ծրագիր (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ)</u>

Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչությանը էկոլոգիապես մաքուր, անխափան, անհրաժեշտ քանակի և տնտեսապես արդյունավետ ջրամատակարարման ապահովում, ջրահեռացման իրականացում, առանց վնաս հասցնելու սպասարկման տարածքի ազգաբանակչության առողջությանը:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել Արմավիր և Մեծամոր քաղաքների կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման աշխատանքներ, որը կնպաստի շրջակա միջավայրի վրա ազդեցության բարելավմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև Մեծամորի ռեզերվային հորի կառուցման աշխատանքներ, ինչը կապահովի սպասարկման տարածքի ազգաբնակչությանն անհրաժեշտ քանակի ջրամատակարարմամբ:

2. Լոռու մարզի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ)

Ծրագրի նպատակն է՝ Լոռու մարզի բնակչությանը (Վանաձոր քաղաքի և Լոռու մարզի 16 գյուղական բնակավայրերի) մաքուր, հիգիենիկ խմելու ջրի անընդմեջ մատակարարումը, որը կհամապատասխանի պահանջարկին և կապահովի տնտեսական արդյունավետությունը, հոսքային ջրերի հեռացման այնպիսի համակարգի կառուցումը, որը վտանգ չի սպառնա բնակչության առողջությանը:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է ձեռնարկել անհապաղ միջոցառումներ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թերությունների վերացման, ինչպես նաև համակարգի ընթացիկ և կապիտալ վերանորոգման ու վերակառուցման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ, որի արդյունքում ակնկալվում է 24-ժամյա խմելու որակյալ ջրամատակարարման անխափան ապահովում:

3. Շիրակի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ)

Ծրագրի նպատակն է՝ Շիրակի մարզի բնակչությանը (Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի 36 գյուղական համայնքների) մաքուր, հիգիենիկ խմելու ջրի անընդմեջ մատակարարումը, որը կհամապատասխանի պահանջարկին և կապահովի տնտեսական արդյունավետությունը, հոսքային ջրերի հեռացման այնպիսի համակարգի կառուցումը, որը վտանգ չի սպառնա բնակչության առողջությանը:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է ձեռնարկել անհապաղ միջոցառումներ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թերությունների վերացման, ինչպես նաև համակարգի ընթացիկ և կապիտալ վերանորոգման ու վերակառուցման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

4. Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է Երևան քաղաքին ապահովելու շուրջօրյա հուսալի ջրամատակարարմամբ՝ միաժամանակ նվազեցնելով կեղտաջրերի բացթողումներից առաջացող շրջակա միջավայրի աղտոտումը, այսինքն՝ քաղաքի ընդհանուր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի սկսած բարելավումների շարունակական իրականացում և ընդհանուր արդյունավետության բարձրացում:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել աշխատանքներ էլեկտրաէներգիայի սպառման զգալի կրճատման ուղղությամբ, մասնավորապես անարդյունավետ սարքերի՝ նոր սարքավորումներով փոխարինում, ջրի կորուստների կրճատում, ջրաղբյուրների հուսալիության նպատակով ջրատարների համար քլորացման համակարգերի տեղադրում Գառնի և Արամուս / Կաթնաղբյուր համայնքների համար, քլորացման կայանների շենքերի բարելավում, ներառյալ ջեռուցումը և քլորացման ցիլինդրների բարելավված շահագործման համար սարքավորումները, Ապարանի և Կաթնաղբյուրի ընտրված հորերի պոմ-պերի փոխարինում դրանց ամբողջ համակարգի հիդրավլիկային համապատասխանեցնելու համար, ջրաչափերի տեղադրում հորերի հոսքերը և աշխատանքային ընթացքը հսկելու համար, ինչպես նաև ջուրը աղբյուրներից քաղաքի բաշխիչ ցանց տեղափոխող ջրատարների հուսալիության նպատակով խաչաձև միացումներ զուգահեռ ջրատարների միջև (Արզնի 1 և 2, Արարատյան, Շոր-Շոր, Ապարան, Կաթնաղբյուր):

5. Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է՝ ջրամատակարարման համակարգի բարելավումը, Հայաստանի հանրապետության բոլոր մարզերում (բացառությամբ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի՝ KFW-ի կողմից իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրերում ընդգրկված տարածաշրջանները՝ Արմավիրի, Լոռու, Շիրակի մի շարք բնակավայրեր) կառուցվածքային բարեփոխումների միջոցով ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների առավել արդյունավետ կառավարումը, ծախսվող էլեկտրաէներգիայի կրճատումը, համակարգի ֆինանսական վիճակի առողջացումն ու մասնավոր ներդրողների համար գրավիչ պայմանների ստեղծումը:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում շարունակվելու է գլխամասային կառուցվածքների, ջրատարների, ջրի մաքրման կայանների (ՋՄԿ), օրվա կարգավորող ջրամբարների (ՕԿՋ) բաշխիչ ցանցերի վերանորոգման և գոտիավորման ու նորերի կառուցման, հոսակորուստների հայտնաբերման և վերացման, կապտաժների, ՋՄԿ-ների վերանորոգման, քլորակայանների վերանորոգման, նոր սարքավորումների տեղադրման, նոր քլորակայանների կառուցման, բնակավայրերում կոյուղու ցանցերի վերանորոգման, հնարավորության դեպքում պոմպային համակարգերի ինքնահոսի փոխարինման, պոմպերի փոխարինման, բնակավայրերի ցանցերի գոտիավորման միջոցով շենքային պոմպերի կրճատման, ջրաչափերի տեղադրման, լաբորատորիաների, մեքենասարքավորումների, համակարգիչների, ստուգիչ-չափիչ սարքավորումների և անհրաժեշտ գույքի գնման, ուսուցողական ու հասարակական տեղեկատվությունների կազմակերպման աշխատանքների իրականացումը:

6. Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրերի նպատակն է՝ կենսունակ ոռոգման ենթակառուցվածքի ստեղծմամբ և կառուցվածքային բարեփոխումների իրականացմամբ օժանդակել գյուղական ազգաբնակչու-

թյան կենսամակարդակի բարձրացմանը: Ծրագրի նպատակներից են նաև հանրապետության ոռոգելի հողատարածքների ջրապահովվածության բարելավումը, ոռոգման համակարգերի շահագործման ծախսերի նվազեցումը, ինչպես նաև համակարգում ջրի հաշվառման և կառավարման կատարելագործումը:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում նախատեսվում է վերականգնել առավել հրատապություն պահանջող վթարային կառուցվածքները, մասնավորապես վերակառուցել Արմավիրի մայր ջրանցքի գլխամասը, ոռոգման համակարգերի մեխանիկականից ինքնահոսի անցման շինարարական աշխատանքներ, հիմնադրել ջրօգտագործող ընկերություններ՝ նրանց փոխանցելով ոռոգման կառավարումը և համակարգերի օգտագործումը, պետական կառավարման ներքո թողնելով «Ոռոգում-ջրառ» ՓԲԸ-ի գործառույթները, իրականացնել ներտնտեսային ցանցի վերականգման աշխատանքներ, կառուցվածքային փոփոխություններ իրականացնել և ուժեղացնել «Ոռոգում-ջրառ» ՓԲԸ-ի կառավարումը:

7. Պատվարների անվտանգության ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել այն պատվարների անվտանգությունը, որոնց վթարի հավանականությունը ամենաբարձրն է, ապահովել պատվարների հուսալի շահագործումը, հիմնականում ոռոգման նպատակով օգտագործվող ջրամբարների պատվարների վերականգնումը և պատվարների անվտանգության պահպանման միջոցառումների իրականացումը:

Այդ նպատակով ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել պատվարների շինարարական վերականգնողական աշխատանքներ (մասնավորապես հեղեղային ջրհեռների, ոռոգման և այլ հիմնական կառուցվածքների վերականգնում ջրթողների), անվտանգության ապահովման սարքավորումների դաշտային տեղադրումների գծով աշխատանքներ (մասնավորապես անվտանգության սարքավորությունների տեղադրում պատվարների վրա, վաղ ահազանգային համակարգի տեղադրում ներքին բյեֆի ջրածածկման գոտու բնակավայրերում), ջրամբարները շահագործող կազմակերպության տեխնիկական հագեցվածության ապահովման գծով աշխատանքներ (անհրաժեշտ մոնիտորինգի սարքավորումների, «Կոդան» ռադիոկակայանի և մեքենամեխանիզմների ձեռքբերում) և մնացած պատվարների ուսումնասիրության գծով աշխատանքներ (դաշտային հետազոտություններ թվով 60 պատվարների համար, վթարային իրավիճակների հայտնաբերում, վերականգնողական միջոցառումների մշակում և արժեքների գնահատում):

8. Պատվարների անվտանգության երկրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել այն պատվարների անվտանգությունը, որոնց վթարի հավանականությունը ամենաբարձրն է, ապահովել պատվարների հուսալի շահագործումը,

հիմնականում ոռոգման նպատակով օգտագործվող ջրամբարների պատվարների վերականգնումը և պատվարների անվտանգության պահպանման միջոցառումների իրականացումը:

Այդ նպատակով ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել պատվարների շինարարական վերականգնողական աշխատանքներ թվով 47 ոռոգման պատվարների և հիմնական կառուցվածքների վերականգնում, անվտանգության ապահովման սարքավորումների դաշտային տեղադրման աշխատանքներ (մասնավորապես թվով 56 պատվարների համար չափող և հսկող սարքավորումների և նույն ջրամբարների ջրածածկման գոտում ահազանգման համակարգի (շչակների) տեղադրում), թվով 55 պատվարների համար անհրաժեշտ սարքավորումներ ձեռքբերման և թվով 16 պատվարների գծով մոտեցնող ճանապարհների բարելավման աշխատանքներ:

9. <u>Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)</u>

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարության քաղաքականությանը՝ բարձրացնելու աղքատների և խոցելի խմբերի կենսամակարդակը՝ բարելավելով որակն ու մատչելիությունը և մեծացնել համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների տարածվածությունը աղքատության առավել բարձր աստիճան ունեցող համայնքներում և ամենախոցելի խմբերի համար:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է կենտրոնանալ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ վարկային ծրագրի աշխատանքների շարունակման վրա, այսինքն շարունակել մարզերում առավել ցածր կենսամակարդակ ունեցող համայնքներում սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները:

10. <u>Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրն տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (Ֆրանսիական կառավարության պահուստային ֆոնդ)</u>

Ծրագիրը գործելու է Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր շրջանակներում՝ ջրամատակարարման համակարգի անվտանգության, խմելու ջրի ցանցի օպերատիվ կառավարման և շրջակա միջավայրի բարելավման նպատակով: Ծրագրի շրջանակներում ներդրումը առաջին հերթին ուղղված է Աէրացիա մաքրման կայանի կեղտաջրերի նախնական մաքրման և տիղմի առաջնային մշակման մասի վերականգնմանը:

11. <u>Սևանա լճի բնապահպանական ծրագիր (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ)</u>

Ծրագրի նպատակն է՝ Սևանա լճի և լճի հարակից շրջաններում գտնվող 5 քաղաքային համայնքներից Սևանա լճի ներհոսող կեղտաջրերի մաքրման ու վերամշակման, կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման, ինչպես նաև տարածքներով անցնող ջրահեռացման խողովակների վերանորոգման և փոխարինման միջոցով բնապահպանական խնդիրների բարելավումը:

Միաժամանակ 2008 թվականին ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային դրամաշնորհային ծրագրերը.

1. Համատիրությունների վրա հիմնված քաղաքային ջրամատակարարման և ջրահեռացման կառավարման բարելավման ծրագիր (Ճապոնական սոցիալական զարգացման հիմնադրամ)

2. Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ),

3. Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ):

Գյուղատնտեսության ոլորտի համար (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 7646.4 մլն դրամ 2007 թվականի ճշտված բյուջետային տարում սահմանված՝ 5816.3 մլն դրամի դիմաց (աճը կազմում է 23,9%):

2008 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը, այդ թվում՝

14.02.01. Գյուղատնտեսության բնագավառում հատկացումներն ուղղվելու են.

1. Հողերի ագրոքիմիական հետազոտությունների կատարման, բերրիության բարձրացման միջոցառումներ՝ 42.3 մլն դրամ - ծրագրին հատկացվող գումարը նպատակաուղղ-վելու է՝ ագրոքիմիական դաշտային հետազոտություններ՝ 170 համայնքներում, 104.2 հազար լաբորատոր փորձաքննության կատարում, քարտեզների և մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմում, միջոցառումների իրականացմանը:

2.*Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման և ինժեներական կառուցվածքների վերականգնմանը՝ 369.1 մլն դրամ* - ՀՀ 2008 թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված գումարի աճը 2007 թվականի ճշտված բյուջեի նկատմամբ պայմանավորված է «Արարատյան հարթավայրի ոռոգելի երկրորդային աղակալած հողերի արմատական բարելավում» ծրագրի միջոցներն այս ծրագրին ուղելու հանգամանքով: Ծրագրով նախատեսվում է Ազատ, Վեդի, Գավառագետ, Քուչակ, Դեբեդ և Ախուրյան գետերի ընդհանուր երկարությամբ շուրջ 10 կմ հուների մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ:

3. Բնական կերհանդակների բարելավմանը և ջրարբիացմանն ուղղվելու է 300.0 մլն դրամ - Ծրագրով նախատեսվում է վերականգնել ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Լճաշենի, Սպիտակասարի (II փուլ), Վարդաձորի, Մուրղուզի, Թթուջրի և Ճամբարակի, ՀՀ Արագածոտնի մարզում՝ Աշտարակի, Գեղաձորի, Գեղարոտի, Վարդենուտի, ՀՀ Լոռու մարզում՝ Բազում-Սևաբերդի և ՀՀ Տավուշի մարզում՝ Գիժսար-Նոյեմբերյանի ջրարբիացման համակարգերի շուրջ 70 կմ ընդհանուր երկարությամբ վթարված հատվածները:

4. Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացմանն ուղղվելու է 89.0 մլն դրամ - Ծրագրին հատկացվող գումարը նպատակաուղղվելու է՝ 243.2 հազ. հա դաշտային հետազոտություն, թունանյութերի 800 հատ լաբորատոր փորձաքննություն, բույսերի կարանտին առավել վտանգավոր օրգանիզմների վարակի հայտնաբերման նպատակով 8000 փորձանմուշների լաբորատոր փորձաքննություն) միջոցառումների իրականացմանը:

5.Բույսերի պաշտպանության միջոցառումներ՝ 300.0 մլն դրամ - Ծրագրին հատկացվող գումարը նպատակաուղղվելու է (մկների դեմ պայքար 73 հազ. հա վրա, մորեխների դեմ պայքար՝ 10 հազ. հա վրա, պայքար անտառի վնասակար օրգանիզմների դեմ՝ 20 հազ. հա վրա, միջոցառումների իրականացմանը:

6.Պատվաստուկների և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերմանը՝ 843.8 մլն դրամ - Ծրագրին հատկացվող գումարը նպատակաուղղվելու է կենդանիների վարակիչ (դաբաղ, սիբիրախտ, խշխշան պալար, տավարի ժանտախտ, խոզի ժանտախտ, թռչունների ժանտախտ) և ոչ վարակիչ (բրուցելյոզ, տուբերկուլյոզ, պաստերելյոզ, լեյկոզ) հիվանդությունների կանխատեսման և վերացման միջոցառումների (9938.8 հազ. հակահամաճարակային պատվաստումների իրականացման համար պատվաստանյութերի ձեռքբերում), և վակցինաների պահպանման համար անհրաժեշտ սառնարանների ձեռքբերման համար:

7. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում 184.3 մլն դրամ - Ծրագրին հատկացվող գումարը նպատակաուղղվելու է՝ անասնաբուժական փորձաքննություններ՝ 169,7 մլն դրամ, դաբաղի և խոզերի ժանտախտի սերոմոնիտորինգ՝ 12.4 մլն դրամ և պատվաստանյութերի և ախտահանիչների պահպանու-թյան և բաշխման համար՝ 2.2 մլն դրամ. միջոցառումների իրականացմանը:

8. Անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքների ղեկավարներին պատվիրակված՝(պատվաստումներ և ախտորոշում, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանությունը ապահովող միջոցառումներ) լիազորությունների իրականացման ֆինանսավորմանը նախատեսվում է 510.0 մլն դրամ՝ - Ծրագրին հատկացվող գումարը 2007 թվականի ճշտված բյուջեի նկատմամբ ավել է 126.0 մլն դրամով, որը պայմանավորված է գործող անասնաբույժների աշխատավարձի ավելացմամբ /25% կամ 96.0 մլն դրամ/ և 50 նոր հաստիքային միավորների աշխատանքի վարձատրմանն ուղղվող միջոցների /30.0 մլն դրամ/ ավելացմամբ:

9. *Անասնաբուժական ոստիկանական դասակի ծառայությունների համար* նախատեսվում է հատկացնել 14.0 մլն դրամ՝ համաձայն ՀՀ ոստիկանության հետ կնքված պայմանագրի:

10. Գյուղատնտեսական նշանակության այլ օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է հատկացնել 210.0 մլն դրամ:

Ըստ ծրագրի նախատեսվում է իրականացնել.

- «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ Գեղարքունիքի մարզի՝ Ճամբարակ և Սևան, ՀՀ Լոռու մարզի՝ Տաշիր, ՀՀ Շիրակի մարզի՝ Ամասիա և ՀՀ Սյունիքի մարզի՝ Սիսիանի տարածաշրջանային անասնաբուժական լաբորատորիաների հիմնանորոգման աշխատանքներ,

- Հանրապետության մարզերի 5 տարածաշրջաններում ՀՀ Արագածոտնի մարզի՝ Արագածի, ՀՀ Արմավիրի մարզի՝ Բաղրամյանի, ՀՀ Գեղարքունիքի մարզի՝ Վարդենիսի, ՀՀ Լոռու մարզի՝ Սպիտակի և ՀՀ Տավուշի մարզի՝ Դիլիջանի «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի համար շենքերի ձեռքբերում:

11.Հատուկ միջոցառումների իրականացման համար նախատեսվում է 1.000.0 հազ. դրամ, որը շարունակական ծրագիր է և նախատեսված գումարները նպատակաուղղվելու են արտակարգ իրավիճակներում հատուկ միջոցառումների գծով աշխատանքների իրականացմանը:

12. Սերմերի որակի ստուգման և սորտափորձարկման աշխատանքների համար՝ 28.300.0 հազ. դրամ - Ծրագիրը հնարավորություն կտա բարձրակարգ սերմերով ապահովելու գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին ու անհատներին: Նշված գումարների հաշվին իրականացվելու են.

- սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանի վարում (300 սորտ),

- բույսերի նոր սորտերի պաշտոնական տեղեկատվության հրապարակում (400 օրինակ),

- բարձր վերարտադրության սերմնադաշտերի ապրոբացիա (1250 հա),

- սերմերի ծլունակության և աղտոտվածության փորձաքննություն և հսկողություն,

- գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտի սերմերի արտադրական փորձարկում (150 սորտ), սերտիֆիկացման և ներդրման միջոցառումներ:

13.Հիդրոօդերևութաբանական միջոցառումների համար նախատեսվում է 2.200.0 մլն դրամ՝, որը նպատակաուղղվելու է (ամենօրյա տեղեկագրերի, կլիմայական ամսական տեսությունների և ըստ մարզերի եղանակի կանխատեսումների տրամադրում, տասնօրյակային ագրոօդերևութաբանական տեղեկագրերի տրամադրում) միջոցառումների իրականացմանը:

14.Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացմանը նախատեսվում է ուղղել 41.5 մլն դրամ, - Ծրագրով նախատեսվում է մոտ 14.6 հազ. կովերի, 3.7 հազ. մերուների և 1.2 հազ. գլուխ այծերի արհեստական սերմնավորում, 460 հազ. չափաբաժին խորը սառեցված սերմնահեղուկի բանկի պահպանում:

15-16. *Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ»* ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային ֆոնդին հատկացումների գծով՝

- նախատեսվում է հակահեղեղային միջոցառումների իրականացմանն ուղղել 350.000.0 հազ. դրամ,

- անտառվերականգնման միջոցառումների իրականացմանը՝ 400.000.0 հազ. դրամ:

17.Համաձայն ՀՀ կառավարության և Համաշխարհային Բանկի միջազգային զարգացման ընկերակցության միջև 20.07. 2005 թ. ստորագրված «Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման» վարկային համաձայնագրի (վարկ N0 4095-AM) 4-րդ հավելվածի 3-րդ կետի «(a)» և «(b)» ենթակետերի պահանջների, *գյուղական խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով գյուղատնտեսության աջակցության մարզային և համայնքային կենտրոնների ֆինանսավորման համար նախատեսվում է 141.5 մլն դրամ*:: 2007 թվականի ճշտված բյուջեի նկատմամբ ավելացումը պայմանավորված է աշխատավարձի 40% և պահպանման ծախսերի բարձրացմամբ: (Համաձայն վարկային համաձայնագրի՝ 2008թ-ից սկսած, ԳԱՄԿ-ի և ԳԱՀԿ-ի աշխատակիցների աշխատավարձի և պահպանման ծախսերի համաֆինանսավորման չափաբաժինը պետ. բյուջեից 15%-ից բարձրացել է 35%, իսկ տեղական խորհրդատուների՝ աշխատավարձինը՝ 25%-ից դարձել է 65%):

18. *Սուբսիդավորման փորձնական ծրագրի իրականացմանը նախատեսվել է 1645.0 մլն դրամ,* ընդ որում 2007 թվականի ճշտված բյուջեի նկատմամբ աճը պայմանավորված է աշխատանքների ծավալի ավելացումով: Ծրագրի նպատակն է երկու մարզից բացի, ընդգրկել հանրապետության գյուղատնտեսության վարման համար առավել անբարենպաստ ևս հինգ մարզերի մեկական տարածաշրջանները՝ ստեղծելու ճյուղի զարգացման համար տնտեսական բարենպաստ միջավայրի նախադրյալներ և աջակցել տնտեսվարող սուբյեկտների արտադրական կարողությունների բարձրացմանը:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ *նոր ծրագրերը*.

1.Հայաստանի Հանրապետության տավարաբուծության զարգացման ծրագիր՝ 500.0 մլն դրամ — Ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 22.03.2007թ. N0 336-Ա որոշմամբ, որի համաձայն նախատեսվել է ներմուծել շվից, սիմենթալ և հոլշտինյան ցեղի երինջներ: Ներկրված տոհմայնի երինջները գյուղական ազգաբնակչությանը կհատկացվեն վարկավորման լիզինգային գործիքի կիրառման եղանակով: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա.

- որակապես բարելավել տավարաբուծության ուղղությամբ իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքները,

- նպաստել գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանը,

- աջակցել հանրապետության գյուղացիական տնտեսություններին՝ համաշխարհային բարձր մթերատու տոհմային տավարի դասական լավագույն ցեղերի կենդանիների ձեռքբերմանը:

2.*Հայաստանի Հանրապետությունում ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագիր՝ 105.1 մլն դրամ* - Ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 15.03.2007թ. N0 451-Ա որոշմամբ, որի համաձայն նախատեսվել է սուբսիդավորել ցորենի և գարու սուպերէլիտային և էլիտային սերմնարտադրությունը, նպատակ ունենալով բարձր վերարտադրության հացահատի-

կային մշակաբույսերի սերմերով ապահովել հանրապետության գյուղացիական տնտեսություններին:

3. *Սննդամթերքի անվտանգությանն ուղղված ծառայությունների մատուցում՝ 51.1 մլն դրամ:* Ծրագրի նպատակն է հանրապետությունում սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության տեսուչների կողմից սննդամթերքի արտադրության, մշակման, վերամշակման և իրացման գծով տնտեսվարող սուբյեկտների օբյեկտներում տեսչական գործառույթներ իրականացնելու ժամանակ վերցրված նմուշների լաբորատոր փորձաքննության աշխատանքների անցկացումը:

14.02.02 Անտառային տնտեսության բնագավառում հատկացումներն ուղղվելու են.

- *անտառների պահպանության և վերարտադրության աշխատանքներին՝ 1465,5 մլն դրամ:* Ծրագրին հատկացվող գումարի աճը 2007 թվականի ճշտված բյուջեի նույն ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների ծավալների ավելացմամբ (369.4 հազ. հա վրա իրականացվելու է անտառային պետական ֆոնդի անտառների պահպանության, անտառային տնտեսություն վարող կազմակերպությունների պահպանման, անտառվերականգնման և անտառշինական աշխատանքներ):

- *անտառի պետական մոնիտորինգի իրականացման համար՝ 52.6 մլն դրամ*, որը նպատակաուղղվելու է ապօրինի հատումների ու բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխարգելման աշխատանքներին, ինչպես նաև նախատեսվում է այդ նպատակով իրականացնել համապատասխան դիտարկումներ, ուսումնասիրություններ և կատարել պետական անտառային մոնիթորինգ:

Գյուղատնտեսության ոլորտի 2008 թվականի բյուջետային նախատեսվող ծախսերի (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) համեմատությունը՝ 2006 թվականի բյուջետային տարվա փաստացի, 2007 թվականի բյուջետային ճշտված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 4 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ գյուղատնտեսության նախարարության գծով նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 2 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով գյուղատնտեսության գծով նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N 2 աղյուսակում:

Բացի այդ, գյուղատնտսության ոլորտում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

1. <u>**Թռչնագրիպին հակազդելու ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)**</u>

Ծրագրի նպատակն է աջակցել ընտանի թռչունների շրջանում բարձր ախտածին թռչնագրիպի վարակով և կենդանիների այլ հիվանդություններով մարդկանց համար առաջացված վտանգը նվազեցնելու և մարդկանց միջավայրում գրիպի պանդեմիայի ու վարակիչ այլ հիվանդությունների բռնկումների հսկողությանն ու արձագանքմանը պատրաստվելու ուղղությամբ:

Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսության ոլորտում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել Ագարակի անասնապահական և բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետի շինարարական աշխատանքներ, բեկարի 16 հորերի շինարարական աշխատանքներ, Երևանի անասնաբուժական լաբորատորիայի շենքի վերանորոգման աշխատանքներ, թվով 5 մարզային ախտորոշիչ լաբորատորիաների վերանորոգման աշխատանքներ, «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն» ծրագրի իրականացման գրասենյակի պետական հիմնարկի գրասենյակային պայմանների բարելավման աշխատանքներ, անասնաբուժական և ախտորոշիչ սարքերի և սարքավորումների ձեռքբերում՝ կապիտալ ներքին տրանսֆերտների տրամադրում գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին՝ այլ ակտիվների ձեռքբերման ծախսեր:

2. Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է՝ աջակցել Հայաստանի փոքր և միջին գյուղական ձեռնարկությունների զարգացմանը՝ ֆերմերների ու գյուղական ձեռնարկատերերի համար շուկաներն առավել մատչելի դարձնելու և գյուղական շրջաններում շուկայամետ և պետական ներդրումներ խթանելու միջոցով:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականից նախատեսվում է բույսերի պաշտպանության միջոցառումների և սերմնաբուծության զարգացումը շարունակական դարձնելու համար նախատեսվում է ժամանակակից բազմազան սարքավորումների, սերմերի հիվանդությունների արագ ախտորոշման լաբորատոր սարքերի ձեռքբերման, համապատասխան մասնագետների պատրաստման (ինչպես տեղական այնպես էլ արտասահմանյան գիտական կենտրոններում) միջոցառումների իրականացում: 2008 թվականին նախատեսվում է ավարտել Գյումրիի սելեկցիոն կայանի վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև Շաքիի ջրագծի կառուցման աշխատանքները:

Գյուղատնտեսության ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացման համար 2008 թվականին նախատեսվում է նաև մրցակցային հիմունքներով դրամաշնորհների տրամադրում գյուղացիական միջին և փոքր տնտեսություններին, ինչպես նաև դրամաշնորհների տրամադրում համայքների զարգացման և ամրապնդմանն ուղղված նախապես հաստատված ծրագրերի համար: Ծրագրի շրջանակենրում կշարունակվեն առևտրային բանկերի միջոցով ենթավարկերի տրամադրման աշխատանքները շուկայավարող տնտեսություններին:

3. Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր (Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ և Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ)

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության առավել աղքատ 7 լեռնային մարզերում՝ (Տավուշ, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Վայոց Ձոր, Արագածոտն, Սյունիք) գյուղատնտեսությանն առնչվող տնտեսական գործունեության և նշված մարզերի գյուղաբնակ ազգաբնակչության եկամուտների կայուն աճին միտված միջոցառումների իրականացմանը:

Այդ նպատակով ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է վարկային համաձայնագրի պայմանների համաձայն 2005 թվականին ստեղծված Գյուղական ֆինանսավորման կառույցի միջոցով իրականացնել գյուղական ձեռնարկատիրության ֆինանսավորում, մասնավորապես նախատեսվում է աջակցել գյուղատնտեսական գործունեության ակտիվացմանը՝ ծրագրի գործունեության տարածարջանն ընգրկող գյուղական փոքր և միջին արտադրողներին ու ձեռնարկատերերին վարկերի տրամադրման և համապատասխան ֆինանսավորումը մատչելի դարձնելու միջոցով:

2008 թվականին մատակարար-արժեքային շղթայի գործունեության արդյունավետությունը բարելավալու նպատակով ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև տնտեսական հիմնավորված ենթակառուցվածքների վերականգման աշխատանքներ՝ միջհամայնքային ճանապարհների վերականգնում, համայնքների գազաֆիկացում, ոռոգման ու խմելու ջրագծերի կառուցում և վերականգնում:

4. Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագիր (Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ)

Ծրագրի նպատակն է ստեղծել նպաստավոր պայմաններ Հայաստանի Հանրապետության համայնքներում ազգաբնակչության եկամուտների կայուն աճի ապահովման համար: Մասնավորապես ծրագրի խնդիրն է՝ ծրագրի տարածքում անհրաժեշտ ենթակառուցվածքների վերականգնման, կառուցման միջոցով աջակցել մասնավոր սեկտորի գործունեությանը և ձեռնարկատիրության հնարավորությունների զարգացմանը:

2008 թվականին նշված մարզերի համայնքներում նախատեսվում է իրականացնել գազաֆիակացման, համայնքային ճանապարհների վերականգնման, ոռոգման համակարգի վերականգնման, խմելու ջրով ապահովման և ջրարբիացման աշխատանքներ:

5. Շուկայական հնարավորություններ ֆերմերներին ծրագիր (Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ)

Նշված ծրագրի հիմնական նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Այս նպատակին հասնելու համար ծրագրի շրջանակներում նախատեսվում է մասնավորապես իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները՝

-գյուղատնտեսական արտադրանքի ապրանքաարժեքային շղթայի զարգացումը խթանելու նպատակով գյուղատնտեսական վերամշակող մասնավոր ձեռնարկություններին կտրամադրվի բաժնետիրական ֆինանսավորում՝ բաժնեմասը հետագայում ետ գնելու պայմանով,

-գյուղական աղքատությունը նվազեցնելու նպատակով ֆինանսական միջոցներ կտրամադրվեն Գյուղական ֆինանսավորման կառույցին փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման համար,

-մանր ֆերմերային տնտեսությունների արտադրողականությունը և արտադրանքի որակը բարձրացնելու նպատակով ֆինանսական միջոցներ կտրամադրվեն Գյուղական ֆինանսավորման կառույցին մանր գյուղատնտեսական վարկեր տալու համար,

-Հայաստանի Հանրապետության համայքներում սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների վիճակը բարելավելու նպատակով կիրականացվեն ներդրումներով հիմնավորված ենթակառուցվածքների և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքներ:

Միաժամանակ գյուղատնտեսության ոլորտում 2008 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային դրամաշնորհային ծրագրերը.

1. <u>Թռչնագրիպին հակազդելու ճապոնական ծրագիր,</u>
2. <u>Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ճապոնական ծրագիր:</u>

Քաղաքաշինության ոլորտի գծով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով հատկացումները նախատեսվել են հիմնվելով՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ 2008-2010 թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրի, այլ համապատասխան օրենսդրական և իրավական ակտերի հիման վրա: Նախագծի կազմման հիմքում դրվել են հանրակրթական դպրոցների բարելավման և շինարարության, մշակութային օբյեկտների բարելավման, մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների և փախստականների բնակապահովման և աղքատության մակարդակի կրճատման ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության ռազմավարության սկզբունքները:

Քաղաքաշինության բնագավառի 2008 թվականի քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերակայություններն են՝

- Երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների բնակարանով ապահովումը,
- Փախստական ընտանիքների բնակարանային խնդիրների լուծումը,
- ՀՀ հանրակարթական դպրոցների հիմնանորոգման և բարելավման ծրագրի իրականացումը
- Նոր հանրակրթական դպրոցների շինարարության իրականացումը,

- Մարզական օբյեկտների հիմնանորոգումը և նորերի շինարարությունը,

- ՀՀ մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերի իրականացումը,

- Նոր մշակութային օբյեկտների շինարարությունը,

- Առողջապահական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների իրականացումը,

- Վարչական օբյեկտների հիմնանորոգումը և այլն:

2007 թվականին առաջնահերթությունը կտրվի շարունակական աշխատանքների հետևյալ ուղղություններին.

1. «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» ծրագիր ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 20-ի N0 593 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության 1413 հանրակրթական դպրոցների գույքի համալրման, հիմնանորոգման, վերականգնման, ուժեղացման ծրագիրը, որի իրականացման համար կանխորոշվել է 58,300.0 մլն դրամ: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվել է 10,000.000.0 հազ. դրամ, որից 967.543.8 հազ.՝ Լինսի հիմնադրամի հաշվին իրականացվող դպրոցաշինության համաֆինանսավորման նպատակով: Նշված գումարից 5,623.214.0 հազ. դրամի աշխատանքնե-րի պատվիրատու է հանդիսանում ՀՀ քաղաքաշինության նախարարությունը: Սպորտդպրոցների շինվերանորոգման աշխատանքների համար նախատեսվել է 464.800.0 հազ. դրամ, այդ թվում շինարարական աշխատանքների համար՝ 43.800.0 հազ. և հիմնանորոգման աշխատանքների համար՝ 421.000.0 հազ. դրամ: Պատվիրատուն ՀՀ քաղաքաշինության նախարարությունն է:

Կրթական օբյեկտների շինարարության նպատակով նախատեսվել է 1,884.025.0 հազ. դրամ, որից 1,610.055.0 հազ. դրամի պատվիրատուն ՀՀ քաղաքաշինության նախարարությունն է, իսկ 273,970.0 հազ. դրամինը՝ ՀՀ մարզպետարանները:

Նշված հիմնական նպատակների ապահովումն իրականացվելու է հետևյալ ուղղություննե-րով նախատեսվող միջոցառումներով.

- հանրակրթական դպրոցների վթարավտանգ մասնաշենքերի վերականգնում-ուժեղացում՝ ապահովելով դրանց շահագործման անվտանգությունը,

- ջեռուցման համակարգերի ներդնում, ապահովելով ջեռուցման ամբողջ սեզոնի ընթացքում ուսումնական գործընթացի անընդհատությունը,

- դպրոցների շենքերի պատշաճ պահպանության ապահովում,

- դպրոցներում սանիտարահիգենիկ անվտանգ պայմանների ապահովում:

ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով ապահովվել է տարածքային համամասնական զարգացման գծով ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության ռազմավարաության հիմնական սկզբունքները, մասնավորապես կապիտալ ծախսերի բաշխման տեսանկյունից:

2. Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման ծրագիր - ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1,366.100.0 հազ. դրամ, որից հիմնանորոգման համար՝ 1,079.790.0 հազ. դրամ և շինարարության համար 43,800.0 հազ. դրամ: Այդ գումարներից 500.000.0 հազ. դրամը նախատեսված է մարզային և հանրապետական

նշանակության գրադարանների հիմնանորոգման համար: Պատվիրատուն հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

3. «Գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն» ծրագիր - նախկինում մտել է Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի մեջ: ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով այս նպատակով հատկացվել է 815.000.0 հազ. դրամ, որն ուղղվել է ՀՀ Լոռու և ՀՀ Շիրակի մարզերի գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանը: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկվել է 815,000.0 հազ. դրամ, որից ՀՀ լոռու մարզին՝ 640.000.0 հազ. դրամ, ՀՀ Շիրակի մարզին՝ 175.000.0 հազ. դրամ:

4. «Փախստականների բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով» ծրագիր - ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով այս նպատակով հատկացվել է 815.000.0 հազ. դրամ, որով Երևան քաղաքում և Կոտայքի մարզում պետք լուծվեն փախստականների բնակարանային խնդիրների մի մասը: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով այս նպատակով նախատեսվել է 815,000.0 հազ. դրամ:

5. Բնակարանային ապահովում բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով – Ծախսային ծրագրով նախատեսվել է 815.000.0 հազ. դրամ:

6. «Առողջպահկան օբյեկտների հիմնանորոգում» ծրագիր ՀՀ հիվանդանոցների շենքերի հիմնանորոգման համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 600.000.0 հազար դրամ, որից 485.520.0 հազար դրամի պատվիրատուն ՀՀ քաղաքաշինության նախարարությունն է, իսկ 114.480.0 հազարինը՝ մարզպետարանները:

7. ք. Գյումրիի ՀՀ ԳԱԱ Ա. Նազարյանի անվան երկրաֆիզիկայի և ինժեներիայի սեյսմաբանության ինստիտուտի անավարտ շենքի ավարտման համար ՀՀ քաղաքաշինության նախարարությանը նախատեսվել է 25.000.0 հազ. դրամ:

8.Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման համար նախատեսվել է 3.000.000.0 հազ. դրամ:

9. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագիր - նախատեսվել է ընդհանուր առմամբ 1,408.420.0 հազար դրամ, որից 80.000.0 հազ. դրամի պատվիրատուն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարությունն է, իսկ 45.000.0 հազ.՝ մարզպետարանները:

10. Սննդի արդյունաբերության քոլեջի 2-րդ մասնաշենքի վերանորոգման համար նախատեսվել է 200.000.0 հազ. դրամ:

11. «Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման համար նախատեսվել է 65.000.0 հազ. դրամ:

12. «Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման համար նախատեսվել է 41.000.0 հազար դրամ:

13. Նոր ավագ դպրոցների հիմնանորոգման համար նախատեսվել է 2,000.000.0 հազ. դրամ:

14. Հուշարձանների վերականգնման համար նախատեսվել է 500.000.0 հազ. դրամ:

Քաղաքաշինության ոլորտում, ըստ 2008 թվականի բյուջետային ծախսերի նախատեսվող ցուցանիշների համեմատությունը 2006 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2007 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 9 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ քաղաքաշինության նախարարության նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 12 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ քաղաքաշինության նախարարության նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N 3 աղյուսակում:

Առևտրի և տնտեսական զարգացման ոլորտի համար (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 1104.3 մլն դրամ, որից՝

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության ծրագրի իրականացման համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է՝ 450.0 մլն դրամ: Նշված հատկացումների հաշվին պետք է իրականացվի ծրագրային հետևյալ միջոցառումները՝

- ՓՄՁ ԶԱԿ կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի ամրապնդում ու դրանց գործունեության ընդլայնում՝ 70.0 մլն դրամ,

- Վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շարունակում և ընդլայնում՝ 170,0 մլն դրամ,

- սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն՝ 60.0 մլն դրամ,

- ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն՝ 5.0 մլն դրամ,

- ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղմանն աջակցություն՝ 18 մլն դրամ,

- ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ 19,0 մլն դրամ,

- ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն՝ 8,0 մլն դրամ,

Ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների վարձատրությանն ուղղված միջոցներ՝ 100.0 մլն դրամ:

ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիր, որի իրականացման համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է՝ 250.0 մլն դրամ, այդ թվում՝

ՀՀ զբոսաշրջության զարգացման ծրագիր, որի իրականացման համար ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է՝ 80.0 մլն դրամ: Նշված հատկացումների հաշվին զբոսաշրջային ոլորտում նախատեսվում է իրականացնել.

ա) գովազդա-տեղեկատվական ապահովման համակարգի կատարելագործումը՝ 40.6 մլն դրամ, որից՝

- գովազդային նյութերի մշակում, պատրաստում, տպագրում և բաշխում՝5.8 մլն դրամ,

- օտարերկրյա լրագրողների և տուրօպերատորների Հայաստան այցելությունների կազմակերպում՝5.2 մլն դրամ,

- զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցություն՝ 25.2 մլն դրամ,

- ավանդական տոնակատարությունների կազմակերպում և անցկացում՝ 4.4 մլն դրամ;

բ) զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային ուսումնասիրությունների իրականացում՝ 7.2 մլն դրամ:

գ) Միջազգային համագործակցություն՝ 10.0 մլն դրամ:

դ) Ծրագրային միջոցառումների իրականացման աշխատանքների վարձատրություն՝ 21.7 մլն դրամ:

ե) Ներկայացուցչական ծախսեր՝ 0.5 մլն դրամ:

- «Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիր – որի իրականացման համար ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է՝ 170.0 մլն դրամ: Նշված գումարը նախատեսվում է 2008թ. ընթացքում նպատակաուղղել՝

ՍԻ ԷՆ Է և Եվրոնյուզ հեռուստաալիքներով Հայաստանը ներկայացնող և գովազդող հոլովակների պարբերաբար հեռարձակմանը, այդ թվում՝

- ՍԻ ԷՆ Է հեռուստաալիքով հեռարձակմանը՝ 100.0 մլն դրամ:

- Եվրոնյուզ հեռուստաալիքով հեռարձակմանը՝ 70.0 մլն դրամ:

- «Պետական աջակցություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության «Ստանդարտցման ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ստանդարտացման աշխատանքների կատարմանը» ծրագիր - Շարունակական է, որի իրականացման համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված է՝ 41.0 մլն դրամ: ՀՀ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը անդամակցության պահանջներից ելնելով՝ 2008 թվականին նախատեսվում է ակտիվացնել տեխնիկական կանոնակարգերի և միջազգային ու եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակման և ընդունման աշխատանքները:

- «Պետական աջակցություն չափումների միասնականության ապահովման աշխատանքների կատարմանը» ծրագիր - Շարունակական ծրագիր է, որի իրականացման համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է՝ 41.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ազգային էտալոնների ստեղծում, ձեռքբերում, կատալերագործում, պահպանում, տեխնիկական սպասարկում և միջպետական էտալոնների բաղդատում, միասնական ժամանակի և հաճախականության չափումների ապահովում՝ - 11.7 մլն դրամ,

- հետազոտական աշխատանքների կատարում՝ - 4.2 մլն դրամ,

- չափագիտության բնագավառի նորմատիվ, իրավական փաստաթղթերի մշակում՝ - 2,1 մլն դրամ:

- ՀՀ տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագիր - Շարունակական ծրագիր է, որի իրականացման համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է՝ 61.0 մլն դրամ: Նշված ծախսային ծրագրով նախատեսված գումարը նպատակաուղղվելու է արդյունաբերական ապրանքների փորձանմուշների գնմանը և հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում դրանց փորձարկումների իրականացմանը:

- Օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման գործընթացի պետական աջակցության ծրագիր - Շարունակական ծրագիր է, որի իրականացման համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված է՝ 20.0 մլն դրամ: Ծրագրի ակնկալվող արդյունքը լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նոր նորմերի մշակումն է: Նշված ծրագրի համար իրավական հիմք է հանդիսացել՝ ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքի 3-րդ հոդվածը և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը:

- Պետական աջակցություն «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին կանոնադրական խնդիրների իրականացման և տեխնիկական կանոնակարգերի մշակման ծրագիր - շարունակական ծրագիր է, որի իրականացման համար ՀՀ 2008 թվականի պետա-կան բյուջեի նախագծով նախատեսվել է՝52.0 մլն դրամ: Նշված ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված է 24.10.2005թ. ընդունված և 01.01.2006թ. ուժի մեջ մտած ՀՀ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի պահանջներով:

Ծրագրի իրականացման նպատակը «Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնածին վթարների կանխարգելումն է, դրանց հետևանքների վերացումը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը: Ծրագրի իրականացումը կնպաստի տեխնիկական անվտանգության պետական կարգավորման բնագավառում ՀՀ կառավարության ընդհանուր նպատակի իրագործմանը:

- «Առևտրի համաշխարհային կազմակերպության հետանդամակցային պարտավորու-թյունների իրականացման» ծրագիր - Շարունակական ծրագիր է, որի իրականացման համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է՝ 28.8 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակը ԱՀԿ-ում ընթացող գործընթացների, բազմակողմ բանակցությունների ընթացիկ փուլի, համաշխարհային առևտրի ընթացիկ զարգացումների, վերլուծությունների, նորությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն է:

Ծրագրի յուրաքանչյուր արդյունքին հասնելու համար անհրաժեշտ միջոցառումներն են՝

ա/ ԱՀԿ-ում ընթացող գործընթացների, համաշխարհային առևտրի ընթացիկ զարգացումների, վերլուծությունների, նորությունների, ինչպես նաև ԱՀԿ շրջանակներում ընթացող բազմակողմ բանակցությունների ընթացիկ փուլի և զարգացումների լուսաբանում, վերլուծությունների իրականացում,

բ/ ԱՀԿ յուրաքանչյուր երկրի համար առանձին դասակարգիչների ստեղծում, որտեղ կհավաքագրվեն այդ երկրների (ինչպես նաև անդամակցման գործընթացում գտնվող երկրների) առևտրատնտեսական բնագավառին վերաբերվող բոլոր գործող օրենքներն ու կանոնակարգերը,

գ/ Փոփոխման ենթակա և ՀՀ նոր օրենսդրական ակտերի նախագծերի հավաքագրում և դրանց ներկայացում,

դ/ ՀՀ ԱՀԿ հետանդամակցային պարտավորությունների կատարման ընթացքի մեկնաբանում,

ե/ ՀՀ-ում տեղի ունեցող առևտրատնտեսական բնագավառին վերաբերող գործընթացների, ՀՀ հարկային, մաքսային կանոնակարգերի և շուկայի կոնյուկտուրայի ներկայացում,

զ/ ԱՀԿ անդամ երկրների առևտրատնտեսական օրենքների, իրավական ընթացակարգերի, առևտրատնտեսական քաղաքականությունների, ռեժիմների, վերջիններիս զարգացման դինամիկայի վրա հիմնված ներկա իրավիճակի և ապագա կանխատեսումների մասին տեղեկատվության հավաքագրում և մեկնաբանում:

- «Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության» ծրագիր - նոր ծրագիր է, որի իրականացման համար ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է՝ 28.8 մլն դրամ:

Ծրագրի հիմքում ընկած են՝

ա/ ՀՀ «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» օրենքի,

բ/ ՀՀ կառավարության 28.09.2005թ. «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010 թվականների ծրագրի մասին» N0 1729-Ն որոշման,

գ/ ՀՀ կառավարության 02.03.2006թ. նիստով ընդունված «Գյումրու Տեխնոպարկի ստեղծման ծրագրի մասին» N0 8 արձանագրային որոշման պահանջները:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ Գյումրու Տեխնոպարկի ներքո ինովացիոն համակարգի ձևավորում:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի զարգացման պետական աջակցության» ծրգիր - նոր ծրագիր է, որի իրականացման համար ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է՝ 100.0 մլն դրամ :

Ծրագրի իրականացման նպատակն է՝ 2008-2010թթ. ժամանակահատվածում նպաստավոր միջավայր ապահովել Հայաստանում գիտատար տնտեսության զարգացման, ընդհանուր տնտեսության մրցունակության բարձրացման, ՏՀՏ կիրառման ընդլայնման համար:

Այս ոլորտում 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2006 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2007 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N 3 աղյուսակում (առանց վարկային ծրագրի :

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 1 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N1 աղյուսակում:

ՀՀ էներգետիկայի ոլորտ (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) - ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ոլորտի գծով նախատեսվել է հատկացնել 264.3 մլն դրամ, որից՝

«Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ում աշխատած միջուկային վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստարանի կառուցում» ծախսային ծրագրի գծով նախատեսվել է՝ 236.1 մլն դրամ գումար: ՀՀ 2005-2007թթ. պետական բյուջեներով հատկացվել է՝ 2427,5 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակը՝ ՀԱԷԿ-ի աշխատած վառելիքի հուսալի պահպանության ապահովումն է: Գոյություն ունեցող պահեստարանի (I հերթի շինարարու-թյուն) ընդլայնում ևս 24 հորիզոնական մոդուլների պահպանության համար, 50 տարի ժամկետով:

Պետական աջակցություն «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ՝- ծրագիրը շարունակական է, որի իրականացման համար ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նշված նախատեսվել է՝ 28.2 մլն դրամ :

Ծրագրի իրականացման հիմնական նպատակն է՝ միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրում, ուսումնասիրում, պահպանում, վնասազերծում, թաղում՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝ ռադիոակտիվ թափոնների անվտանգ տեղափոխումը և պահպանումը համաձայն գործող օրենսդրության:

էներգետիկայի ոլորտում, ըստ 2008 թվականի բյուջետային ծախսերի նախատեսվող ցուցանիշների համեմատությունը 2006 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2007 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 6 աղյուսակում (առանց վարկային ծրագրի):

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ էներգետիկայի նախարարության գծով նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 4 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով էներգետիկայի գծով նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N 4 աղյուսակում:

Բացի այդ, էներգետիկայի ոլորտում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

<u>1. Քաղաքային ջեռուցման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)</u>

Ծրագրի նպատակն է՝ մեծացնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների օգտագործումը քաղաքային դպրոցներում և բազմաբնակարան շենքերում:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին որակյալ ջերմամատակարարման համակարգի ստեղծման նպատակով մասնավորապես նախատեսվում է օրենսդրական դաշտի կատարելագործում՝ համայնատիրությունների գործառույթները բարելավելու և շուկայական պայմաններով ջեռուցման ծառայությունների մատուցումը խթանելու համար, ինչպես նաև համապատասխան կարգերի, ապահովության նորմերի ու ստանդարտների մշակում, մատակարարների և սարքավորումների, այդ թվում նաև՝ բնական գազի մատակարարման սերտիֆիկացում, բնակարանատերերի ընկերակցությունների, ջերմամատակարար ընկերությունների և տեղական ֆինանսական հաստատությունների կարողությունների կառուցում համայնական ջեռուցման համակարգերի անցկացման համար ենթակառուցվածքների ֆինանսավորում, մասնավորապես՝ բնակարանատերերի համար ջեռուցման ծառայությունների մատչելիությունն ընդլայնելու համար ենթավարկերի տրամադրում և բարելավված ջեռուցման ծառայություններից օգտվելու համար ապրանքների, աշխատանքների և դրամաշնորհների տրամադրում բազմաբնակարան շենքերում ապրող աղքատ տնտեսություններին, գազով աշխատող տեղական ջեռուցման համակարգերի տեղադրման և վերականգնման համար ընտրված դպրոցներին ապրանքների, աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների մատուցում և այլն:

<u>2. Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագիր (Միջազգային համագործակցության ճապոնական բանկ)</u>

Ծրագրի նպատակն է «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ում համակցված շոգեգազային ցիկլով բնական գազով աշխատող նոր էներգաբլոկի կառուցում՝ 234 Մվտ դրվածքային և 189 Մվտ երաշխավորված հզորությամբ, որը զբաղեցնելու է Երևանի ՋԷԿ-ին հարակից տարածքում մոտ 3,6 հա տարածք և օգտագործելու է վերջինիս ենթակառուցվածքը:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին մասնավորապես նախատեսվում է հիմնականում այս ծրագրի իրականացման համար խորհրդատվական և նախագծահետազոտական աշխատանքների իրականացում և ծրագրի գլխավոր կապալառուի ընտրության դեպքում կանխավճարի և որոշ մատակարարված ապրանքների դիմաց վճարում:

3. էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր (Միջազգային համագործակցության ճապոնական բանկ)

Ծրագրի նպատակն է՝ էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգերի վերականգնումը, ֆինանսական կարգապահության ուժեղացումը, ճյուղային հաստատություններում հզորությունների կառուցումը, ինչը նախատեսում է 110 կվ հզորությամբ ենթակայանների վերականգնում, հիմնական սարքավորումներով վերազինում, բարձրավոլտ ենթակայանների համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, ՀՀ էներգահամակարգի նոր SCADA/Կապի համակարգի առաջին փուլի իրականացում, որի արդյունքում կստեղծվի Հայաստանի էներգահամակարգի կառավարման և հեռակառավարման համակարգ:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին մասնավորապես նախատեսվում է վերը նշված աշխատանքների իրականացման համար 2007 թվականին ընտրված կապալառուների հետ համապատասխան պայմանագրերի շրջանակներում կանխավճարների վճարման և աշխատանքների փուլային իրականացման միջոցառումներ:

4. էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագիր (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ)

Ծրագրի նապատակն է Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև 1998 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված «1997 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրով տրամադրված 27.5 մլն գերմանական մարկ վարկի մնացորդային գումարով և Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև 2004 թվականի ապրիլի 5-ին կնքված «Կովկասյան նախաձեռնության շրջանակներում ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրով նախատեսվող վարկային միջոցներից խնայված 1.3 մլն Եվրո գումարը նախատեսել «Վանաձոր-1» ենթակայանի ամբողջական վերականգնման համար, ինչը հնարավորություն կտա Վանաձոր քաղաքի անխափան էլեկտրամատակարարման աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև մի շարք ենթակայանների միջև նոր սարքավորումներով կապը բարելավելու և ՀՀ էներգահամակարգում SCADA ծրագրի ներդրման համար անհրաժեշտ սարքավորումների փոխարինմամբ:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին մասնավորապես նախատեսվում է սարքեր սարքավորումների ձեռքբերման, շինմոնտաժային աշխատանքերի և խորհրդատվական ծառայությունների իրականացում:

5. Վերականգնվող էներգետիկայի ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է՝ նոր հողմային կայանների և փոքր հիդրոկայանների կառուցում և գործող հիդրոկայանների վերականգնում, որն իրականացվելու է ենթավարկերի տրամադրման միջոցով:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականին նախատեսվում է վարկերի տրամադրում ՀՀ առևտրային բանկերին, որոնք էլ իրենց հերթին այդ գումարները ենթավարկերի տեսքով պետք է տրամադրեն ծրագրի շահառուներին:

Միաժամանակ էներգետիկայի ոլորտում 2008 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվում է իրականացնել նաև **Վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագիրը:**

Բնապահպանության ոլորտում ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով (առանց նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է հատկացնել 1540.7 մլն դրամ (ՀՀ 2007 թվականի ճշտված բյուջեով հաստատված 1472.4 մլն դրամի դիմաց), որից 1243.5 մլն դրամ գումարն ուղղվելու է ընթացիկ ծախսերին, իսկ 297.2 մլն դրամը՝ կապիտալ ծախսերին: Ոլորտին հատկացված միջոցները ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը:

«Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը նախատեսվել է 400.8 մլն դրամ, որի հաշվին իրականացվելու է ՀՀ պետական իշխանության մարմիններին, ազգաբնակչությանը, տնտեսության տարբեր ճյուղերին հիդրոօդերևութաբանական փաստացի պայմանների և դրանց սպասվող փոփոխությունների, կլիմայի ներկա և հետագա վիճակի վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովումը: Ծախսերի գերազանցումը 31.065 հազ դրամի չափով ՀՀ 2007թ. ճշտված բյուջեով նախատեսված ծախսերի նկատմամբ պայմանավորված է աշխատավարձի նվազագույն շեմը 25.0 հազ դրամ նախատեսելու հանգամանքով:

Հիդրոօդերևութաբանական կայանների և «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական վերազինման նպատակով նախագծով նախատեսվել է համապատասխանաբար 36.0 մլն դրամ և 100.0 մլն դրամ;

Երկարաբանահետախուզական աշխատանքներին ուղղվելու է 41.0 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվելու են տարածաշրջանային երկրաբանական, երկրաքիմիական, երկրաֆիզիկական, հիդրոերկրաբանական աշխատանքներ: Ծախսերի պակասեցումը 18.0 մլն դրամի չափով ՀՀ 2007թ. ճշտված բյուջեով նախատեսված ծախսերի նկատմամբ

պայմանավորված է նրանով, որ ՀՀ բնապահպանության նախարարության առաջարկությամբ ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի վարման աշխատանքների ծախսերը ուղղվել են «Հիդրոերկրաբանական մոնիտորինգի» ՊՈԱԿ-ին (ՊՈԱԿ-ը ստեղծվել է ՀՀ կառավարության 08.09.2005թ. N 1616-Ն որոշմամբ):

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին նախատեսվում է 5.7 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվելու է ՀՀ տարածքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հաշվառման, ստացված արդյունքների վերլուծության և ընդհանրացման, այդ աշխատանքների պետական գրանցման, հանքավայրերի և օգտակար հանածոների պաշարների հաշվառման, երկրաբանական հաշվետվությունների հավաքագրման և պահպանման ապահովումը:

Սյունիքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում պահուստային հանքավայրերի գույքագրմանն ուղղվելու է 19.19 մլն դրամ:

Պետական աջակցություն «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին նախագծով նախատեսվել է 7.0 մլն դրամի չափով հատկացումներ:

Հանրապետության ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 100.6 մլն դրամ՝ Ծախսերի ավելացումը 8.7 մլն դրամի չափով ՀՀ ճշտված բյուջեով նախատեսված ծախսերի նկատմամբ պայմանավորված է աշխատանքների ծավալների ավելացմամբ՝ Ծաղկաձորի շրջակա միջավայրի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի, Ամբերդում օդի անդրսահմանային աղտոտման մոնիտորիրնգի և Արաքս գետի ջրերի աղտոտվածության հայ-իրանական համատեղ ծրագրի իրականացման նպատակով:

«Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 6-ի N՝ 948-Ն որոշման համաձայն նախագծում նախատեսվել է 40.0 մլն դրամ՝ Ծաղկաձորի օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի կայանի շինարարության ավարտման նպատակով:

Ձկան պաշարների համալրման համար նախատեսված է 80.0 մլն դրամ, որի հաշվին իրականացվելու է Հայաստանի հազվագյուտ և անհետացող ձկնատեսակների արհեստական վերարտադրությունը և դրանց մանրաձկների վերադարձը Սևանա լիճ:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության բնագավառում հատկացումները ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Սևանա լճում սիգի, կարասի, խեցգետնի արդյունագործական պաշարների որոշման և պոպուլյացիայի վիճակի ու թվաքանակի գնահատման և հաշվառման նպատակով նախատեսվել է 4.0 մլն դրամ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեությունն ապահովելու համար նախատեսվում է 419.5 մլն դրամ, որի շրջանակներում «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ», «Խոր Վիրապ» և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերում

(Հայաստանի Հանրապետության ««Խոր Վիրապ» պետական արգելավայր ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 30.05.2002 թվականի N0 925-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 25.06.2007թ. N0 975-Ն որոշման համաձայն), «Շիկահող» պետական արգելոցներում և «Սոսու» պուրակ արգելավայրում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում կատարվելու են ազգային պարկերի և արգելոցների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովումը, բնության հուշարձանների պահպանությունը, ինչպես նաև տնկարկների պահպանության և պաշտպանության իրականացումը:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի տեխնիկական վերազինման նպատակով հատկացվել է 16.0 մլն դրամ;

Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման համար նախատեսվել է 41.7 մլն դրամ:

ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման նպատակով նախագծով ուղղվելու է 10.0 մլն դրամ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վերանայման, սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքներին ուղղվելու է 55.0 մլն դրամ, որի հաշվին իրականացվելու է 17 բնության հատաուկ պահպանվող տարածքների քարտեզագրում:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական-տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման միջոցառումների իրականացմանն ուղղվելու է 14.9 մլն դրամ:

Ջրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծրագրին, ինչպես նաև *Ջրի ազգային ծրագրի մշակման աշխատանքներին* (ծրագրի շրջանակներում կատարվելու են նաև ՀՀ Գեղարքունիքի, Տավուշի և կոտայքի մարզերում 668 խորքային հորերի և 970 բնաղբյուրների գույքագրման աշխատանքներ) նախատեսվել է համապատասխանաբար՝ 28.9 մլն և 46.5 մլն դրամ:

Բնապահպանության ոլորտում նորմատիվային փաստաթղթերի մշակման նպատակով (այդ թվում՝ ընդերքի և թափոնների ոլորտին վերաբերող, ինչպես նաև «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի պայանջների կատարման նպատակով շրջակա միջավայրի վրա օդի հիմնական աղտոտիչների ազդեցության հետազոտման և մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների ներգործությունը կարգավորող նորմատիվային փաստաթղթեր) և ՀՀ կառավարության 14.07. 2005թ. N0 1033 որոշման համաձայն ավտոտրանսպորտի արտանետումների չեզոքացուցիչների ներդրման, վերանորոգման, ռեգեներացիայի և սպասարկման համակարգի մշակման և ներդրման իրականացման *նոր ծրագրերին* ուղղվելու է համապատասխանաբար 44.2 մլն դրամ, և 1.2 մլն դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 09.11.2006թ. N0 1673-Ն որոշման համաձայն *օգտակար հանածոների որակը գնահատելու նպատակով հսկողական անալիզների կատարման համար* «Անալիտիկ» ՊՓԲԸ-ին նախատեսվել է 10.4 մլն դրամ՝ ատոմնո-աբսորբ-ցիոն սպեկտրոմետրի ձեռքբերման նպատակով:

Այս ոլորտում նախատեսված 2008 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2006 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2007 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N0 8 աղյուսակում (առանց վարկային ծրագրի և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի):

Բնապահպանության ոլորտում, ըստ 2008 թվականի բյուջետային ծախսերի նախատեսվող ցուցանիշների համեմատությունը 2006 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2007 թվակ-անի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 8 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ բնապահպանության նախարարու-թյան նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավել-վածի N 7 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ բնապահպանության նախարարու-թյանը նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բա-ցատրագրի N 8 հավելվածի N 7 աղյուսակում:

Բացի այդ, բնապահպանության ոլորտում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

1. Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման նպատակային վարկային ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն), որի նպատակն է՝ բնական ռեսուրսների պայմանների բարելավումը՝ կառավարման համակարգի բարեփոխումների միջոցով և գյուղական բնակչության աղքատության նվազեցումը Տավուշի և Գեղարքունիքի մարզերի լեռնային գոտիներում: Տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում ծրագիրը կնպաստի Հարավային Կովկասի այս տարածաշրջանի յուրահատուկ էկոհամակարգի բարելավմանը և հզորացմանը: Ծրագիրը կստեղծի երկարաժամկետ ֆիսկալ օգուտներ՝ որպես մեծացված տեղական եկամուտների և տեղական հարկերից եկամուտների ու սոցիալական պաշտպանության ավելի ցածր ծախսերի արդյունք: Սոցիալական օգուտներից կլինեն, մասնավորապես, տեղական եկամուտների աճը, աշխատատեղերի թվի ավելացումը, անտառների կառավարումից առաջացած եկամուտների աճը:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել 16 միկրոհավաք ավազանների կառավարման պլանների նախապատրաստման և այդ պլաններով նախատեսված գործողությունների իրականացմանը: 2008 թվականին

նախատեսվում է իրականացնել 16 միկրոհավաք ավազանների կառավարման պլանների մշակման և իրականացման աշխատանքներ : 2008 թվականի ընթացքում իրականացվելու են անտառվերականգնման աշխատանքներ 500 հազար ԱՄՆ դոլարի սահմաններում Իջևան և Սևքար անտառտնտեսության տարածքներում : Նախատեսվում է նաև կատարելագործել այս բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությունը և իրականացնել համակարգի կառուցվածքային բարեփոխումներ: Մինչ ծրագրի ավարտը նախատեսվում է աջակցել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի թվով 5 անտառտնտեսութան կառավարման պլանների մշակմանը, դրանց ենթակառուցվածքների հզորացմանը, կադրերի վերապատրաստմանը և մասնագիտական որակավորման բարձրացմանը: 2008 թվականին «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի կառավարման պլաններով նախատեսված որոշ հրատապ գործողությունների իրականացումը, դրանց ենթակառուցվածքների հզորացում, պարկերի տարածքներում և պահպանական գոտիներում կենսաբազմազանության պահպանություն, արդյունավետ օգտագործման ուղիների մշակում, կադրերի վերապատրաստում և մասնագիտական որակավորման բարձրացում, հասարակության էկոլոգիատեղեկատվական աշխատանքների իրականացում:

Միաժամանակ, Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվում է իրականացնել նաև **Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման նպատակային դրամաշնորհային ծրագիրը և Համաշխարհային բանկի աջակցությամբ Շվեդական հավատարմագրային հիմնադրամի դրամաշնորհով Հայաստանի անտառների զարգացման դրամաշնորհային ծրագիրը:**

Տրանսպորտի և կապի ոլորտին 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 24818.0 մլն դրամ (առանց վարկային ծրագրերի և պետական կառավարման ապարատի), ՀՀ 2007թ. պետական բյուջեով հաստատված 21393.4 մլն դրամի դիմաց, ավելացումը հիմնականում պայմանավորված է ավտոճանապարհների հիմնանորոգման և պահպանման աշխատանքների ծավալների աճով: Այս ոլորտում 2008թ. բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ ՀՀ 2006թ. բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2007թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է N<u>ο</u> 7 աղյուսակում:

Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում ծրագիրը նախատեսվում է իրականացնել ՀՀ Նախագահի և ՀՀ վարչապետի հանձնարարականներով, ՀՀ կառավարության որոշումներով, «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում կնքված համաձայնագրերով՝ ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունները և գարնանային հեղեղումներից քանդված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքների կատարումը,որի համար ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված է հատկացնել 12195.8 մլն դրամ:

«Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու շինարարություն): Ս.թ. հունիսի 19-ի «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի հերթական 16-րդ նիստի ընթացքում քննարկվել է նշված ավտոմայրուղու շինարարական աշխատանքների հարցը, որի արդյունքում որոշվել է , որ գումարի մի մասը 672.9 մլն դրամ կտրամադրվի ՀՀ կառավարության կողմից:

Լինսի հիմնադրամի «ճանապարհաշինություն» և «Երևանի փողոցների վերականգնում» ծրագրերում առաջացած ֆինանսական միջոցների պակասուրդը փոխհատուցելու նպատակով ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված է հատկացնել 2441.2 մլն դրամ:

Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում ծրագրով «ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ճանապարհների 2006-2008թթ. եռամյա զարգացման և 2006թ. վերականգնման ու պահպանման տարեկան աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N0 2412-Ն որոշման համաձայն ՀՀ կառավարության ստանձնվելիք պարտավորությունների իրականացման ապահովման նպատակով նախատեսվում է ՀՀ պետական բյուջեից 2008թ. համար հատկացնել 6190.0 մլն դրամ: Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքները, նշագծման աշխատանքները, ինչպես նաև մի շարք կամուրջների և թունելների շահագործումը:

Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանում ու շահագործում և ձմեռային պահպանություն ծրագրով նախատեսվում է իրականացնել մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանության ինչպես նաև ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքները, որոնց համար նախատեսվում է հատկացնել 469.4 մլն դրամ:

Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում ծրագրով «ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ճանապարհների 2006-2008թթ. եռամյա զարգացման և 2006թ. վերականգնման ու պահպանման տարեկան աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N0 2412-Ն որոշման համաձայն ՀՀ կառավարության ստանձնվելիք պարտավորությունների իրականացման ապահովման նպատակով նախատեսվում է ՀՀ պետական բյուջեից 2008թ. համար հատկացնել 1100.0 մլն դրամ: Ծրագրով նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության ճանապարհային վթարավտանգ տեխնիկական վիճակում գտնվող կամրջային կառուցվածքների հիմնանորոգման աշխատանքները:

ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից զեղչ սակագնով կամ անվճար ծառայություններ մատուցելու հետևանքով չստացված եկամուտների փոխհատուցում ծրագրով ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 20.0 մլն դրամ, որը համապատասխանում է նշված ծրագրով «ՀՀ 2008-2010 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N0774-Ն որոշմամբ 2008թ. համար հաստատված կողմնորոշիչ չափաքանակին:

Պետական աջակցություն «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին ծրագրով ՀՀ կառավարության 06.10.2005թ. «Հեռահաղորդակցության հանրապե-

տական կենտրոն» ՊՈԱԿ ստեղծելու մասին N<u>o</u> 1807-Ն որոշման համաձայն «ՀՀԿ» ՊՈԱԿ-ի պահպանման համար 2008թ. նախատեսվում է հատկացնել 470.0 մլն. դրամ:

Սևանի ավազանի բնակավայրերում, Դիլիջանում , Ջերմուկում հեռուստահեռարձակման բարելավման միջոցառումների իրականացում ծրագրով շինարարական աշխատանքների իրականացման համար ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 73. 2 մլն դրամ:

«Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի սուբսիդավորում ծրագրով ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 909.4 մլն դրամ, որը համապատասխանում է այդ ծրագրով «ՀՀ 2008-2010 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N<u>o</u>774-Ն որոշմամբ 2008թ. համար հաստատված կողմնորոշիչ չափաքանակին:

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի սուբսիդավորում ծրագրով ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 276.0 մլն դրամ, որը համապատասխանում է այդ ծրագրով «ՀՀ 2008-2010 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N<u>o</u>774-Ն որոշմամբ 2008թ. համար հաստատված կողմնորոշիչ չափաքանակին:

Բացի այդ, էներգետիկայի ոլորտում 2008 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

<u>1. Երկաթուղու վերակառուցման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)</u>

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանին բարելավելու Հայկական երկաթուղու Գյումրիի և Այրում հատվածի ենթակառուցվածքի անվտանգությունը և արդյունավետությունը, երկաթուղու ֆինանսական կենսունակությունը, միաժամանակ տեխնիկական աջակցություն ցուցաբերելով ՀՀ կառավարությանը Հայկական Երկաթուղու կոնցեսիոների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել կամուրջների վերակառուցման աշխատանքների մի մասը:

<u>2. Երթևեկության կառավարման և անվտանգության ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)</u>

Ծրագրի նպատակն է Հայաստանին օժանդակել բարելավելու քաղաքային շարժունակությունը և երթևեկության անվտանգությունը Երևան քաղաքում, ապահովելով երթևեկության լուսակիրներով և գործադրման սարքավորումներով, կատարելով ճանապարհների գծանշում և նշանների տեղադրում, իրականացնել երկրաչափական և այլ փոքր ֆիզիկական բարեփոխումների աշխատանքներ ընտրված խաչմերուկներում, ինչպես նաև ցուցաբերել տեխնիկական աջակցություն կարողությունների զարգացման համար:

2008 թվականի ընթացքում նախատեսվում է երթևեկության լուսակիրների ձեռքբերման աշխատանքների իրականացում:

Բացի այդ 2008 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ նպատակային դրամաշնորհային հետևյալ ծրագրերը.

1. Երթևեկության կառավարման և անվտանգության ծրագրի նախապատրաստման ծրագիր,

2. Երկաթուղու կառուցվածքային ծրագրի նախապատրաստման ծրագիր,

3. Երկաթուղու կառուցվածքային բարեփոխումների ծրագրի նախապատրաստման ծրագիր:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության նախատեսված ծախսերը ծրագրային դասակարգմամբ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 7 հավելվածի N 5 աղյուսակում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության նախատեսված ծրագրերի կատարողական չափորոշիչներն արտացոլված են սույն բացատրագրի N 8 հավելվածի N 5 աղյուսակում:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի ոլորտում ՝ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 606,080.8 մլն դրամ ծախսեր՝ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով հաստատված 729,7 մլն դրամի դիմաց: Հատկացվող միջոցների հաշվին 2008 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1.«Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքների պետական պատվեր-նախագիծ՝ 19,000.0 հազար դրամ:

2008 թվականին նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների քարտադարանի (տեղեկատվական բանկի) վարման, համալրման և թարմացման աշխատանքներ, որոնք կրում են շարունակական բնույթ: Այն իր մեջ ներառում է տեղեկատվական բանկի տվյալների անընդհատ թարմացում և համալրում ի հաշիվ նորաստեղծ աշխարհագրական օբյեկտների (եկեղեցիներ, մատուռներ, կամուրջներ, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտներ և այլն), անանուն աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և գոյություն ունեցող աշխարհագրական օբյեկտների անվանափոխման: Բացի այդ, ելնելով «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի զ) կետի պահանջներից, նախատեսվում է իրականացնել նաև տեղեկատվության տրամադրում:

2. «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման պետական պատվեր՝ 204,031.1 հազ. դրամ:

Նշված ծրագրով 2008 թվականին նախատեսվում է շարունակել և իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի 1:10 000 մասշտաբի թվային տեղագրական քարտեզների ստեղծման աշխատանքները:

2008 թվականին սկսվելու են Հայաստանի Հանրապետության տարածքի 1:10 000 մասշտաբի 134 թերթ տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքները, որոնք կրում են շարունակական բնույթ և յուրաքանչյուր տարի թարմացվելու են թերթերի ընդհանուր քանակի 1/10 մասը:

Շարունակվելու են նաև հրատարակչական աշխատանքներ, ըստ որի 2008 թվականին նախատեսվում է հրատարակել 134 թերթ (5-ական օրինակից) տեղագրական քարտեզներ:

3.«Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գեոդեզիական աշխատանքների իրականացման (WGS -84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում նոր գեոդեզիական ցանցի ստեղծման աշխատանքների շարունակություն) պետական պատվեր՝ 47,583.7 հազար դրամ:

2008 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- Հայաստանի Հանրապետության պետական գեոդեզիական և համաշխարհային WGS-84 համակարգում գեոդեզիական ցանցի կետերի մոնիթորինգ, որը նախատեսում է՝ Հայաստանի Հանրապետության պետական գեոդեզիական ցանցի արդիական վիճակի պահպանում, յուրաքանչյուր տարի մոնիթորինգի իրականացում ցանցը արդիական վիճակում պահպանելու համար: Նախագծում տրվում է վնասված կետերի նորոգման, ոչնչացված կետերի վերականգնման, դիտարկման և այդ տվյալների մշակման, հավասարակշռման, կատալոգների կազմման աշխատանքները:

- ՀՀ տարածքում WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում ստեղծված 0-ական, 1 և 2 դասի ցանցի արդիականացման, զարգացման, ինչպես նաև ոչնչացված հիմնակետերի վերականգնման և դիտարկման աշխատանքներ, որը ծառայում է պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզագրության, գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում հիմնարար, կիրառական և պաշտպանական խնդիրներ լուծելու համար:

- Մերձերևանյան գեոդինամիկական պոլիգոն միջոցառումը նախատեսում է՝ Հայաստանի տարածքում գոյություն ունեն 6 ակտիվ երկրաբանական խզվածքների և Հայաստանի Հանրապետության երկրաշարժավտանգ գոտիներում ճշգրիտ գեոդեզիական չափագրումների հիման վրա կանխորոշել, թե որտեղ է գտնվելու ապագա երկրաշարժի էպիկենտրոնը, ինչը թույլ կտա ճիշտ տեղադրել երկրաշարժագիտական սարքերն ու համակարգերը:

- Հայաստանի Հանրապետության տարածքում գեոդեզիական կետերի ԿՀ-42 կոորդինատային համակարգից WGS-84 համաշխարհային կոորդինատային համակարգին անցման աշխատանքներ: Հայաստանի Հանրապետության տարածքի պետական

մասշտաբային շարքի քարտեզները հիմնականում կազմված են ԿՀ-42 կոորդինատային համակարգում և քանի որ դրանք պարունակում են գաղտնիության տարրեր, դրանց կիրառումը լայն սպառման շրջանակներում սահմանափակ է:

4.Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրում`` 30,000.0 հազ.դրամ:

2008 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել իրավունքների պետական գրանցման մեխանիզմների կատարելագործման և կադաստրային տվյալների մասին տեղեկատվության մատչելիության, անընդհատության և օբյեկտիվության ապահովման համար հետևյալ աշխատանքները՝

- տեղեկատվական բանկի, ավտոմատացված կադաստրի ներդրման աշխատանքների արդյունավետությունն ապահովելու համար միջոցների ձեռնարկում,
- ավտոմատացված կադաստրի համակարգի ներդնում տարածքային բոլոր ստորաբաժանումներում, որի արդյունքում կլուծվեն բազմաթիվ խնդիրներ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման բնագավառում, ընդ որում, 2008 թվականին նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 5-ի N0 155 որոշման շրջանակներում տրամադրել շուրջ 60000 անվճար տեղեկատվություն, որի ընդհանուր արժեքը կկազմի մոտավորապես 30,0 մլն դրամ:

5.Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրում, զարգացում և տեղեկատվական բանկի սպասարկում՝ 133,810.0 հազ. դրամ:

2008 թվականի ընթացքում տարածքային ստորաբաժանումներում նախատեսվում է իրականացնել.

- կադաստրային գործերի տվյալների մուտքագրում,

էջերի տեսաներածում,

շենք-շինությունների թվային պլան հատակագծերի ստեղծում,

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գերատեսչական ցանցի սպասարկում,

Ընդհանուր օգտագործման ծրագրային փաթեթների (գործող համակարգերի, տվյալների շտեմարանի ղեկավարման համակարգի, հակավիրուսային փաթեթների, տեղեկատվական բանկի անվտանգության ապահովման եւ այլն) ձեռք բերում եւ արդիականացում,

Բազային երկրատեղեկատվական համակարգի ներդնում և շահագործում,

Հասցեվորման և հասցեների պետական գրանցման աշխատանքների ավտոմատացման համակարգի ներդրում,

Անշարժ գույքի վերաբերյալ գրանցված իրավունքների և սահմանափակումների, որակական և քանակական տվյալների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում:

6.Երկրատեղեկատվական համակարգի նախագծում, ներդնում և սպասարկում՝ 87,000.0 հազ. դրամ:

2008 թվականի ծրագրով նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն համայնքների բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները, որն իր մեջ ներառում է թվային քարտեզագրական հիմքի ստեղծում և անհրաժեշտ տվյալների հավաքագրում՝ տեղագրական և կադաստրային քարտեզների ու հատակագծերի հիման վրա:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն համայնքների բազային երկրատեղեկատվական համակարգի 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերը ստեղծելու նպատակով նախատեսվում է ձեռնարկել անհրաժեշտ հետևյալ միջոցառումները.

- Համայնքների և դրանց հեռանկարային զարգացման նպատակով նախատեսված տարածքների համար ստեղծել 1:2000 մասշտաբի տեղագրական և կադաստրային թվային համադրված հատակագծեր, որոնց գծով հիմք կհանդիսանան 1998-2004 թվականներին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ստեղծված 1:500 և 1:2000 մասշտաբի թվային կադաստրային քարտեզները, դրանց վրա իրականացնելով բնակավայրերի 1:2000 մասշտաբի հատակագծերի թարմացման, ռելիեֆի տեղագրական տարրերի ստեղծման, տեղագրական հանույթների կազմման ու թվայնացման աշխատանքներ:
- Ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ:
- Բազային երկրատեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ շերտերի ստեղծման աշխատանքներ:
- Բազային երկրատեղեկատվական համակարգի բոլոր տարրերի տեքստային տվյալների մուտքագրման աշխատանքներ:

7.«Հողշինմոնիտորինգ»ՊՈԱԿ-ի կողմից անշարժ գույքի գնահատման նոր համակարգի ներդրման նպատակով հողի և դրա վրա գտնվող շենքերի ու շինությունների, անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների իրականացման պետական պատվեր՝ 30,000.0 հազ. դրամ:

Նշված ծրագրով 2008թվականի նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

Հողամասերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների գնային իրավիճակի համակարգված դիտարկումների իրականացում: 2008 թվականի ընթացքում անշարժ գույքի շուկայի վերլուծությունների իրականացում ամսական, եռամսյակային, կիսամյակային, 9 ամիսների, 11 ամիսների և տարեկան կտրվածքներով: Վերլուծական ժողովածուներում և համառո-

տագրերում (հոդվածներում) կներառվեն գրաֆիկական և աղյուսակային գծապատկերներ, կիրա-կանացվի գործարքների քանակական փոփոխությունների միտումների գրաֆիկական վերլու-ծություն, գների համեմատական փոփոխություններն ու վերլուծությունները կներկայացվեն վիճակագրական վերլուծման համակարգչային վերլուծման SPSS ծրագրային փաթեթի ձևաչափերով (ֆորմատներով):

8.Հասարակության տեղեկատվություն- նախագիծ՝ 8,000.0հազ.դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվող ընթացիկ և ծրագրային աշխատանքների վերաբե-րյալ տեղեկատվությունը բնակչությանն իրազեկելու նպատակով 2008 թվականին նախատես-վում է պատվիրել՝

- «Կադաստրի տեղակագիր» ամսագրի պատրաստում և հրատարակում (2007թվականին 12 համար):
- Բացատրական բնույթի ծալադարսված ու կարված երկթերթ ուղեցույցերի պատրաստում և տպագրում:
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում իրականացվող գործառույթների թափանցիկության ապահովման և առկա թերությունների հայտնաբերման համար նախատեսվում է իրականացնել նաև գործող ընթացակարգերի մոնիթորինգ:

9.Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների (համայնքների) սահմանների ամրացում՝ 46,656.0 հազ. դրամ:

Ծրագրի իրականացման նպատակով նախատեսվում է անհրաժեշտ ուշադրություն դարձնել երկու քարտեզներում առկա ճանապարհային ցանցին, ջրագրությանը, թաղամասերի արտաքին սահմանագծին, համայնքների վարչական սահմաններին, գծային օբյեկտներին և տարածքում առկա հստակ արտահայտված այլ խոշոր օբյեկտներին (շենք, շինություն, պարիսպ և այլն):

Քանի որ, կադաստրային քարտեզները գտնվում են մշտապես վարման գործընթացում և դրանց վրա արտահայտվում են բոլոր ընթացիկ փոփոխությունները, ապա համադրման ընթացքում կադաստրային քարտեզներում առկա բոլոր այն օբյեկտները, որոնք միաժամանակ նաև տեղագրական քարտեզի տարրեր են հանդիսանում, անհրաժեշտություն է առաջանում տեղափոխել տեղագրական քարտեզների վրա:

Այս ոլորտում 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2006 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2007 թվականի բյուջե-տային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N0 15 աղյուսակում (առանց վարկային ծրագրի)

Պետական գույքի կառավարման բնագավառում ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմված են երկու ծրագրերից.

«Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներ» ծրագրի գծով 2008թ. նախատեսվում է 19.0 մլն դրամ, (2007 թվականի բյուջետային տարվա համար հաստատված 19.0 մլն դրամի դիմաց);

«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացում» ծրագրով նախատեսվում է 30.7 մլն դրամ (2007 թվականի բյուջետային տարվա համար հաստատված 30.7 մլն դրամի դիմաց:

Պաշտպանության բնագավառի ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են **124,366.4 մլն դրամի** չափով, որից ռազմական կարիքների բավարարման համար նախատեսվել է հատկացնել **120,418.9 մլն դրամ**:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառի այլ ծախսերը հաշվարկվել են **3,947.5 մլն դրամ,** որից՝

ա) «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» ծրագրով հաշվարկվել են **3,892.4 մլն դրամ,**

բ) այլընտրանքային ծառայության կազմակերպման համար՝ **16.2 մլն դրամ**, որից ՀՀ պաշտպանության նախարարության գծով նախատեսվել է՝ **5.7 մլն դրամ**, ՀՀ առողջապահության նախարարության գծով՝ **5.6 մլն դրամ** և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գծով՝ **5.0 մլն դրամ,**

գ) զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսեր, որի գումարը կազմում է՝ **38.8 մլն դրամ**: Նշված գումարի հաշվարկը կատարվել է՝ 2160 զինվորների կտրվածքով:

Հասարակական կարգի պահպանության համակարգի ծախսերի ֆինանսավորմանը 2008 թվականի պետական բյուջեից նախատեսվում է ուղղել **42,537.8 մլն դրամ**: Նշված ծախսերը ներառում են Ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության, Պետական պահպանության, Փրկարար ծառայության և Քրեակատարողական համակարգի ծախսերը: Մասնավորապես՝

ա) ՀՀ Ոստիկանության 2008 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են **19,967.1 մլն դրամի** չափով, որից **17,878.3 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **2,088.7 մլն դրամը՝** ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2008 թվականին ծրագրավորվել են **10,824.5 մլն դրամի** չափով, որը 2007 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **1,505.7 մլն դրամով**, որն էլ իր հերթին պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- **637.7 մլն դրամ** - ՀՀ դատախազությունից ՀՀ Ոստիկանության համակարգ տեղափոխվող թվով 201 քննիչների աշխատավարձերի նախատեսմամբ, ինչպես նաև ՀՀ Ոստիկանության համակարգի քննիչների աշվատավարձերը ՀՀ դատախազության քննիչների աշխատավարձերին հավասարեցնելու հետ,
- **640.0 մլն դրամ -** ՀՀ Ոստիկանության համակարգի ավագ, միջին և կրտսեր խմբերի ծառայողների աշխատավարձերի 10 %-ով բարցրացմամբ,
- **228.0 մլն դրամ –** ՀՀ Ոստիկանության համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատավարձի ֆոնդի համալրմամբ:

Հաշվարկը կատարվել է ՀՀ վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի N 226, 2000 թվականի նոյեմբերի 16-ի N 762 և ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 13-ի N 1837-Ն որոշումներով սահմանված պաշտոնային դրույքաչափերին ու զինծառայողների թվակազմին համապատասխան:

<u>Այլ վարձատրությունները</u> հաշվարկվել են **1,131.0 մլն դրամի** չափով, որից **1,088.2 մլն դրամը**՝ ոստիկանության համակարգի սպաների և ենթասպաների պարենային բավարարման համար (ՀՀ կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ սահմանված չափին համապատասխան), իսկ **42.8 մլն դրամը**՝ ոստիկանության համակարգի զինծառայողներին համազգեստի դիմաց դրամական փոխհատուցման համար:

<u>Սոցիալական ապահովագրության վճարները</u> հաշվարկվել են **208.4 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

<u>Շարունակական ծախսերը</u> ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1749.2 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները **446.6 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները **51.2 մլն դրամ**, կապի ծառայությունները **305.4 մլն դրամ**, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը **40.9 մլն դրամ,** ինչպես նաև արտագերատեսչական (ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 29-ի N 1008-Ն որոշմամբ հաստատված կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության) ծախսերը **905.1 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 6-ի N 449-Ն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մայիսի 30-ի N 89-Ն որոշումներով և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի N 404-Ն հրամանով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

<u>Գործուղումների գծով ծախսերը</u> ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **249.3 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների համար՝ **68.7 մլն դրամ** և արտասահմանյան գործուղումների համար՝ **180.6 մլն դրամ:** Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման համապատասխան:

<u>Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը</u> ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **267.1 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է

ուղղել կենցաղային և հանրային սննդի ծառայությունների (լվացքատների ծառայություններ) ֆինանսավորմանը 15.0 **մլն դրամ**, ընդհանուր բնույթի այլ ծառայությունների (2008 թվականի ՀՀ Նախագահական ընտրությունների ժամանակ ծանուցագրերի պատրաստման և առաքման) ֆինանսավորմանը **227.1 մլն դրամ** և ներկայացուցչական ծախսերի ֆինանսավորմանը **25.0 մլն դրամ**:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **87.0 մլն դրամ** գումարի չափով, որն ուղղվելու է ՀՀ ոստիկանության համակարգի մարդատար և բեռնատար ավտոմեքենաների, ինչպես նաև այլ սարքավորումների նորոգման և պահպանման ծախսերի ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2,612.7 մլն դրամ** չափով: Նշված գումարից **158.9 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը**, 660.2 մլն դրամը** ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը**, 1,215.3 մլն դրամը** տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը**, 407.2 մլն դրամը** կենցաղային և հանրային սննդի նյութերի (ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողների սննդամթերք) և 171.1 մլն դրամը հատուկ նպատակային այլ նյութերի (մեդալների, շքանշանների, ծառայության ընթացքում բարձր ցուցանիշների ապահովման դեպքում՝ հուշանվերների, տարբեր տեսակի շինանյութերի և այլ նյութերի) ձեռքբերմանը:

Դրամաշնորհները ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **20.8 մլն դրամ,** որից **20.0 մլն դրամը** նախատեսվում է ուղղել «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությանը, իսկ **0.8 մլն դրամը** միջազգային առաջնություններին մասնակցելու անդամակցությանը:

Սոցիալական նպաստները ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **157.4 մլն դրամի** չափով, որից.

- **130.0 մլն դրամը -** ՀՀ Ոստիկանության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու նպաստների վճարման համար
- **13.0 մլն դրամ -** ՀՀ Ոստիկանության ծառայողների և նրանց ուղեկցող ընտանիքի անդամների արձակուրդի վայր մեկնելու հետ կապված ճանապարհածախսի փոխհատուցման համար,
- **11.0 մլն դրամ -** ՀՀ ոստիկանության ծառայողների առողջարանային բուժման ուղեգրերի ձեռքբերման համար,
- **3.4 մլն դրամ -** ՀՀ ոստիկանության ծառայողների ծառայության նոր վայր տեղափոխվելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար:

Այլ ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **570.9 մլն դրամ՝** որն ուղվելու է ՀՀ Ոստիկանության ստորաբաժանումների շենքերի և շինությունների պահպանության, կենսաթոշակառուների նյութական օգնության, «Արշալույս» առողջարարական ճամբարի պահպանման, «Երեխայի զարգացման կենտրոնի» պահպանման, մարզական միջոցառումների անցկացման, բեռների տեղափոխման, վարորդական դասընթացների անցկացման, հակահրդեհային սարքավորումների ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2,088.7 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **30.0 մլն դրամ՝** ՀՀ Ոստիկանության համակարգի թվով 5 զինծառայողների համար բնակարանների ձեռքբերմանը,
- **600.0 մլն դրամ՝** ՀՀ Ոստիկանության համակարգի շենքեր և շինությունների կառուցմանը,
- **251.0 մլն դրամ՝** ՀՀ Ոստիկանության համակարգի մի շարք շենքեր և շինությունների, կապիտալ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **400.0 մլն դրամ՝** տրանսպորտային միջոցների (մարդատար, բեռնատար և միկրոավտոբուսների) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը,
- **782.7 մլն դրամ՝** վարչական սարքավորումների (կահույք, համակարգչային սարքավուրումներ, կապի սարքավորումներ և այլն) ձեռքբերմանը,
- **25.0 մլն դրամ՝** նախագծահետազոտական աշխատանքների ֆինանսավորմանը:

Բացի այդ, ՀՀ Ոստիկանությանը նախատեսվել է **236.2 մլն դրամ՝** 13 բաժնի 01 խումբի 01 դասի «Պետավտոհամարանիշների ձեռքբերում» ծրագրով, **170.4 մլն դրամ՝** 13 բաժնի 01 խումբի 01 դասի «ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն» ծրագրով, **81.9 մլն դրամ՝** 17 բաժնի 01 խումբի 01 դասի «Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում» ծրագրով, **516.2 մլն դրամ՝** 19 բաժնի 04 խումբի 01 դասի «Բարձրագույն մասնագիտական կրթություն» ծրագրով և **100.0 մլն դրամ** 17 բաժնի 01 խումբի 03 դասի «Կենտրոնացված կարգով բժշկական սարքերի և սարքավորումների ձեռքբերում» ծրագրով:

բ) Հայաստանի փրկարար ծառայության համակարգի պահպանման ծախսերի ֆինանսավորմանը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է ուղղել **3,238.8 մլն դրամ,** որից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը ուղղվելու է՝ **2,906.5 մլն դրամ**, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ **332.3 մլն դրամ**: Մասնավորապես.

Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների և քաղաքացիական ծառայողների պարգևատրումները ՀՀ 2008 թվականին ծրագրավորվել են՝ **1,927.1 մլն դրամ** գումարի չափով, որը ՀՀ 2007 թվականի հաստատված բյուջի նկատմամբ աճել է **47.2 մլն դրամի** չափով: Նշված գումարի ավելացումը պայմանավորված է փրկարար ծառայության համակարգի քաղաքացիա-

կան ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը՝ գործող 35500 դրամի փոխարեն 40000 դրամ սահմանմամբ: Հաշվարկները կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2323-Ն որոշումով սահմանված Փրկարար ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերին և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2318-Ն որոշմամբ սահմանված ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության թվակազմին համապատասխան:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **395.3 մլն դրամի** չափով՝ Փրկարար ծառայության համակարգի սպաների և ենթասպաների պարենային բավարարման համար: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2323-Ն որոշմամբ սահմանված չափին համապատասխան:

Սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են **75.5 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **156.0 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունների գծով **85.1 մլն դրամ**, կոմունալ ծառայությունների գծով **28.5 մլն դրա**մ և կապի ծառայությունների գծով **42.4 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 6-ի N 449-Ն, 2005 թվականի օգոստոսի 4-ի N 1171-Ն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մայիսի 30-ի N 89-Ն որոշումներով և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի N 404-Ն հրամանով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **34.3 մլն դրամ** գումար ներքին գործուղումների համար: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման համապատասխան:

Ներկայացուցչական ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **5.0 մլն դրամ**, որն ուղղվելու է 2008 թվականին թվով 12 միջազգային կազմակերպություններից բնական և տեխնածին աղետների կանխարգելման և հետևանքների վերացման գծով պատվիրակությունների ընդունելությունների ծամանակ ծախսերի իրականացմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **225.1 մլն դրամի** չափով: Նշված գումարից **10.6 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային ապրանքների, **82.2 մլն դրամը** փրկարար ծառայողների համազգեստի, **115.3 մլն դրամ** տրանսպորտային նյութերի (բենզինի, դիզելային վառելիքի և յուղերի), **1.0 մլն դրամ** առողջապահական և լաբորատոր նյութերի և **16.0 մլն դրամ** հատուկ նպատակային այլ նյութերի (տարբեր տեսակի փրկարարական պարագաներ) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **88.1 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է փրկարար ծառայողներին առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատ-

ման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու նպաստների վճարմանը:

<u>Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը</u> 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **332.3 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **50.0 մլն դրամ՝** Հայաստանի փրկարար ծառայության թվով 10 հրշեջ մասերի տանիքների վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **68.0 մլն դրամ՝** թվով 80 թթվածնային մեկուսիչ հակագազերի և այլ հատուկ փրկարարական պարագաների ձեռքբերմանը,
- **9.0 մլն դրամ՝** վարչական սարքավորումների (կահույք և համակարգչային տեխնիկայի) ձեռքբերմանը,
- **161.9 մլն դրամ՝** տրանսպորտային միջոցների (թվով 1 վթարափրկարարական ավտոմեքենայի, 4 «Կամազ ԱԲ-5-8000» և 1 «Գազ-27057» մակնիշների հրշեջ ավտոմեքենաների, ինչպես նաև 3 «Ռիս» մակնիշի ձնագնացների) ձեռքբերմանը,
- **43.4 մլն դրամ՝** տրանսպորտային միջոցների պահպանման և հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը:

Բացի այդ, Հայաստանի փրկարար ծառայությանը 14 բաժնի 09 խմբի 01 դասի «Պետական աջակցություն «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ին» ծրագրով նախատեսվել է **147.2 մլն դրամ,** որը նախատեսվում է ուղղել Արմավիրի (թվով 15) և Արագածոտնի (թվով 15) մարզերում տեղակայված արգենտինյան գեներատորների շահագործման և սպասարկման ծախսերի ֆինանավորմանը:

<u>գ) *Քրեակատարողական ծառայության*</u> 2008 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են **6,777.5 մլն դրամի** չափով, որից **4,068.8 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **2,708.7 մլն դրամը՝** ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը, մասնավորապես.

<u>Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները</u> 2008 թվականին ծրագրավորվել են՝ **2,133.1 մլն դրամի** չափով, որը 2007 թվականի նկատմամբ աճել է **635.3 մլն դրամով,** պայմանավորված քրեակատարողական համակարգի աշխատողների թվակազմի 353-ով ավելացմամբ: Հաշվարկները կատարվել են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձի սանդղակին համապատասխան:

<u>Այլ վարձատրությունները</u> հաշվարկվել են **203.3 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել քրեակատարողական համակարգի սպաների և ենթասպաների պարենային բավարարմանը:

<u>Սոցիալական ապահովագրության վճարները</u> հաշվարկվել են **40.0 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **343.1 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունների գծով **286.6 մլն դրամ,** կոմունալ ծառայությունների գծով **31.0 մլն դրամ** և կապի ծառայությունների գծով **25.5 մլն դրամ:** Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 6-ի N 449-Ն, 2005 թվականի օգոստոսի 4-ի N 1171-Ն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մայիսի 30-ի N 89-Ն որոշումներով և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի N 404-Ն հրամանով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **9.5 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների համար՝ **4.5 մլն դրամ** և արտասահմանյան գործուղումների համար՝ **5.0 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման համապատասխան:

Տեղեկատվական ծառայությունները ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **15.0 մլն դրամի** չափով՝ որը նախատեսվում է ուղղել տեղեկագրերի և այլ տպագրական աշխատանքների ֆինանսավորմանը:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **7.1 մլն դրամ** գումարի չափով, որն ուղղվելու է Քրեակատարողական համակարգի մարդատար և բեռնատար ավտոմեքենաների, ինչպես նաև այլ սարքավորումների նորոգման և պահպանման ծախսերի ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,281.8 մլն դրամ** չափով: Նախատեսվում է ձեռք բերել գրասենյակային պիտույքներ **17.8 մլն դրամ**, Քրեակատարողական համակարգի անձնակազմի և կալանավորների համար համազգեստ **142.9 մլն դրամ**, պաշտպանիչ հագուստ **76.7 մլն դրամ**, տրանսպորտային նյութեր (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) **112.4 մլն դրամ**, առողջապահական և լաբորատոր նյութեր (դեղորայք) **45.0 մլն դրամ**, կենցաղային և հանրային սննդի նյութեր **829.4 մլն դրամ**, որից մաքրիչ նյութեր 12.0 մլն դրամ, հիգիենիկ նյութեր 44.5 մլն դրամ, կալանավորների և դատապարտյալների համար սննդամթերք 772.9 մլն դրամ, իսկ հատուկ նպատակային այլ նյութերը (մետաղյա ցանց, էլեկտրական լամպեր, ափսեներ, բաժակներ և այլն) **57.7 մլն դրամ**:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **33.5 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է քրեակատարողական համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու նպաստներ գծով **30.0 մլն դրամ** և ծառայողների ու նրանց ուղեկցող ընտանիքի անդամների արձակուրդի վայր մեկնելու հետ կապված ճանապարհածախսի փոխհատուցման գծով **3.5 մլն դրամ**: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Հարկերի և պետական տուրքերի գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2.3 մլն դրամ,** որից **0.8 մլն դրամը** քրեակատարողական համակարգի ավտոմեքենաների գրանցման համար, իսկ **1.5 մլն դրամը** ավտոմեքենաների տեխնիկական զննության գծով հարկերի վճարմանը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2,708.7 մլն դրամի** չափով, մասնավորապես.

- **1,641.2 մլն դրամ**՝ ցմահ դատապարտյալների քրեակատարողական հիմնարկի շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը,
- **439.4 մլն դրամ՝** «Կոշ» քրեակատարողական հիմնարկի հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **379.5 մլն դրամ՝** «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **117.1 մլն դրամ՝** տրանսպորտային միջոցների ձեռքբերմանը («Նիվա» մակնիշի թվով 4 մարդատար ավտոմեքենաներ, կալանավորներ տեղափոխող հատուկ նշանակության 3 ավտոմեքենաներ և ֆլյուրոգրաֆիկ շարժական 1 ավտոմեքենա),
- **120.0 մլն դրամ՝** վարչական սարքավորումների համար (կահույք, համակարգչային սարքավուրումներ, տպիչներ, հեռախոսային կայաններ, լուսանկարչական սարքավորումներ, կենցաղային և հասարակական սննդի սարքավորումներ, բժշկական սարքավորումներ և այլ վարչական սարքավորումներ) ,
- **11.5 մլն դրամ՝** նախագծահետազոտական ծախսերի ֆինանսավորում:

դ) Ազգային անվտանգության ապահովման գծով 2008 թվականի ծախսերը նախատեսվել են **12,554.4 մլն դրամ**, որից «Ազգային անվտանգության ապահովում» ծրագրով՝ **11,474.1 մլն դրամ**, իսկ «Պետական պահպանության ապահովում» ծրագրով՝ **1,080.3 մլն դրամ**.

1. «Ազգային անվտանգության ապահովում» ծրագրով 2008 թվականին նախատեսվում է՝ **11,474.1 մլն դրամ**, որից՝ **8,649.7 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **2,824.4 մլն դրամը**՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Մասնավորապես.

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2008 թվականին ծրագրավորվել են **3,900.0 մլն դրամի** չափով: Հաշվարկը կատարվել է ՀՀ վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի N 226, 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 762 և ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 12-ի N 242 որոշումներով սահմանված պաշտոնային դրույքաչափերին ու զինծառայողների թվակազմին համապատասխան:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **454.3 մլն դրամի** չափով՝ ազգային անվտանգության ծառայության համակարգի սպաների և ենթասպաների պարենային բավարարման համար:

Սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են **47.6 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **814.4 մլն դրամի** չափով, որը ներառում է էներգետիկ ծառայությունները **356.4 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները **165.4 մլն դրամ**, կապի ծառայությունները **292.6 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 6-ի N 449-Ն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մայիսի 30-ի N 89-Ն որոշումներով և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի N 404-Ն հրամանով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **400.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների համար՝ **150.0 մլն դրամ** և արտասահմանյան գործուղումների համար՝ **250.0 մլն դրամ:** Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման համապատասխան:

Ներկայացուցչական ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **45.0 մլն դրամի** չափով (տարբեր երկրների հատուկ ծառայությունների ղեկավարների և պատվիրակությունների ընդունելության և Հայաստանը խորհրդանշող հուշանվերների ձեռքբերման ծախսեր):

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,985.6 մլն դրամ** չափով: Նախատեսվում է ձեռք բերել գրասենյակային պիտույքներ՝ **170.0 մլն դրամ,** ազգային անվտանգության ծառայության համակարգի ծառայողների համար համազգեստ՝ **514.8 մլն դրամ,** տրանսպորտային նյութեր (բենզին, դիզելային վառելիք, յուղեր)՝ **695.6 մլն դրամ,** կենցաղային և հանրային սննդի նյութեր (ազգային անվտանգության ծառայության համակարգի պարտադիր զինծառայողների համար սննդամթերք)՝ **536.1 մլն դրամ** և հատուկ նպատակային այլ նյութեր՝ **69.1 մլն դրամ**:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **33.4 մլն դրամի** չափով: Նշված գումարներն ուղղվելու են ազգային անվտանգության ծառայության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու հետ կապված նպաստների վճարմանը: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Հարկեր, պարտադիր վճարներ և տուրքերը հաշվարկվել են **10.3 մլն դրամ,** որն նախատեսվում է ուղղել ազգային անվտանգության ծառայության համակարգի ազատ վարձու աշխատողների աշխատավարձից եկամտահարկի վճարմանը: Հաշվարկը կատարվել է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Այլ ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **959.1 մլն դրամ** գումարի չափով, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2008 թվականին նախատեսվել են **2,824.4 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **674.0 մլն դրամ**՝ Հայաստանի սահմանում համապատասխան շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը,
- **253.0 մլն դրամ**՝ «Սարչապետի» սահմանապահ ուղեկալի շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը,
- **253.0 մլն դրամ**՝ «Ջիլիզայի» սահմանապահ ուղեկալի շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը,
- **60.0 մլն դրամ**՝ «Բուրդաձոր» սահմանապահ ուղեկալի բարեկարգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **60.0 մլն դրամ**՝ «Ախքյորփի» սահմանապահ ուղեկալի բարեկարգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **656.4 մլն դրամ**՝ ազգային անվտանգության ծառայության համակարգի մի շարք շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **792.5 մլն դրամ**՝ կապիտալ ակտիվների (մարդատար և բեռնատար ավտոմեքենաների, կահույքի, համակարգչային սարքավուրումների, հասարակական սննդի և այլ սարքավորումների) ձեռքբերմանը,
- **75.5 մլն դրամ**՝ նախագծահետազոտական ծախսերի ֆինանսավորմանը:

2. «Պետական պահպանության ապահովում» ծրագրով 2008 թվականին նախատեսվում է **1,080.3 մլն դրամ**, որից՝ **1,004.0 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **76.3 մլն դրամը**՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Մասնավորապես.

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2008 թվականին ծրագրավորվել են **550.8 մլն դրամի** չափով: Հաշվարկը կատարվել է ՀՀ վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի N 226 և 2000 թվականի նոյեմբերի 16-ի N 762 որոշումներով սահմանված պաշտոնային դրույքաչափերին ու զինծառայողների թվակազմին համապատասխան:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **58.8 մլն դրամի** չափով՝ պետական պահպանության ծառայության համակարգի սպաների և ենթասպաների պարենային բավարարման համար:

Սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են **6.7 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **38.4 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները **21.7 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները **3.5 մլն դրամ**, կապի ծառայությունները **13.2 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 6-ի N 449-Ն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մայիսի 30-ի N 89-Ն որոշումներով և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի N 404-Ն հրամանով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **95.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների համար՝ **20.0 մլն դրամ** և արտասահմանյան գործուղումների համար՝ **75.0 մլն դրամ:** Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման համապատասխան:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **30 մլն դրամ** գումարի չափով, որն ուղղվելու է պետական պահպանության ծառայության համակարգի մարդատար և բեռնատար ավտոմեքենաների, ինչպես նաև այլ սարքավորումների նորոգման և պահպանման ծախսերի ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **166.2 մլն դրամ** չափով: Նշված գումարի չափով նախատեսվում է ձեռք բերել գրասենյակային պիտույքներ՝ **5.3 մլն դրամ,** պետական պահպանության ծառայության համակարգի զինծառա-յողների համար համազգեստ՝ **30.4 մլն դրամ,** տրանսպորտային նյութեր (բենզին, դիզելային վառելիք, յուղեր)՝ **119.8 մլն դրամ,** և հատուկ նպատակային այլ նյութեր՝ **10.7 մլն դրամ**:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **18.1 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել պետական պահպանության ծառայության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու հետ կապված նպաստների վճարմանը: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Այլ ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **40.0 մլն դրամ** գումարի չափով, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **76.3 մլն դրամի** չափով, մասնավորապես.

- **35.0 մլն դրամ՝** վարչական սարքավորումների (մարզադահլիճի կահավորման համար գույքի) ձեռքբերում,

- **41.3 մլն դրամ**՝ այլ մեքենաներ և սարքավորումների (տարբեր տեսակի ռադիոկայաններ, մետաղորսիչներ և տնտեսական նշանակության սարքեր) ձեռքբերում:

ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքներին պետական բյուջեից անհատույց և անվերադարձ հատկացումներ կարող են նախատեսվել ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաների, սուբվենցիաների և պետական բյուջեի եկամուտներից մասհանումների տեսքով:

1. Ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաներ.

1.1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում բերված դրույթը սահմանում է (համանման սահմանմամբ դրույթ բերված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում), որ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) հաշվարկվում է հիմք ընդունելով տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս քան չորս տոկոսը: 2008 թվականի համար նախորդող երկրորդ բյուջետային տարին՝ 2006 թվականի բյուջետային տարին է, հետևաբար ըստ վերոհիշյալ օրենքների վերը նշված պահանջի՝ 2008 թվականին համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի ՀՀ 2006 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի՝ 533.4 մլրդ դրամի 4%-ը կազմող 21,336.0 մլն դրամից, որը և նախատեսվել է ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում: Համայնքներին 2008 թվականին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ համայնքներին տրվող վերը նշված փոխհատուցումները) գերազանցում է ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով հաստատված և տարեկան համապատասխան ցուցանիշը՝ 3,355.6 մլն դրամով կամ 18.7%-ով, իսկ 2006 թվականի փաստացի մակարդակը՝ 6,668.0 մլն դրամով կամ 45.5 %-ով:

2008 թվականին համայնքներին տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվում է ուղղել.

- ֆինանսական համահարթեցման դոտացիաների տրամադրմանը,

- այլ դոտացիաների տրամադրմանը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների կիրառման արդյունքում համայնքների 2006 թվականի բյուջեների եկամուտների կորուստները փոխհատուցելու և առանձին համայնքներին պետական աջակցություն տրամադրելու համար):

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեվում է ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրել ընդհանուր գումարով 21,065.0 մլն դրամի դոտացիաներ: Նշված դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների նախատեված է իրականացնել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան, մասնավորապես.

ա) 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքի բյուջեին ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից առաջարկվում է ֆինանսական համահարթեցման դոտացիայի տեսքով տրամադրել 2.0 մլն դրամ

բ) մյուս համայնքներին (բացառությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշենի համայնքի) հասանելիք դոտացիաները հաշվարկվել են «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված «ա» և «բ» գործոններով: Նշված գործոններով բաշխվող ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի 53.2 %-ը առանձնացվել է «ա» գործոնով, իսկ 46.8 %-ը՝ «բ» գործոնով դոտացիաների տրամադրման համար (2007 թվականի համապատասխանաբար 48.6 %-ի և 51.4 %-ի դիմաց): Ընդ որում, «ա» գործոնով դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվել են ըստ յուրաքանչյուր համայնքի հաշվարկված հողի հարկի և գույքահարկի 2006 թվականի հաշվարկային ընդհանուր գումարները. այն է՝ 2006 թվականին համայնքների բյուջեներ այդ հարկերի հարկատուների կողմից վճարման ենթակա գումարները, որոնք

- պակասեցվել են 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ այդ հարկերի գծով առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև 2006 թվականին հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների չափով,

- ավելացվել են համայնքների ավագանիների որոշումներով (ավագանիներին օրենքով տրված իրավասության սահմաններում) գույքահարկի գծով տրված արտոնությունների գումարների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցման ենթակա գումարների չափով:

Հարկ է նշել, որ ընթացքի մեջ է ՀՀ հարկային պետական մարմինների կողմից ֆիզիկական անձանց գույքահարկի հաշվարկների ավտոմատացված համակարգի հանձնումը համայնքներին: Այդ կապակցությամբ այն համայնքների գծով, որոնց տեղական ինքնակառավարման մարմինները 2007 թվականի հունիսի 1-ի դրությամբ փաստացի իրականացնում են գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գործառույթներ, 2008 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվել են այդ համայնքների ղեկավարների կողմից տրամադրված գույքահարկի գծով ելակետային տվյալները:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշենի գյուղական համայնքի համապատասխան ցուցանիշները հայտնի պատճառներով չեն կարող կիրառվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների բաշխման հաշվարկներում, նշված համայնքի ղեկավարի աշխատակազմի 2008 թվականի պահպանման ծախսերի գծով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին առանձին տողով նախատեսվել են շուրջ 4.1 մլն դրամի չափով հատկացումներ:

1.2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքներով համայնքների եկամուտների նվազեցման հետևանքով համայնքների բյուջեներում առաջացող եկամուտների կորուստների գումարները ենթակա են փոխհատուցման պետության կողմից: 2006 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքը, որը օրենսդրական հիմքերի վրա դրեց համայնքի բյուջեի եկամուտների կորուստների չափերի և դրանց փոխհատուցման գումարների հաշվարկման գործընթացը: Վերը նշված օրենքի պահանջներին համապատասխան կիրառելով ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունից, տեղական ինքնակառավարման մարմիններից (իրենց իրավասության շրջանակներում) կատարվել են համայնքների 2006 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա գումարների հաշվարկներ: Արդյունքում, համայնքների 2006 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը կազմել է շուրջ 271.0 մլն դրամ, որն էլ նախատեսվել է ՀՀ Ազգային ժողով ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 2 հավելվածում:

Հարկ է նշել, որ տեղական ինքնակառավարման մարմինները մինչ օրս ճշգրտում են իրենց համայնքների գծով տրամադրված ելակետային տվյալները, հետևապես, ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծի նախնական տարբերակում համայնքների 2006 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարները և ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների ըստ առանձին համայնքների ներկայացված բաշխումը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակի ձևավորման ժամանակ կարող է ենթարկվել փոփոխության:

2. Սուբվենցիաներ.

2.1. ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծով համայնքներին նախատեսվել են սուբվենցիաների հատկացումներ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ 2008 թվականին պետական բյուջեից բնապահպանական սուբվենցիաներ ստացող համայնքների ցանկի որոշման և նրանց տրամադրվելիք նշված սուբվենցիաների գումարների չափերի հաշվարկման հիմքում դրվել են.

- համայնքների կողմից ներկայացված ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված 2008 թվականի համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերը,

- «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան ընկերությունների կողմից 2004-2006 թվականներին պետական բյուջե փաստացի վճարված բնապահպանական վճարների գումարները,

- այդ վճարների գումարների՝ ըստ այդ ընկերությունների գործունեությունից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների բաշխման համամասնությունները (սահմանված են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից),

- այդ վճարների գումարներից 2005-2006 թվականներին այդ համայնքներին արդեն իսկ տրամադրված բնապահպանական սուբվենցիաների գումարները:

Մասնավորապես, ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են ընդհանուր գումարով 116.4 մլն դրամի չափով բնապահպանական սուբվենցիաների հատկացումներ, որից

ա) *«Արմենիան Քափր Փրոգրամ» ՓԲԸ-* ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքային համայնքի գծով՝ 68.2 մլն դրամ, իսկ նույն մարզի Աքոր, Հաղպատ և Օձուն գյուղական համայնքների գծով՝ համապատասխանաբար՝ 16.1, 8.6 և 8.8 մլն դրամ,

բ) *«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի* գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքային համայնքի գծով՝ 14.74 մլն դրամ:

Այլ համայնքների գծով վերը նշված օրենքի պահանջներին համապատասխան բնապահպանական սուբվենցիաների տրամադրում ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով չի նախատեսված, նրանց կողմից բյուջետային օրենսդրությամբ սահմանված 2008 թվականի համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերի չներկայացման, ինչպես նաև «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված որոշ ընկերություններից ՀՀ 2004-2006 թվականների պետական բյուջեներում բնապահպանական վճարների գծով փաստացի մուտքերի բացակայության պատճառով:

2.2. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրերի շրջանակում նշված մարզերի որոշ համայնքներին նախատեսվել է շուրջ 43.6 մլրդ դրամ ընդհանուր գումարով սուբվենցիաներ:

3. Մասհանումներ պետական բյուջեի եկամուտներից.

ՀՀ 2008 թվականին պետական բյուջեից եկամտահարկի և շահութահարկի գծով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով սահմանված մասհանումների իրակա-

նացում ՀՀ համայնքների բյուջեներին չի նախատեսված՝ հաշվի առնելով համայնքների միջև այդ հարկերի անհամամասնորեն ձևավորումը, պայմանավորված հանրապետությունում տնտեսաարտադրական կարողությունների ու ազգաբնակչության, ըստ համայնքների, տարիներ ի վեր ձևավորվող խիստ անհամաչափ տեղաբաշխման հանգամանքներով: Նման պայմաններում մասհանումների համակարգը միտված կլինի սակավաթիվ, հիմնականում Երևան քաղաքի՝ համայնքների ֆինանսական բազայի ամրապնդմանը՝ էլ ավելի մեծացնելով համայնքների միջև առկա ֆինանսական անհավասարության աստիճանը:

Էականորեն կդժվարացնի և անարդյունավետ կդարձնի մասհանումների գործընթացը հարկ վճարողի եկամուտների ձևավորման վայրի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու անհնարինությունը, քանի որ շատ դեպքերում հարկ վճարողի գրանցման վայրը չի համընկնում հարկ վճարողի գործունեության իրականացման վայրերի հետ: Հարկ է նշել, որ դեռևս 1998-1999 թվականներին օրենքի պահանջի համապատասխան համայնքների բյուջեներին կատարվում էին եկամտահարկի գումարների մասհանումներ: Սակայն վերը նշված հիմնախնդիրների առկայությունը ցույց տվեց մասհանումների իրականացման բացարձակ անարդյունավետությունը, որից ելնելով էլ օրենքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն՝ համայնքների բյուջեներին եկամտահարկից մասհանումների կատարումը 2000 թվականից դադարեցվեց:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև համայնքների բյուջեներին շահութահարկի ու եկամտահարկի գումարներից մասհանումների գործընթացն ի սկզբանե չվարկաբեկելու նկատառումով, գտնում ենք, որ մասհանումների կատարման հարցին նպատակահարմար է անդրադառնալ վերը նշված հիմնախնդիրների կարգավորման հստակ մեխանիզմների մշակումից հետո:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծավալը նախատեսված է 20.6 **մլն դրամ** (ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի **2.5 %-ը**):

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են նաև հատկացումներ նյութական ռեսուրսների պետական պահուստի պահպանման և ձևավորման, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության պետական ռեզերվների գործակալության համակարգի ստորաբաժանումների պահպանման համար, համապատասխանաբար 98.3 **մլն դրամի** և 62.0 **մլն դրամի** չափով:

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ

2008 թվականից կիրառության մեջ դրվելիք ՊՖԿ (GFS)-2001 նոր դասակարգման պահանջներին համապատասխան ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ոչ ֆինանսական ակտիվների օտարումից բյուջետային մուտքերը (ըստ հին դասակարգման նրանք անվանվում են կապիտալի գործառնություններից եկամուտներ), ի տարբերություն ներկայիս կիրառվող ՊՖԿ (GFS)-1986 հին դասակարգման պահանջների, չեն դասակարգվում որպես բյուջետային եկամուտներ և արտացոլվում են բյուջեի ծախսային մասում՝ բացասական նշանով: Մասնավորապես, ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով ոչ ֆինանսական ակտիվների օտարումից բյուջետային մուտքերը ծրագրվել են 8.0 մլրդ դրամի չափով, որը 11.8 մլրդ դրամով և 8.0 մլրդ դրամով պակաս է համապատասխանաբար 2007 թվականի հաստատված և 2006 թվականի փաստացի ձևավորված համապատասխան ցուցանիշներից: 2008 թվականի համար ոչ ֆինանսական ակտիվների օտարումից բյուջետային մուտքերն ակնկալվում է ստանալ Երևան քաղաքում տեղաբաշխված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից:

ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի գումարը ծրագրավորվում է 76.0 մլրդ դրամի չափով: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել ներքին աղբյորների զուտ մուտքերի հաշվին՝ 46.5 մլրդ դրամի և արտաքին աղբյուրների զուտ մուտքերի հաշվին՝ 29.5 մլրդ դրամի չափով:

Զուտ մուտքերը՝ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցների մուտքերի ընդհանուր գումարի և փոխառու միջոցների տրամադրման կամ մարման ընդհանուր գումարի տարբերությունն է:

Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են ներքին և արտաքին աղբյուրներից փոխառու միջոցների և ֆինանսական ակտիվների տեսքով ներրգրավվող միջոցների:

Փոխառու միջոցների ներգրավումը իրականացվում է պետական արժեթղթերի թողարկման և վարկերի ու փոխատվությունների ստացման եղանակով (որոնք հետևապես հետագայում ենթակա են մարման): Ֆինանսական ակտիվներից միջոցների ներգրավումը իրականացվում է արդեն ձեռք բերված՝ սեփականության իրավունքով պետությանը պատկանող բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության, ինչպես նաև պետական բյուջեից տնտեսվարող և այլ սուբյեկտներին տրամադրված վարկերի և փոխատվությունների դիմաց այդ սուբյեկտներից ձեռք բերված պարտավորությունների իրացման եղանակով:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվորում է 24.6 մլրդ դրամի չափով, ընդ որում այդ գումարը ամբողջությամբ նախատեսվում է ներգրավել պետական արժեթղթերի թողարկումից: Ֆինանսական ակտիվների գծով՝ առևտրային

կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցման (սեփականաշնորհման) շնորհիվ և պետական բյուջեի 2008 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորմանը ծրագրավորվում է ուղղել համապատասխանաբար 13.4 մլրդ դրամի և 10.4 մլրդ դրամի չափով մուտքեր: Միաժամանակ, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Կոջեմա Լոջիստիկս» ֆրանսիական կազմակերպության միջև 2005 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու նպատակով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման համար նախատեսվում է պետական ներդրում կատարել ընկերության կանոնադրական կապիտալում ավելացնելով վերջինիս չափը, դրանով իսկ մեծացնելով ընկերությունում պետական բաժնեմասի արժեքը: Ինչ վերաբերում է դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող տնտեսվարող և այլ սուբյեկտներին բյուջետային վարկերի և փոխատվությունների գծով զուտ մուտքերին, ապա այդ ներկայացված է սույն բացատրագրի «Բյուջետային վարկեր» բաժնում:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին աղբյուներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է 54.0 մլրդ դրամի չափով, ընդ որում այդ գումարը ամբողջությամբ նախատեսվում է ներգրավել միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից արտոնյալ վարկերի (որոնցից գերակշռող մասն ունի հստակ ծրագրային ուղղվածություն) ստացման և մինչ այդ արդեն ստացված վարկերի, ըստ վարկային պայմանագրերով նախատեսված ժամկետների, մարման եղանակով (նշված զուտ մուտքերի վերաբերյալ մանրամասն համապատասխան տեղեկատվությունը բերված է սույն բացատրագրի N 1 հավելվածում, NN 16-19 աղյուսակներում և «ՀՀ պետական պարտքը» բաժնում):

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով զուտ վարկավորման ընդհանուր ծավալը ծրագրավորված է 26.6 մլրդ դրամի չափով: Նշված գումարն իրենից ներկայացնում է ՀՀ պետական բյուջեից տրամադրվելիք բյուջետային վարկերի ընդհանուր գումարի և նախկինում տրամադրված բյուջետային վարկերի մարումներից ստացվելիք մուտքերի ընդհանուր գումարի տարբերությունը:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից տրամադրվելիք վարկերի ընդհանուր գումարը նախատեսվում է սահմանել 27.3 մլրդ դրամի չափով: Մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության կողմից ցուցաբերվող արտաքին տնտեսական աջակցության շրջանակներում բյուջետային վարկեր տրամադրելու համար առանձնացվել են 24.5 մլրդ դրամի չափով հատկացումներ՝ դրանք ամբողջությամբ ԼՂՀ-ին բյուջետային վարկի տրամադրմանն ուղղելու նպատակով,
- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի կողմից իրականացվող գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի շրջանակներում տնտեսվարող սուբյեկտներին

աջակցություն ցուցաբերելու,Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ջեռուցման, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վերականգնվող էներգետիկայի զարգացման համար ՀՀ պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միջոցով նախատեսվում է տրամադրել շուրջ 2,4 մլրդ դրամ բյուջետային վարկեր,

- «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան բռնադատված քաղաքացիներին կամ նրանց առաջին հերթի ժառանգներին բնակարանային պայմանների բարելավման նպատակով երկարաժամկետ արտոնյալ վարկեր տրամադրելու համար նախատեսվել են 150.0 մլն դրամի չափով հատկացումներ:

Դրա հետ մեկտեղ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են մուտքեր Վրաստանից, «Անելիք բանկ» ՍՊԸ-ից, «Հայագրոբանկ» ԲԲԸ-ից, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ից, «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ-ից, ինպես նաև «Կոմպոզիցիոն նյութերի գործարան» ՓԲԸ-ից պետության կողմից նախորդ տարիներին իրենց տրամադրված բյուջետային վարկերի մարումների գծով պետական բյուջե կատարվելիք վճարումների գծով:

Հարկ է նշել, որ 2008 թվականից կիրառության մեջ դրվելիք ՊՖԿ (GFS)-2001 նոր դասակարգման պահանջներին համապատասխան ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով զուտ վարկավորման գծով ելքերը, ի տարբերություն ներկայիս կիրառվող ՊՖԿ (GFS)-1986 հին դասակարգման պահանջների, չեն դասակարգվում որպես ծախսեր և արտացոլվում են բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների կազմում՝ ֆինանսական ակտիվներ բաժնում:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Արտաքին պետական պարտքը

2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 1205.6 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 18.9%-ը:

Արտաքին աղբյուրներից 2007թ. պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված միջոցները ամբողջությամբ ստանալու դեպքում, Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորություններ և տրամադրված արտաքին երաշխիքներ) 2007 թվականի վերջին կկազմի մոտ 1330 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 15.3%-ը:

2007 թվականի ընթացքում արտաքին պարտավորությունների գծով կստացվի մոտ 125 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության պարտավորությունների 112 մլն ԱՄՆ դոլար (այդ թվում 2006թ. պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված, սակայն 2007թ. ստացված Աղքատության Հաղթահարման Օժանդակության երկրորդ վարկային ծրագրի գծով 28.6 մլն ԱՄՆ դոլարի ստացումը) և ԿԲ գծով մոտ 13 մլն ԱՄՆ դոլար, և կկատարվի մոտ 40.5 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում (այդ թվում 16.9 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության պարտավորություն-

ների և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով): 2006 թվականի տարեվերջի համեմատ ՀՀ արտաքին պարտքը կաճի մոտ 124 մլն ԱՄՆ դոլարով[1]:

2007 թվականի ընթացքում արտաքին պետական պարտքի գծով ընդհանուր սպասարկումը կկազմի մոտ 51.1 մլն ԱՄՆ դոլար: Միայն ՀՀ կառավարության գծով (ներառյալ երաշխիքների սպասարկումը) 2007 թվականին այն կկազմի մոտ 26.7 մլն ԱՄՆ դոլար, որից 16.9 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 9.8 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար: ՀՀ կենտրոնական բանկի պարտավորությունների գծով սպասարկումը կկազմի մոտ 24.4 մլն ԱՄՆ դոլար, որից 23.6 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 0.8 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար:

2008 թվականի ընթացքում, ՀՀ ԱՊՊ գծով նախատեսվում է ստանալ մոտ 170.0 մլն ԱՄՆ դոլար՝ այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 157.9 մլն ԱՄՆ դոլար, արտաքին միջոցներ: 2008 թվականի ընթացքում ԱՊՊ գծով նախատեսվում է սպասարկել մոտ 52 մլն ԱՄՆ դոլար՝ 41 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով և մոտ 11 մլն ԱՄՆ դոլար որպես տոկոսավճար, այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով մոտ 14.356 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում և 10.428[3] մլն ԱՄՆ դոլարի տոկոսավճար: Հաշվի առնելով վերը նշվածը, 2008 թվականի վերջին ՀՀ ԱՊՊ կկազմի մոտ 1459 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 14%-ը:

2007-2009 թթ. արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները կգտնվեն նվազ և միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշների սահմաններում:

Ներքին պետական պարտքը

2007թ-ին «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է ապահովել 8,500.0 մլն. դրամ դեֆիցիտի ֆինանսավորում և կատարել 7,809.4 մլն. դրամ սպասարկման ծախս:

2007թ-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ թողարկվել է 30.00 մլրդ. դրամ անվանական արժեքով պարտատոմսեր, որն ամբողջությամբ տեղաբաշխվել է: Պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթը կազմել է 30.66 մլրդ դրամ: Նոր՝ խնայողական պարտատոմսերից սեպտեմբերի 30-ի դրությամբ թողարկվել է 750.0 մլն. դրամ, որից տեղաբաշխվել է 206.13 մլն. դրամը: Այս պարտատոմսերը տեղաբաշխվում են գանձապետական պահառու համակարգի միջոցով: 2007թ-ի ընթացքում կկատարվի մոտ 32.0 մլրդ դրամի մարում և կտրվի մոտ 7.0 մլրդ դրամի սպասարկման ծախս: Տարեվերջին ներքին պետական պարտքի ծավալը անվանական արժեքով կկազմի

---

[1] Տարեկան կտրվածքով ստացումների և մարումների արդյունքում ստացվող պարտքի հաշվարկային գումարի և տեքստում ներկայացված պարտքի գումարի տարբերությունը պայմանավորված է տարեսկզբին և տարեվերջին արժույթների փոխարժեքների (հիմնականում SDR/ ԱՄՆ դոլար և Եվրո/ԱՄՆ դոլար) տարբերություններով.

31.12.06 դրությամբ 1SDR= 1.5044 USD և 1EURO= 1.317 USD

31.12.07 դրությամբ 1SDR= 1.55 USD և 1EURO= 1.4 USD (կանխատեսում)

ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի մեջ SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը կազմում են շուրջ 95%:

3 Սպասարկման կանխատեսումները կատարվել են 1SDR= 1.55 USD և 1EURO= 1.4 USD, ինչպես նաև Libor-ի միջին տարեկան տոկոսադրույքը մոտ 6%

մոտ 66.4 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ 2006թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքի ծավալը անվանական արժեքով կազմել էր 70.7 մլրդ. դրամ, որից ԿԲ 12.7 մլրդ. դրամ: Պարտքի ժամկետայնությունը 2007թ-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 1312 օր (2006թ-ի դեկտեմբերի 30-ի դրությամբ նույն ցուցանիշը եղել է 1349 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 7.05% (2006թ-ի տարեվերջին նույն ցուցանիշը եղել է 7.08%):

2007թ-ի համար նախատեսված սպասարկման ծախսերի տնտեսումը պայմանավորված է ԿԲ վերակապիտալիզացիայի նպատակով ԿԲ-ին տրամադրված 12.7 մլրդ. դրամ պարտատոմսերի փոխարինմամբ անտոկոս մուրհակներով, ինչպես նաև այդ նպատակով ծրագրված չափով պարտատոմսերի չտրամադրմամբ, որի դիմաց ծրագրվել էր վճարել մոտ 700.0 մլն. դրամ տոկոսավճար: Բացի այդ, նախատեսվել էր 2007թ-ի ընթացքում սպասարկել նոր խնայողական պարտատոմսերը 100.0 մլն. դրամի չափով, որի փաստացի ցուցանիշը կկազմի մոտ 8.6 մլն. դրամ:

2007թ-ի ընթացքում բոլոր ամիսներին ներքին պարտքի կառավարման ռազմավարական խնդիրների լուծման նպատակով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը իրականացրել է հետգնումներ՝ 9 ամսվա կտրվածքով մոտ 9.3 մլրդ. դրամ ծավալով: Դրանով առաջին հերթին նպատակ է հետապնդվում ազատվել թանկ պարտքի սպասարկումից (որոնց եկամտաբերությունը բարձր էր ամբողջ ներքին պարտքի եկամտաբերությունից), և բացի այդ, մյուս տարի նախապատրաստվել նոր՝ ուղենիշային պարտատոմսերի թողարկմանը: Միաժամանակ նշենք, որ մարման բեռի թեթևացման պայմաններում հետգնման պարբերական բնույթը զգալիորեն նպաստում է ինչպես պարտատոմսերի իրացվելիության աճին, այնպես էլ նոր երկարաժամկետ պարտատոմսերի լավագույն պայմաններով տեղաբաշխմանը: 2007թ-ին կառավարությանը հաջողվեց տարեսկզբին հրապարակված երկարաժամկետ պարտատոմսերի թողարկման ծրագրի համաձայն տեղաբաշխել 8, 7 և 8 տարի մարման ժամկետայնությամբ երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր՝ 4.5 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որի նկատմամբ պահանջարկը եղել է եռակի՝ 17.2 մլրդ դրամ: Ներքին պարտքի շրջանառող ծավալում միջին ժամկետայնության և երկարաժամկետ պարտատոմսերի տեսակարար կշիռը էականորեն աճել է և տարեվերջին կկազմի մոտ 90%:

2008թ-ից ՀՀ կառավարությունն անցնում է նոր ռազմավարության պետական պարտատոմսերի շուկայում. պարտատոմսերի թողարկումների ծավալները զգալիորեն մեծացվելու են՝ ի հաշիվ դրանց քանակի կրճատման: Նոր՝ ուղենիշային պարտատոմսերը տեղաբաշխվելու են մաս-մաս, պարբերական վերաբացումների միջոցով: Նոր ռազմավարության նպատակն է պետական պարտատոմսերի իրացվելիության բարձրացումը, գրավչության աճը, երկրորդային շուկայի ակտիվացումը: Այս նպատակի իրագործման շրջանակներում ենթադրվում է պետական պարտատոմսերի գծով պետական բյուջեում նախատեսել 7,460.0 մլն. դրամ սպասարկման ծախս, ապահովելով 25,000.0 մլն. դրամ դեֆիցիտի ֆինանսավորում: 2008թ-ի վերջին ներքին պետական պարտքի ծավալը անվանական արժեքով կկազմի 90.0-92.0 մլրդ դրամ, միջին ժամկետայնությունը՝ մոտ 4.0 տարի: Միջին եկամտաբերությունը 2008թ-ի վերջին ընթացիկ տարվա համեմատ հնարավոր է աճի՝ պայմանավորված երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխմամբ և

շրջանառությունում դրանց տեսակարար կշռի ավելացմամբ (ծրագրվում է տեղաբաշխել 20 տարի ժամկետայնությամբ պարտատոմսեր): Տոկոսադրույքների աճը պայմանավորող հաջորդ գործոնը կարող է լինել 2007թ-ից 2008թ-ին փոխանցվող ՀՀ ԿԲ պարտատոմսերի մեծ պորտֆելը և ԿԲ կողմից շուկային հաղորդած տոկոսադրույքների աճի ազդակները:

Ծրագրային բյուջետավորման բնագավառում ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները

2001 թվականից սկսած՝ ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել նախապատրաստական աշխատանքներ կատարելու բյուջետավորման՝ մուտքերի (ծառայությունների մատուցման համար օգտագործվող ռեսուրսներ) վրա հիմնված եղանակից արդյունքների վրա հիմնված եղանակին աստիճանական անցման նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծման համար: Արդյունքում, ՀՀ 2002 - 2004 թվականների պետական բյուջեների կազմում (2003 թ.՝ ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում, իսկ 2002 և 2004 թթ.՝ ՀՀ կառավարության այդ տարիների բյուջետային ուղերձներում) ներառվել են սոցիալական ոլորտներում (կրթություն, առողջապահություն և սոցիալական ապահովություն) այդ տարիների պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելիք ծախսային ծրագրերի ակնկալվող արդյունքների ցուցանիշները:

2003 թվականին մշակվել է ծրագրային բյուջետավորման բարեփոխման գործողությունների ծրագիր: Այս գործողությունների ծրագիրը հաշվի է առնում այն փաստը, որ ծախսային ծրագրի արդյունավետ կառուցվածքը հիմք է հանդիսանում հաջող ծրագրային բյուջետավորման և քաղաքականության ու բյուջեների միջև կապի համար:

Համաձայն այս գործողությունների ծրագրի՝ պահանջվում է, որ բոլոր պետական մարմիններ-ը վերափոխեն իրենց ծրագրերն այնպիսի սկզբունքներով, որի արդյունքում ունենան ծառայությունների օգտակար համախմբում: Դրա նպատակն է ՀՀ կառավարությանն ավելի արդյունավետ տեղեկատվություն ներկայացնել այն ծառայությունների կամ ուղղակի արդյունքների վերաբերյալ, որոնք տրամադրվելու են բյուջետային գումարների դիմաց: Ծրագրերի վերափոխումով և դրանց ֆինանսական գնահատականը տալով ըստ ծառայությունների՝ ՀՀ կառավարությունն ավելի լավ տեղեկատվություն կունենա մատուցվող ծառայությունների արժեքի վերաբերյալ: Սա կօգնի ՀՀ կառավարությանը, որպեսզի այն ավելի լավ հասկանա ծառայությունների մատուցման համար կատարվող ծախսային որոշումների հնարավոր հետևանքները և այդպիսով, կօգնի ռեսուրսներն ուղղել այն ոլորտներին և միջոցառումներին, որոնք լավագույնս կնպաստեն ՀՀ կառավարության նպատակների իրականացմանը: Այսպիսով, այս տեղեկատվությունը շատ կարևոր է, որպեսզի ուժեղանա քաղաքականության և բյուջեների միջև կապը Հայաստանում: Դրա հետ մեկտեղ հաշվի առնելով որ ներկայումս իրականացվում է ԱՀՌԾ գործընթացը, ավելացել են քաղաքական պահանջները՝ կառավարության միջոցառումների, ձեռքբերված արդյունքների և հաշվետվողականության միջև կապերի թափանցիկության առումով:

Այս մոտեցումը 2003-2004 թթ. փորձնականորեն կիրառվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (ԱՍՀՆ)՝ ըստ գործողությունների ծրագրի պահանջների, իսկ սկսած 2004 թվականից, այն կիրառվում է նաև երեք այլ նախարարություններում. ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություններում: Համաձայն գործողությունների ծրագրի, ՀՀ ԱՍՀՆ ծրագրերի նոր կառուցվածքը հրատարակվել է ՀՀ 2005-2007թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում և ներառվել է ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի մասին օրենքում, իսկ վերոնշյալ երեք նախարարությունների նոր կառուցվածքը՝ ՀՀ 2006-2008, 2007-2009թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում և ՀՀ 2006 և 2007թվականների պետական բյուջեներում ու ՀՀ 2008թ. պետական բյուջեի նախագծում: Ըստ որում 2008 թ. զգալիորեն ընդլայնվել է նշված գործընթացում ընդգրկված պետական կառավարման մարմինների թիվը ընդհանուր առմամբ հասնելով 14-ի: Բացի վերը նշվածներից ավելացել են նաև ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ բնապահպանության, ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման, ՀՀ էներգետիկայի նախարարությունները, Գեղարքունիքի և Տավուշի մարզպետարանները ու ՀՀ կառավարությանն առընթեր սոցիալական ապահովության ծառայությունը:

Պետական բյուջեի նախագծի բաղկացուցիչ մաս հանդիսացող ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի կազմում ներառվել են նաև նշված գերատեսչական մակարդակով իրականացվող ծրագրերի կատարողական չափորոշիչները (արդյունքները): Ներկայումս դիտարկվում է դրանց՝ յուրաքանչյուր գերատեսչության գծով առանձին փասթաթղթի տեսքով մշակման գործառույթի արմատավորման հարցը, որը նշանակված է լինելու հանրությանը (ներառյալ Ազգային ժողովը, կառավարությունը, հանրապետության հանրությանը, արտաքին աշխարհը) մանրամասնորեն ներկայացնելու գերատեսչության ռազմավարական նպատակները և դրանց շրջանակներում նախատեսվող ծրագրերի իրականացման կատարողական չափորոշիչները (արդյունքները):

Նշված աշխատանքների առավել արդյունավետ կատարումը կազմակերպելու նպատակով ՀՀ կառավարությունը համագործակցում է Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարության օժանդակությամբ 2002 թվականից հրավիրված փորձագետների հետ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ուսուցման կենտրոնում իրականացվող դասընթացների միջոցով պետական կառավարման մարմինների աշխատակիցների շրջանում տարածում է բյուջետավորման նոր եղանակների կիրառման գիտելիքները:

Ներկայումս, առաջին չորս փորձնական նախարարությունները եռամսյակային կտրվածքով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն են ներկայացնում նաև ոչ ֆինանսական ցուցանիշների գծով մոնիտորինգային հաշվետվություններ:

Առաջիկայում ՀՀ կառավարության կողմից նախատեսվում է ՕԲ ծրագրային բարեփոխումների ուղղությամբ աշխատանքները հիմնականում իրականացնել բյուջեի պլանավորման բնագավառում աշխատանքների իրականացման առաջադիմական նոր մշակույթի զարգացմամբ:

Մասնավորապես, նախատեսվում է զգալիորեն բարելավել ԾԲ բարեփոխումներին մասնակից նախարարությունների կողմից տրամադրվող բյուջետային տեղեկատվության որակը՝ առավել ուշադրություն դարձնելով ծրագրերի ձևակերպմանը ու նախատեսվող արդյունքների նկարագրմանը և ցուցանիշների մշակմանը:

Ներկայիս ու նախատեսված առաջընթացը թույլ կտա ԾԲ բարեփոխումների գործընթացին աստիճանաբար ներգրավել բյուջետային գործընթացի մասնակից բոլոր պետական և տարածքային կառավարման մարմիններին:

Միաժամանակ կշարունակվեն աշխատանքները մոնիտորինգի և հաշվետվողականության բնագավառում համակարգի զարգացման ուղղությամբ: